









Григорий

4. 0 B S U L

891.99

U-54

Digitized by srujanika@gmail.com

## L a b o u r 8

ԱԼԱԶԱՆԻ

#### ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄՔ ՑԵՎ ՍՈՍՉԱԲԱՆՈՎ

卷之三



ՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱԿՄԱՆ ՀԱՐՑՈՒՄ

ՅԵՐԵՎԱՆ Խ 1 9 8 6

Պատ. խմբ. Ալազան  
Կազմը յեկ Փորձացը Դանչոյի  
Տեխ խմբ. Տ. Խաչվանէյան  
Սրբագրիչ. Հ. Մանուկյան



---


Պետհրատի տպարան, Ա Գնունի Հ 4  
Քլավ. լիազոր վ.՝ 279, պատ. 1160, Հրատ. 3478, տիրաժ 2000

Հանձնված ե արտադրության հոկտ. 10 1935 թ.

Ստորագրված ե տպելու մարտի 10 1936 թ.

Ա. Լ. Ա. Զ. Ա. Դ.

Կ. ՍԻՏՈՎԸ ՅԵՎ ՊՈԵԶԻԱՆ



## I

Պըոլնտարական գրականության պահանջմանի ակադեմիա, Ալեքսեյ Մաքսիմովիչ Գորկին, խորհրդային գրողների համամիութենական առաջին համադումարում խոսելով Արևմտյան Յելբուազի դրականության և գրողների մասին արձանադրեց - «Յելբուայում բութուազիան և կառավարությունը որեցոր ավելի ու ավելի թշնամաբար և վերաբերվում գեղի աղնիվ գրով»։ Այդ միանգամայն ճիշտ և : Հոկտեմբերյան հեղափոխության առաջին խոկ որից մինչև սոցիալիզմի հաղթական արշավի այս փառահեղ որերը, յելբուական և ամերիկյան մտավորականության և առաջին հերթին գրողների բազմաթիվ առաջավոր ներկայացուցիչներ անցել և անցնում են Հոկտեմբերյան հեղափոխության, սոցիալիստական կարգերի պահանջման գրոշի տակ։ Բավական և հեշտամել մի շարք անուններ։ Ահա Անրի Բարբյուսը, Վորն իմպերիալիզմի, Փաշվոմի դեմ պայքարի առաջին դիրքերումն ե կանգնած, խոկ «Ռոմեն Ռուանը, Անդրե Ֆիդը ամենաորինական իրավունքն ունեն «Հոգիների ճարտարապետներ» անվանելու իրենց։ Ժան Ռիշար Բլոկը, Անդրե Մայուսոն, Պլիվյեն, Արագոնը, Տուլերը, Բեխերը, Նեկուն - չեմ թվի բոլորին, բայց այդ բոլորը բացառապես տաղանդավոր մարդկանց պայծառ անուններն են և այդ ամենքը իրենց յերկրների բութուազիայի ամենախիստ դատավորներն են, այդ ամենը մարդկեր են, վոր գիտեն տաել, բայց և զիտեն սիրել» (Մ. Գորկի)։

Նրանք գիտեն բուռն կրքով ատել Փաշիստների կացնի, միջնադարյան ինկվիզիցիայի ու խարույկների բարբարոս կու-

տուրան, նրանք դիտեն ատել համակենտրոնացման ֆաշիստական ճամբարներում թաղավորող քստմնելի խոշտանդումները, նրանք դիտեն ատել համաշխարհային նոր ու առաելի սպանդ հրահրող ներին ու կազմակերպողներին: Բայց և նրանք դիտեն սիրել քառան ու վարակիչ սիրով՝ համաշխարհային պրոլետարիատի պահծալի հայրենիքը, նրանք դիտեն սիրել հերոսների ու խեղափների այդ յերջանիկ որպանը, նրանք դիտեն սիրել Արկադիկասի սառուցյներից մինչև Կարակումի առվազուաները մարտնչող իրենց հերոսական յեղբայրներին, նրանք դիտեն սիրել հերոսական կարմիր բանակին և նրա անպարտելի մարտիկներին, վուրոնք յերկաթե վճռականությամբ պահպանում են մեր մեծ հայրենիքի սրբազն հողը:

Նրանք իրենց աչքերի տուղ տեսնում են, վոր դաշտած ֆաշիզմը հրին և հանձնում մարդկային առաջավոր մտքի գոհարները: Նրանք տեսնում են, վոր ֆաշիզմը՝ անմահության որատիանդանից վար և շպրտում մեծանուն Հայնելի արձանը:

Յեթե զրականության և հումանիտար դիմությունների առաջալոր ներկայացուցիչները նողկանքով են խսում Փաշիզի բարբարոսությունների մասին, ապա այդ բարբարոսությունները սրբագրծող զրոյները ջանք են թափում մասսաների մտքերը թունալորել, նրանց համախմբել կապիտալի դիլային ծրագրերի շուրջը; Նրանք, նողկալի այդ զրոյները, փառքանում են հիտ-լերյան կացնային արյունաբրությունը՝ Գերմանիայում, Մինչա-հարումները՝ Ամերիկայում, աշխատավոր մարդկության խոշ-տանգումները և բզիտումները վազջ կապիտալիստական աշխար-հում: Նրանք իրենց զրիչն ի սպաս են զրել մարդկության ամե-նասելի, ամենաբարբարոս ուժերին:

Կասլիտալիստական աշխարհի այլ և այլ մասերում ցըված հայությունը, ինչպես ամեն մի ազգություն, բաղկացած և շահադրծողներից և շահադրծվողներից: Գաղութահայ աշխատավորության շահադրծողներին՝ իրենց կուսակցությունների-դաշնականների, ուսմէալար-աղատականների, հնչակյանների միջոցվ մթազնում ու թունավորում են հայ աշխատավորների գետակցությունը:

Հատկապես հայ բուրժուազիայի մարտական կուսակցությունը,- Փաշխատական դաշնակցությունը միշտ եւ հանդես է յեկել միջազգային ռեակցիայի, հակահեղափոխության ամենասեւ ուժերի տաւաջին շարքերում: Նա առաջիններից մեկն է յերեվում Սորճարյան Միության գեմ պատերազմ նյութող ամեն մի պետության գոների տաւաջ, շարժելով կասլիտալի արյունոտ շան իր հնագանդ պոչը:

Բավական եր, վոր Գերմանիայում հաղթանակեր Հիտլերյան «ցեղարանական» Փաշիզմը, վորպեսզի «աղերքն» իսկույն հրապարակ դային կազմակերպելու իրենց «ցեղակրոնների շարժումը»՝ զիտլերյան «վերջին մոդայով», աքաղաղային «սպարապետ» Նժդեհի զեկալարությամբ:

Հիտլերի և Գյորինդի հետ իրենց ընդհանուր ճակատը սրբազնործելու համար նրանք վոչ մի ջանք չեն ինայում: Ֆաշխատական զիտատառերայի հաստատումից կարձ ժամանակ հետո նըրանք հեվիճեկ հիտլերյան սկսատիկայի հովանու տակ հրապարակ են հանում «Հայերի արիականության» մասին («Armetnirtum - Ariertum») Փաշխատական ժողովածուն: Այդ վիճակածքը, վորն «աշխատասիրել» են դաշնակ «դոկտոր» Արտ. Արեգյանը, քարոզիչ Լիցենցիատ Քլինկերը, դոկտոր Ֆոն Լեեր-սը և այլ «ցեղակրոններ», ունի հետեւյալ նպատակները,- ա) նախապացուցել, վոր հայերը արիական ծաղում ունեն և հետեւարար պետք ե ընթանան հիտլերյան Փաշիզմի դրոշի տակ, բ) ապացուցել, ինչպես դրում է դոկտոր Ֆոն Լեերսը, վոր «Հայ ժողովրդի վաղբերությունը հետեւանք և նրա արիական ծաղմանը», հեղողրերությունը հետեւանք և նրա արիական ծաղմանը», հետեւարար նա այդ «վողբերդության» վրեժը պետք է լուծի արիական, հիտլերյան բանակի շարքերում համախմբմելով: Յերբորդ խիստ կարենոր նպատակը ձեւակերպում և «պրոֆեսոր»

Շեփերն իր «Արևմտյան քաղաքակերթ աշխարհը և հայերը» հոգվածում, Փաշիստ պրոֆեսորն իր կազմից դուրս ե գալիս ապացուցելու համար, վոր Հայ գաղթաշխարհը պետք և պահպանի իրեն. այդ բանն անհրաժեշտ է յերկու պատճառով, 1. վորդովհետև Հայ ժողովրդի պատմությունն ինքնին վկայում ե իր անխախտ կենսունակությունը, 2. վորավհետև հայ ժողովրդի առջև դրված կան դեռ այնպիսի խնդիրներ, վորոնք ապագայում պիտի լուծվեն, յերեւ անգամ նա այդ ամենը այսոր մինչև իսկ չի տեսնում իր աշքերով»:

Ինչպես ընթերցողը տեսնում է՝ Փաշիստ «ողոփեսորը» միանդամայն հստակ կերպով «Հեռանկարներ» և բացում «Հայ ժողովը» առաջ և Հորդոր կարդում պահպանելու Հայ գաղթաշխարհը, վորավիս թնդանոթի ամենաեժան միս, այս անդամ արդեն հիտերյան հակախորհրդային արկածախնդրությունների հագուստ:

Միանդամայն բնական և, վոր գաշնակ-Փաշիստական մոլիցեղաբանությունն իր արտահայտությունը դաներ նաև գաղութահայ գեղարվեստական դրականության մեջ:

Դաշնակ «քնարերգակներից» մինչև «հրապարակախոսները», իմբրագիրներն ու խմբագետները, այդ զանազան կոստյոնները, Ալ. Ահարոնյանները, Լևոն Շանթերը, Կարո Սայահյանները, Նժդեհները, ամեն կերպ ջանում են հիտերյան ցեղաբանության ողնությամբ «աշխուժացնել» իրենց մենադրագիրներնը, ըստ Հնարավորին «կենսունակ» դարձնել այդ նեխող մարմինը: Կոստյոն Զարյանը հին հայդուկներին և վորդեկում, Շանթը՝ Խանասորի արշալանքի տարեկարգին միմուսային եքստաղով, Հակախորհրդային Փաշիստական քարոզներ և կարդում, իսկ զառամյալ Ահարոնյանը դեռ ցնդարանում ե թե՝ «Վոչ մի ազգի հետ չեմ բաղդատեր իմ աղոստ Բարձր և և իմաստուն մեր ցեղը»:

«Ցեղը», ցեղաբանական մոլից քարոզը, անցյալի «վառքերի» «Ցեղը», ցեղաբանական մոլից քարոզը, անցյալի «վառքերի» ամենդում վերհանումը հանդիսանում է դաշնակ-Փաշիստական պրականության որվա կարգախոսը: Նրանց պոետները վորեկությանունքում հանդիսանում են գերեզմաններում ննջած «Հայ ասսետներին», «Հայոց Հեջում են զերեզմաններում ննջած «Հայ ասսետներին», «Հայոց Հեջում են զերեզմաններում ննջած «Գայլ Վահանի Հարդարությունը»:

Դաշնակ- ֆաշիստական «զրականությունը» համաշխարհային ռեալիզիայի ամենասև ուժեղի մարմացումն եւ, հանդիսանում: Այդ «զրականությունը» մեջ հիշեցնում եւ անդունդի յեղին բուռած, արգեն չորսանալուն մոտ այն դեղին սպանդենիները, վորոնէ վերահս մրրիկից արմատահան ու փշրված՝ անդունդ են չըպատճեն:

Այդ մրրիկի հաղթությանն ի խնդիր՝ աշխարհի բոլոր ազնիվ մտավորականների, հեղափոխական զրոյների ու արվեստագետների հետ միասին՝ սլայքարում են զաղութահայ հեղափոխական զրոյների որ-ավուր աճող ու հզորացող ջոկատը:

### III

Մեր յերկրում ծավալվող սոցիալիստական շինարարության բուռն վերելքը մի կողմից և մյուս կողմից կապիտալիստական աշխարհի ծանր ճնաժամը զնալով ավելի ու ավելի յեն խորացնում մտավորականության բեկումը դեպի բանվոր դասակարգի պայքարը, դեպի սոցիալիզմի հայրենիքը:

Գաղութահայ իրականությունն իր մեջ լիովին անդրադարձնում եւ համաշխարհային նշանակություն ունեցող այս յերեսութքը: Յեթէ սրանից մի տասնամյակ առաջ մտավորականության և զրոյների շրջանում համեմատարար սակավաթիվ եյին Խորհրդային Հայաստանի ակտիվ բարեկամներն ու բանվոր դասակարգի զինակիցները, ապա ներկայումս այդպիսիների թիվը չափազանց սովոր ե: Ավելին, ներկայումս մենք ականատես ենք չառ ու չաղքարդ տեղաշարժերի: Առանձին հեղափոխական զրոյների և արվեստագետների փոխարեն այսոր Ամերիկայի Միացյալ Նահանգներում արդեն ստեղծված ե մի կազմակերպություն, վորոնիք մեջ և ընդգրկում այն զրոյներին և արվեստագետներին վորոնք կանգնել են բանվոր դասակարգի պայքարի դիրքուում, հըրապարակ գնելով զեղարվեստական մի շարք աշխատություններ:

Վերջին տարիների ընթացքում, արտսսահմանի այլեւալլ քա. զաքարի տեսան մի շարք հեղափոխական զրոյների դաքարում լույս տեսան մի շարք հեղափոխական զրոյների ուշադրավ ստեղծագործություններ: Բավական եւ հիշատակել կ. Սիսակի «Գիշերեն մինչև լուսարաց» և «Լուսարացի յերեր» կ. Կաբակի «Գիշերեն մինչև այսօնի այլեւալլ և Ամերիկան», վ. Կաբակ- գրքերը, և. Գույումնյանի «Այսպես եւ Ամերիկան»:

յանի «Պողպատե սերմեր» և այլն։ Անդամ Հաւելում, մի յերիտոսարդ (Բարսեղ Հարուքյունյան) հրատարակել և իր պահմաների յողովածուն («Այդաբաց») վորը արվեստի տեսակետից համեմտարար դեռ թույլ գործ լինելով հանգերձ, արտահայտում և հեղափոխական կենսափոխնոր տրամադրություններ։ Բացի այդ, արեմտահայ կոմունիստական մամուլը (զլիալորապես «Բանդիորը») պարբերաբար ապազրում և հեղափոխական, պրոլետարական նորանոր հեղինակների ստեղծագործությունները։

Գաղութահայ հեղափոխական գրողների ընտանիքում առաջնակարդ և պատկանելի տեղ և գրավում չնորհալի բահաստելիք։ Սիսալը, վորն Ամերիկայի հեղափոխական գրողների և արվեստագետների ժիացյալ ճակատի կազմակերպման նախաձեռնություններից և զեկավարներից մեջն և հանգիստում։

Սիսալը (Կարապետ Շահինյան) ծնվել է 1891 թվին, Վանի հայանդի Շատուխ գտավասի Կաճես զյուղում։ 1896 թվին զրկվում և ծնողներից և փոխազդրվում և Վանի տմբերիկան վորանոցը վարուել իր նման 700 վարբերի հետ միասին սահառում և կրոնական, առգյուսելան գասահարական թյուն։ Վորրանոցում, մեր ապագա պոետի վրա մեծ ապազորություն են գործում յերկրի զանազան գավառներից հավաքված պատմանիների պատմած հեքյանները, յերգած ժողովրդական յերգերը և այլն։ Ժողովրդական եպսոփ այդ ապրյուրը, վոր մանկություններից և պատանեկությունների զնուում և Սիսալին, հետադայում հարստացնում և նրա ստեղծագործությունն արժեքավոր վիճակիներով, վորսնցից լուսադույնը հանդիսանում է ներկա ժողովածույթում զետեղված հայությանն յետեն» պոեմը։

1914 թվին Սիսալը զնուում և Ամերիկա, ուր և դանուում և ժինչե այժմ։ Ամերիկայում Սիսալն զրազվում և բանվարությում։ Դառնանում և զրաչար, և այդ աշխատանքն ել կատարում և մինչև այժմ։

Սիսալի պոեղիայի համար չափազանց համահայտկան և ժաման-բուրժուական զրողի ստեղծագործական տատանումները։ Սկզբնական չըջանում, նա մի կողմից հնչեցնում և իր քնարի անհատապահական լիրիկայի լարերը, զուլերզում սերն ու ընությունը, մյուս կողմից տուրք և տալիս ազգայնական արամաղբություններին։

Իր կյանքի ավելի յմբիտասարդ շըջանին, ընկնելով դաշ-  
նակցական զաղափարախոսության ազգեցության տակ և շատ կարձ  
շըջանում հարելով դաշնակցությանը, նա իր մի քանի ստեղծա-  
դուրծություններում տուրք և տալիս ազգայնական գաղափա-  
րախոսությանը, վորը արտահայտվում է նույնիսկ ժողովրդա-  
կան եպոսի մշակման մեջ («Գուսաներգեր» ժողովածույի վորոշ  
և ջերում): Սակայն ի պատիվ մեր հեղինակի, պիտի արձանա-  
գրել, վոր նա վճռականապես հրաժարվում է իր պոեղիայի այդ  
տիտուր ժառանգությունից: 1931 թվին հրատարակված «Գիշերին  
մինչև լուսարաց» զրքի առաջարանում նա զրում և «Ներկա  
հատորես զիտակցարար գուրս եմ թողած բազմաթիվ ազգայնա-  
կան-շովեն կտորներ, վորոնց մասին հեղինակի իմ հարազատու-  
թյունը կը մերժեմ, անոնք համարելով անդիտակից մի շըջանի  
անհավասարակշիռ և անհարազատ արտահայտություններ»:

Զափաղանց ուշազրավ և արժեքավոր և ժողովրդական մո-  
տիվների և բանահյուսության ողտազործումն ու մշակումը Սի-  
ատակի մոտ: Այս տեսակետից հեղինակն առանձնակի տեղ և զրա-  
վում մեր պոեղիայի մեջ: Վերցնենք թեկուղ ներկա ժողովածու-  
յում ամփոփված մի շարք մանր բանաստեղծությունները, ինչ-  
պես նաև «Հերթան ու Զերթան», «Կարավանին յետեն», «Ծամթե-  
րը», «Լեյլա և Մեջուն» զործերը:

Սիտալի վերոհիշյալ ստեղծագործություններում զգացվում  
է ջերմություն, անմիջականություն, պարզություն, հուզմունք:  
Ահա հենց թեկուղ «Ծամթերի» հետեւալ հատվածները.—

Սիփանի սեղ կատարեն

Որո՞ր, չորոր յա՞ր,

Թեկ առալ Սինամ կաքավ,

Հուրն ի հրեղեն յա՞ր.

Շեկ տղեն շող-լող տալեն

Որո՞ր, չորոր յա՞ր,

Հանց յերազ ծովափն յելալ

Հուրն ի հրեղեն յա՞ր:

Բոժոժները զընդպնդալեն

Սոնա աղջիկն հոն կանդ առալ.

Ծամերու ծանրութենեն

Ծամթերն կտրալ ի ծովն ընկալ:

*lumif*  $\beta h^*$

Զամ՞ն աղջիկ, քեղի համար  
 Որո՞ր, չորսը յա՞ր,  
 Յոթ ծալի տառի կիշնեմ յես  
 Հուրն ի հրեղեն, յա՞ր:  
 Նոր ծամբել ծամբիտ համար  
 Որո՞ր, չորսը յա՞ր,  
 Շատ ամպերեն կը հյուսնեմ յես  
 Հուրնի հրեղեն, յա՞ր:

ժողովրդական սկզբունքներից ներշնչված այս տիպի  
բազմաթիվ բանաստեղծությունները մնում են վորպես Սիսալի  
առաջին շրջանի լավագույն գործերը։ Սիսալի «Նոր Հորովել»  
բանաստեղծությունը, վորպես նրա բեկման սկզբնական շրջանի  
գործերից մեկը, ունենալով հոգովրդական ստեղծագործության  
նույն պարզությունն ու հարազատությունը հարստացվում է նաև  
նոր բովանդակությամբ, մի բան, վոր կրկնակի յէ արժեքու-  
վորում հեղինակի այս բանաստեղծությունը։ Վիհենայում, ընկ-  
Ա. Հակոբյանի խմբագրությամբ հրատարակվող «Արեգ» ամ-  
սագրում, 1924 թվին լույս տեսած այդ բանաստեղծությունն  
ազգանշեց Սիսալի ստեղծագործական բեկումը, վորը զնալով  
ավելի ու ավելի խորանակով հասալ մինչև բանվոր դասակարգի  
պայքարի մարտաչունչ յերգերը։

Զի կարելի խսուել ժողովրդական բանահյուսության մշակ-  
ման մասին և հատուկ ուշադրություն չղարձնել հեղինակի  
գլանավալանին հետեւեն» վիպերգության վրա։ Խոր հուզականու-  
թյամբ, նկարեն վոճառվ հորինված այս յերկը կը մնա վորպիս-  
քեր պոկիկայի շողշողուն զարգերից մեկը։ Այստեղ Սիստալ-  
էմառորեն տիրապետելով իր նյութին, մշակելով յուրահասութ-  
յական առաջարկ հորինվածք, վորը չի կարելի կարգալ առանց հուզ-  
մունքի։

Յուրահատուկ մոտեցումով մշակելով ժողովրդական այս  
Յուրահատուկ մոտեցումով մշակելով ժողովրդական այս  
վեպը, Սիստալը կարողացել ենթալակության մեջ մացնել  
նոր տարրը: Մեծամեծ հարստությունների ձգտող Վազրիկը,  
հաղթական կարալանի հետ վերադառնում են տարիներով յերա-  
հաղթական կարալանի հետ վերադառնում են տարիներով յերա-  
դահ իր սերը գտնելու, սակայն ընկնում են մայրական դաշտոյնի

Հարվածներից։ Կարավանով կիտված լեռնակուտակ հարստությունը բնալ չի ապահովում յերջանիկ սերը։ Այդ սերն ավելի աղատ ու յերջանիկ է, յերբ չի պայմանավորվում հազարավորների թշվառության գնով կուտակված հարստությամբ։ Ահա վիակերպի ընդհանուր յեղակացությունը։

Զի կարելի կանգ չառնել այս յերկում, Սիստալի կերտած մի չարք թարմ ու ինքնատիկ պատկերների վրա, վորոնք ավելի յեն ճոխացնում պոհմը, գունագեղ դարձնելով նրա ընթացքը։

### Ահա դիցուք —

Կաճեր ինչպես փոթորիկ՝ խրիխնջն արտք ձիերու,  
Բաշերն ոծած լուսնկան, աչքերն նման բոցերու。  
Ուղտերն ելին տարածված, վորպես ամպի գորշ գեղեր,  
Յևլ մոռն անոնց՝ ուղտապան մի նոր աշխարհ կերպեր։

### Կամ —

Ապա հեծավ իր ու ձին, մի բառ մնջեց գորովի  
Բացալ նժույշն իր ոռուղերն, տնկեց վիզը կորովի,  
Քակեց նման ջրվեժի անզուսպ հորձանքն իր բաշին,  
Անտես յեղան մութին մեջ հեծյալն ու ձին ու փոշին։

Պատկերացնելով անկողնից վեր ցատկող սիրառարփ աղջկան,  
Սիստալն արձանազրում է, —

Նվարդ վոտքի յե յելած ինչպես լույսի շատրվան...

Իսկ ամբողջ աշխարհը շրջադաշելուց վերադարձած տղան,  
Նվարդին մտարերելով —

Եղ կեռ հոնքերն եր հիշած, յերբ կապած եր ծիածան,  
Եղքան սիրուն չեր տեսած վոչ մեկ պատկեր ու արձան։

Իսկ Շեշլա ու Մեջլուն» վիակերդում, վորը նույնակես Սիստալի այս կարգի հաջող ստեղծագործություններից մեկն է, մենք հանդիպում ենք այսպիսի. հաջող պատկերի. —

Նա գյուղե դյուղ թափառելով տենդապին,

Ու կույսերուն բաժնեց լաշակ ու ծարիր, ՏԱՐԱՆԴԱՆԱԼ

Վորով անոնք՝ իրենց աչքին՝ անդունդին  
թուլքը կուտան, և ունքերուն՝ յերկնի ծիր...

Ժողովրդական ստեղծագործության վճիռ ակունքներից սըն-  
ված լիրիքական մի շարք ժանր բանաստեղծություններում  
նույնպես մենք տեսնում ենք հզացման և պատկերավորման  
տեսակետից ուշադրավ նմուշներ, վորանդ արտացոլվում ։ և  
ժողովրդի ներքին խավերի պարզությունը՝ հենց թեկուզ սիրո  
հարցում, զուրկ բուրժուական, քաղքենիական ամեն տեսակ  
սեթեկթանքից։ Վերցնենք թեկուզ «Մշակի սերը» բանաստեղծու-  
թյունը, վորն այս տեսակետից հատկանշական ե.

Իմ արտն եմ ցաներ կեսն՝ վոսկե ցորեն  
Ու կեսն ել արծաթ ու սրսու զպի,  
Զրիկս եմ կապեր Վարագա ձորեն,  
Այս հովիկ աղջիկ, դառներով արի։

Փարթամ վարդի պես ցորենն և փթթեր,  
Ակոսե ակոս առուն կ'երկարի.  
Արտիս թավիչը ջուրն և արծաթեր,  
Յերազիս աղջիկ, վարդերով արի։

### Յել ապա —

Իրիկվա շուքերն ինկան դաշտն ի վար,  
Դեմքիդ պես չիկնած որը կը ժարի.  
Ես արտս կ'ըրեմ, յես վո՞րի համար,  
Կարոտիս աղջիկ, կալերով արի։

Յերկնքի վաղքեն հողներ և լուսնակ  
Յել առուն ի վար իջեր և պարի՝  
Շուշանի փնջեր իր դիմին պստկ.  
Այս դալար աղջիկ, համբույրով արի։



Ինչպես քիչ առաջ արձանադրեցինք «Նոր հորովիկ» բանաս-  
տեղծությամբ սկսվում և Սիստալի ստեղծագործական թեկումը։

Վորագես քաղաքացի, այդ բնկումը Սիտալի մոտ կատարված եր ավելի առաջ, վորն արտահայտվում եր հատկապես դաշնակ-ցության դեմ մղած նրա ակտիվ պայքարով։

1931 թվին, Սիտալը «Գիշերեն մինչև լուսարաց» գըր-քում ամփոփեց իր հեղափոխական բանաստեղծությունները։

Հենց «Գիշերեն մինչև լուսարաց» զըքի վերնադրով, Սի-տալը կամեցել ե զծել իր աղջայնական, մանր-բուքժուական յեր-դերի դիշերից՝ մինչև հեղափոխական յերդերի լուսարացն ըն-կած ուղին։ «Գիշերեն մինչև լուսարաց» խորապերը լիովին կը բացառը իմ դաղափարական զարգացման։ Կոլվույթը։ — զբում ե Սիտալը վերոհիշյալ զըքի առաջարանում։ Խոկ 1933 թվին հրատարակած «Հուսարացի յերդերը» զըքի առաջարա-նում հեղինակն ամելացնում ե.

«Հուսարացի յերդերի» այս զըքույկով յես հեղափոխական զբական տասնարեզը կ'իջնեմ՝ մտքես և կոշիկներես վերջնու-կանապես թոթափած աղջայնական անցյալի մը արյունու փո-չին և մանր-բուքժուական դաղափարանության ամեն մեկ հի-վանդու հետք։

«Հուսարացի յերդեր»-ն, ինչպես նաև նրա հրատարակու-մից հետո զըքած բանաստեղծությունները, վորոնց զգալի մա-սը զետեղված և ներկա ժողովածուի մեջ, — հիմնականում կա-բելի յե բաժանել յերկու մասի, — ա) համաշխարհային պրո-լետարիասի դասակարգային պայքարին նվիրված ստեղծագոր-ծություններ, բ) Խորհրդային Միության սոցիալիստական շի-նարարությանն ու պաշտպանությանը նվիրված գործեր։

Համաշխարհային և հատկապես ամերիկյան բանվոր դա-սակաղի պայքարին նվիրված քերթվածներում՝ Սիտալը հան-դես և զալիս մարտական չեշտով, նա խորապես լավատես ե՝ բանվոր դասակարդի պայքարի հաղթական վախճանի նկատ-մամբ։ Նա մասսաներին վողեկոչում և դեպի պայքար ու հազ-թանակ։ Նա մեծ պաֆոսով գովերդում և քաղցարչավի յելած հաղարավոր մասսաների պայքարի յերթը։ —

Յեկեր եյին քաղաքներե, մեծահարուստ, հոկայական,

Վորոնց շենքերը հոյաշեն, յերկնասլաց, ամբարտապան,

Յերեկ անոնք կերտեր եյին աշխատանքով ստրկական։

Այսպէ անդործ եյին անոնք—վոչ հաց ու վոչ բնակարան։

Յեկեր եյին գործարանի բանվորները, տանջված, նիհար  
Վորոնց քթեն դեռ թունավոր հնոցներու ծուխը կուգար,  
Յեկեր եյին մութ հանքերու դերիները՝ դեմքերը սե,  
Վորոնց կյանքը՝ զարհուրանքի գիշերն յեղած եր անարե:

Յեկեր եյին արևմուտքեն, անարդ լինչի կեզ հարավեն,  
Յեկեր եյին սառ հյուսիսեն, Ատլանդյանի քաղաքներեն:  
Ամեն կողմե կուռ շարքերով, հասեր եյին մայրաքաղաք՝  
Ե՞ն կորովի՝ ու գովական, Ե՞ն հոյակապ ռազմիկ տղաք:

Նա նկարագրում է հեղափոխական ցույցի յելած բանվո-  
րական կուռ բանակին, վորոնց մոտ —

Վորպես հրդեհ անմարելի և բոցավառ  
Դեռ կանգում և ցուցանակի կարմիր անտառ,  
Զոր կը տանեն դեպի կոփին ու ապական՝  
Հեղափոխված շարքերն անվերջ—բանվորական:

Նա ներբողում է Շիներմանիո անսպառելի կոմիուսինք, վա-  
րը մարտնչում է հիալերյան կացնի զիկստատուրայի դեմ, նա  
վող աշխարհի պրոլետարիատի անունից ողնութան և խրա-  
խուսանքի խոսք և ասում նրան:

Սիտալը պայքարի առաջին ճակատի վրա յե, նա ամեն  
տեղ և, աշա նա վողջունում է Շինտրոյիտի մարտական աշխա-  
տավորությանը» և նրանց սրտերը վասում պայքարի ու հազ-  
րանակի հրով: Նա բանվորական մասսայի հետ և: Նա այդ  
մասսային պայքարի յե կանչում գհամաշխարհային սովորի  
համարօ:

Սիտալը դիտել է նաև կապիտալիստական ճգնաժամն ու  
նրա ահռելի հետևանքները: Ահա փակված գործարանը —

Գերեզմանի պես լուռ և կերպասի մեծ գործարան,  
Վորիկ դռնեն և հյուսեր սարդը նրբին իր վոստայն.  
Վորպես հսկա հարցանիլ կախվեր և սե այն ծիսան,  
Սարսափահար աշքի պես բաց և ամեն պատուհան:

Մեքենաները ժամնդու՛ ժահվան դալուկն են հագեր,  
Նժան մարած մոմերու՛ կ'ողբան անթիվ իլիկներ,  
Հանկարծ քնատ մի զջիկ առաստաղեն կառնե թե,  
Յեկ կը մաղվի սև փոշին լացի նժան հորատեւ:

Ընդամեն ութ տողի մեջ վորպիսի գունեղությամբ և խոտա-  
ցած յերանդներով նկարված ե փակված զործարանի պատկերը:

Սիտալին մեծաղես վողեորում և նաև մեր սոցիալիստական  
Հայրենիքում ծավալվող հոյակապ պայքարն ու աշխատանքը:  
Նրա քնարը չի ցանկանում անմասն մնալ այլ աշխատանքից:  
Յեկ նա զովերդում ե օիր նոր Հայաստանը, նրա զՓառքը  
յուսեա, ևնոր Ռուսաստանը, այդ զլույսի պանծալի յեր-  
կիրը, ազգամիջյան խաղաղության որբան Շնովկասը, նա ճո-  
ներդ և նվիրում կարմիր բանակին, վողբում Անդրկովկասյան  
Ֆեդերացիայի զեկավարներից Ալ. Մյասնիկյանի մահը, և այն,  
և այլն:

Սիտալի պոեզիայի այս մասը պիտի ասնէ, վոր համեմա-  
տարար տվելի թույլ և, դեղարվեստական պատկերների փոխա-  
րեն՝ այնուղ հաճախ իշխում և հրապարակախոսությունը, հը-  
ռեատորությունը: Այդ մասամբ իրեն զդալ և տալիս նաև հե-  
ղինակի այն դրվածքներում, վորոնք նվիրված են համաշխար-  
հային և ամերիկյան պրոկտորարական պայքարին: Յեկ այդ  
հասկանալի յե, քանի վոր նրա այդ բանաստեղծությունները բան-  
վոր դասակարգին համախմբելու և պրոլետարական հեղափո-  
խությանը նախապատրաստելու համար մզվող պայքարի անմի-  
ջական զենք են հանդիսանում, Զիմանելով այս հանգամանքը,  
մենք այնուամենայինվ կցանկանոյինք, վոր Սիտալն այնպես  
մշակեր իր նյութը, հրապարակախոսական հաճախ պրիմիտիվ  
տարրերը փոխարիներ հուճկու գեղարվեստական պատկերնե-  
րով, վորպեսզի նրա պոեզիայի մեջ ավելի շատ լինելին ցՓակ-  
ված գործարաններ նժան արվեստով դրված գործերը:



Առաջազր հեղափոխական ստեղծաղործող լինելուց բացի,  
ինչպես արձանագրեցինք, Սիտալը մեն աշխատանք և կատարել


նաև ամերիկահայ հեղափոխական զբողների և արվետագետների միացյալ ճակատի կազմակերպության մեջ։ Այդ ուղղությամբ ևս նրա ծառայությունները մեծ են։ Սիոնալը մենակչե, նա ըրջապատված և մարտական ընկերների և զինակիցների շարքերով, վորոնք անընդհատ անում և զարդանում են։

Երանք բոլորը միասին, կոմունիխոսական կուսակցության ղեկավարությամբ, բարձր ծածանելով Մարքսի—Ենգելսի—Լենինի—Ստալինի գրոշը, անհաշու պայքար մղելով կապիտալիզմի և մոլեգնած ֆաշիզմի դեմ, հայկական պայմաններում՝ դաշնակցության և մյուս բուրժուական կուսակցությունների դեմ, ուրտ կատ պահպանելով առաջին հերթին ամերիկյան, ինչպես նաև մյուս ժողովուրդների հեղափոխական գրական բանակների հետ, իերուսալեմ են համաշխարհհային հեղափոխական դրականության որդանական մասը կազմող իրենց մարտական դրականությունը՝ աղջային ձևով և ինտերնացիոնալ բոլանդակությամբ։

Ապագան և հաղթանակը միայն այդ գրականությանն է պատկանում ամբողջ աշխարհում։

25 ապրիլի, 1935 թ.

ԺՈՂՈՎՐԴԻ ՅԵՏ



## ԿԱՐԱՎԱՆԻ ՅԵՏԵՎԵՆ

### I

Սիրուն թամար Ռշտունի դեռ յոթն ամսի հարսնուկ  
եր,

Ցերբոր ուղղմի փողն հնչեց . և իր Պատրիկին  
անվեհեր՝

Մի պագով ջերմ ու վերջին՝ հեծավ բոցակն  
յերիվար,

Գնա՞ց . և իր արևեն այրի թողեց հեզ թամար :

Ցերթի որեն ե'լ աշխարհն իր բանտն յեղավ  
դառնագին .

Մինչև ծնունդ տվալ նա անուշ և թանգ Վաղրիկին .  
Վորի վրա հակեցավ ինչպես պիշերն հեշտալի ,  
Վոր նոր լուսնին հսկելու տենդեն տակավ կը հալի :

Ցեվ վորբ սրտին մեջ , ուր նա քանդած եր հույս ,  
ամեն բան

Ամուռը կանգնեց վաղբիկի համար անելութ իր  
սեղան.

Ինչպես ուռին, վոր կաճի, կը լաւ մի սար վիթխարի—  
Անդուսալ, քանդող ու վսեմ — այնպես սերն եր  
թամարի:

Շուքի նման ամփոփված վրա անոր սնարին  
Որոր կերպեր, կը պատմեր թելելն ի վար քնարին  
Վեպերն ահեղ մարտերուն և սեղ զարմիկ քաջերուն,  
Վոր զոհ ըրին իրենց կյանքն՝ հրեղեն կույսի մը  
սիրուն:

Հեքյաթ կըսեր փաղաքուշ՝ դանձի, սերի և փառքի  
Յեղ այն սրոստ լաճերուն, վորոնց արկածն և  
Հարդի,  
Ու յերդն անծայր քարվանին մի ակի շուրջ լոլորած,  
Տաղերն՝ անմահ դուսանին մեղրոտ շուրթեն իր  
թռած:

Ուր վոր կոխեր վոտքն վորդուն-իր սիրոն այնտեղ  
կը տրոփեր.  
Ուրկե անոր ձայնը դար — իր հույսն այնտեղ  
կամփոփեր.  
Յեղ իր կյանքի մութին մեջ նա վոսկի աստղն եր  
հույսի.

Թամարն եւ՝ ամպ, վոր անոր շուրջ կը դառնար  
մեկուսի:

Յեղ պերճ վորպես դյութական սոսին դալար ու  
շտակ,

Վոր ջինջ ջրի մը արկին հաղարտ կաճի յերկնից տակ  
Այսպես վազրիկ ուռնացավ իր մոր լացին տակ  
բարի.

Կանաչ ծիլ եր - ու սոսի յեղալ տարի առ տարի:

## II

Հաղիս տասնութ տարվա յեր յերբ նա առալ զույդ  
մ'եղներ,

Շերկ եր մեկը բոցի պես և մյուսն եր թուխ քանց  
գլշեր :

Հորմեն ժառանդ կը մնար մի քանի արտ ու այդին .  
— Որհնյա՞լ և հացն, վոր շաղված և թանկ ցողվն .  
քրտինքին :

Խնքն եր մշակն ու ջրվոր, ինքն՝ իր հոտաղն ու  
մաճկալ .

Խնքն կը ցաներ, կը հնձեր և ինքն մինակ կըներ  
կալ .

Մայրն ել իր սերն կը խառներ զավկի մաքուր  
վաստակին .

Կուլար յերբ միտք կիյնային փառքի որերն իր  
նախկին :

— «Վորդի՛, կուրնար այս աչքըս, վոր քեզ մշակ չը  
տեսներ .

Ասպետ եր հայրդ. քո տեղն ել չքեղ փառքի կրկեսն  
եր» .

— «Փառքիս կլրկեան և միայն արտն վամ վոսկի  
ցորյանին .  
Յեզ իսմ կարմիր հաղթանակն՝ ծիծղուն և վարդ  
մեր գինին» :

Արտին մեջ չոփ կը ծաղկեր հասկն անոր սիրական .  
Կոծեր արևն իր մաղերն, ճակատն ել՝ քաղցր  
լուսնկան .

Մեկ կը դատեր — կառներ տաս. ու յերբ աշուն կը  
հասներ  
Հնձանն՝ առաստ դինիով, ամրարն հացով լեցուն եր:

Ու յերբ կուղար իրիկուն, կախարդ հույսովն  
աստղերուն  
Վաղիկն ել տուն կը դառնար հետ զուրբ հուժկու  
յեղներուն,

Յեղջուրն անոնց դարդարած նախշուն բուրյան  
պատկով,  
Սիրտն իր փթթած ծաղկի պես, հողին՝ գինով.  
վաստակով:

Յերեք տարի չեր անցած, յերբ տունն եր չեն ու  
պայծառ,

Սեղանն եր բաց ճամբորդին՝ փույթ չե թե վոր  
յերկրեն զար:

Հողնած գուսանն այդ սեմին վստահ կուղար առնել  
կանգ

Հոն իր վիշտը մոռնալու—ճամբի խոնջեքն ու  
զրկանք:

Եի որ հեռու աշխարհե յեկալ դուշակ մը հղոր .  
Թափեր եյին ուսն ի վար գանգուր մազերն ալեոր .  
Զեռքն եր բռներ մազաղաթ մը հին—սմբողջ  
նկարուն .  
Վարդե՛ր կային հոն — հավքեր , կախարդ տողեր ու  
դարուն . . .

— «Վարդե՛ր , բախուը դուշակե չքեղ ու թանկ  
վազրիկիս .  
Յել մինչ հոգուր յերազեն կախարդ դրքիու կը  
համեցիս ,  
Գթոս լինի թող քո սիրո — զավկիս բարի՛ն  
կամեցիր .  
Մե՛ղք եմ . իմ տուն ու հույսեր հովին մի՛ տար ցան  
ու ցիր . . .»

— «Տիկին , զարմիկ մի ցեղի ընձյուղն ե նա  
թարմագեղ .  
Պապերն անոր թափեր են այրուն առաս քանց  
հեղեղ .  
Բայց վոչ անուն կը մնա , վոչ ավարն ե մնայուն .  
Կանցնի մեկը շուքի պես , մեկն ել հովի մը  
հանդույն» :

«Ես ի՞նչ պայծառ կը տեսնեմ զավկիու ասողը  
լուսածիր .  
Ահա՛ շուշան մը դալար . . . ծիերդ գանձով շու՛տ  
բարձիր .

Կախարդ հարսն ե Վաղրիկիդ ։ յթն ուր ըսեմ կամ  
ամիս՝  
Վորդիդ ճամբորդ ե բարով ։ տիկին, ինչո՞ւ կը  
ուրամիս» :

«Կեցի՛ր ։ ահա՛ ձույլ վոսկի, մետաքս, սնուռուս ու  
գոհար ։ Վաղրիկիդ ե մեծ բեղիբան ։ տե՛ս իր դարձի  
ճանապարհ ։ Կի՛ն, բա՛ց գուռուս — զավա՛կիդ ե կուղա հեծած  
կերիվար ։ Գուշակն լոեց դողահար—ներսը լաց ու արյուն  
կար ։

Թամար սեն այդ չի տեսավ ։ կարծեց գուռուր իր  
բանար  
Հարուստ Վաղրիկ գրկելու ։ քարվանն հեռվեն  
կերենար, —  
Ափը դրավ իր նվեր, ձեռքին վրա մի համբույր ։  
Ու սերն ամպի սկս թեթև դարձավ իր տուն  
սիրաբույր :

## IV

Յերեք ջորի բեռցուցին հաղար տեսակ բարիքով ։  
Մեկը հալավ ու լաշակ, մեկն ել բույրով ու միրով,  
Յերբորդն՝ ուլունք ու գոհար, զարդ ու ծարիր  
առանձին,  
Յեկ յոթն առույր քաջի հետ հարսէ հոր տուն  
ճամբեցին :

Առանցակն ինչպես կը ծաթի մեջտեղ դոհար  
աստղերուն,

Բացված շուշանն է ինչպես ի մեջ քաղիուր  
վարդերուն,

Այսպես Նվարդ Վաստանի մեջ եր ծաղկեր սաղերով,  
Կարմիր սալիորն իր ուսին՝ ակն եր իջեր նաղերով:

Յեղինիկն եր նա առավա ամբիծ ցողով դիեցված,  
Գաղպին կերած հացի տեղ, վարդերու մեջ քնացած.

Մաղերն իր սև ու հորդան ինչպես ամբան կես  
դիշեր.—

Իր աչքին մեջ նայովը ել վիշտ ու մահ չեր հիշեր:

Իր հողին շատ խորունիկ Վաղբիկ նորահարսն իր  
սիրեց.

Պատկերն անոր իր լանջին տակ նա անջինջ  
մոխաղեց.

Նվարդ ըսես թիթեռն եր, Վաղբիկն ել լույսն իր  
անձառ.

Վորի ցոլքեն եր գյութվեր ու չեր դիմեր իսկ  
պատճառ:

Վաղբիկ դդաց վոր Նվարդ մի աղջիկ չեր հասարակ,  
Պատկերն ուներ դիցուհու, հասակն ել պերճ ու

բարակ

Վայել եր լոկ բամբիշի. մեղք եր զրկել այն  
մառքեն,

Հնում նա յոթ ծովերու տիրուհին եր ասլաքեն...

Բայց եր հերկած արտին մեջ բուռ-բուռ վոսկի չեր  
բուսներ.

Փարթամ դառնալ քրտինքով - միայն խենթի մը  
հույսն եր.

Այսպէս ալիտի բոլորեր որ ու ամիս ու տարի,  
Ու գեռ ալիտի նա թաղիեր քրտինքն ճակտին իր  
բարի...

## V

Գարունն եր ծաղկեր—կանաչ կիրակի—  
Մրցում կար ձիու, խելքի ու բաղկի.  
Դաշտն եյին իջեր ճորտ ու նախարար,  
Եեպուչ ու ռազմիկ, զորք ու զորավար :

— Թամարն ըսած եր. «Աչքիս լույս, վորդի',  
Կո ձիդ. ու հազիր լաթերդ վորսորդի.  
Ու գնա շահիր փառք, վոր հորըդ եր —  
Յեղիր հորդ նման ասպետ-տանուտեր . . .»

Նվարդն ըսած եր. «Վազրիկ, իմ արե',  
Մեծցիր քանց սոսի մեր գլուխն վերև.  
Յեղիր ռամիկեն ու թույլեն սիրված —  
Ատի՛ր փառքն, վոր և ուրիշեն խլված . . .»

— «Չեմ ուղեր կարծեն ինձ անճար գերի.  
Բավ չե առւնըդ՝ չեն, արտղ լինի բերրի.  
Պետք ե սնափառ ես մեղկ ջոջերուն  
Յույց տալ թե մարդ ենք - ջուր չե մեր արյուն . . .»

Գնաց մբցումին իր սև ձին հեծած,  
Զին, վոր ինք կըթած, ինքն եր մեծցուցած.  
Ու հետ արեւ վերջին չողերուն՝  
Վաղրիկ՝ հաղթական փառքով դարձալ տուն:

— Վորովի՛, հաղթական քու դարձի ճամբին  
Թող փառքի կամարդ լինիմ ու դափնին.  
— Յես ել հրավագ ձիուդ սմբակին  
Փոշին թող լինիմ, Վաղրիկ՝ իմ անգին...

— «Ո՞վ չե մեծատուն — վաս ու ըստրուկ ե,  
Ո՞վ վոր դանձ չունի — ծախված գերուկ ե.  
Մայր, ինձ ծաղրեցին ակտ ու զորական...  
Հսին. հողդ փորե՛, կոպիտ շինակա՞ն...»

Թամար ըսավ. «Հեղ վորդի, մի աստված կա  
նյութեղեն,  
Վորին լուռ ծունք կը դնեն տեր ու ծառա հողեղեն.  
Առանց վորի մեր որը — մոայլ կյանքն ե ըստրուկի.  
Ազատ անուն ի՞նչ կարժե թե դանձ չունիս կամ  
վոսկի՛...»

«Գուշակն ըսած ե վոր դու պիտի լինիս բեզիրգան.  
Յեկ ի՞նչ դանձ վոր ծովին ունի, ի՞նչ վոր իրան ու  
Զին կան,  
Բեհեղ, վարդյուղ ու մարդրիտ բարձած հաղար  
ուղտերու  
Պիտի դառնաս քո նվարդ՝ հզոր բամբիշ կարգելու»:

«Մոռցիր գութանդ գոմին դուռ, ծախիր գոմեզդ ու  
յեղներ,  
Հայրդ կը շեկներ ամոթեն թե վոր մշակ քեզ  
տեսներ.  
Մոռցիր անպիտ եղ վաստակդ, վոր լոկ վայել և  
ռամկին —  
Գուշակն ուղի՛դ և դժեր — անկե քալե, իմ անդին...»

\*

Նվարդ իր գուռ, ծաղկելուն յոթ լուսնակ եր  
բոլորեր,  
Յերբոր հողին վիրավոր, բայց մեղմ ձայնով  
անտարբեր,  
— «Մայրի՛կ, ըսակ, յերբ արե ծագի նորեն յոթն  
անդամ  
Յեռներս պատրաստ թող լինին — ոտար յերկիր յես  
կերթամ...»

## VI

Նվարդ սե լուրն վոր լսեց՝ աչքեր լացի ծով  
դարձան.  
Վորմե վարդերն իր այտին փունջ-փունջ ինկան ու  
չորսան.  
— «Մ'ըներ, մտավակ արեիդ, ինձ վողջ կըսկ մի՛  
ձգեր.  
Տեսքեր՝ աչքերս, համբյուրեդ՝ սովոր չուզթերս մի՛  
զրկեր»:

«Փառքն ու վոսկիին ի՞նչ ընեմ, դու ես իմ փառքն  
ու դոհար.

Անմիտն ե լոկ մետաքսի, քիրման շալի սիրահար.  
Մ'երթար. թող մեղ իրու տուն ծառի բուտն՝ իսկ  
շամտ լինի.

Քու տեսքն ե ինձ խրախճանք, անուշ սերդ ել հին  
դինի:

«Լեցի՛ր, Վազրիկ, քովս կեցի՛ր, մշա՛կ լինինք թող  
հավետ,

Դու ժիր մշակն արեառ, յես ել հոտաղ քեղի հես.

Դու հուտն արծե, յես՝ գառներ, սրինդդ ածե՛,  
սպարեմ յես.

Ուրկե քալես հետեւիմ քեղի հլու չուքիդ պես...

«Մ'երթա՛ր, Վազրի՛կս, հարսնաքովս ինձի սպատահք  
մի՛ շիներ.

Մեղոստ չումչիդ կարոտով ինձ սև հողը մի՛ զներ.  
Կեցի՛ր, ծառա յեմ կամքիդ, սուզըս փոխե ժըսկոտի՛.  
Լացես նույնիսկ քեղ անրամ դանձեր թափեմ յես  
սլիտի...»

— «Նվա՛րդ, կյանքես հեռանալ դյուրին ե ինձ  
ավելի՛,

Բան քե քեղմե, վոր կյանքես թանկ ես ու շամտ  
սիրելի.

Բայց մի սպարտք կա ինձ տոհմես, վոր կը վարե ինձ  
անկամ.

Փարթամ պետք ե վոր ապրիմ և կամ հաշվեմ թե  
չը կամ.»

Զյունոտ ու սեղ Արտոսին բարի լույսն նո՞ր եր  
ծաթեր.

Հարսերն ջըրի կերթային՝ այտերն յերկու բաց  
վարդեր.

Ծուխը ամեն յերթիքն կելներ պալան առ պալան —  
կախարդ՝ կույսի յերաղին կամ քաղցր վշտին իսկ  
նման...

Դրկից, ճանչվոր ու համհարդ յեկան տունը  
թամարի.

Աղջիկ մը նո՞ւռ եր բերեր, մեկն ալ գաղպին ու  
բարի.

Հարսերն մետաքս թաշկինակ, կիներն՝ դաթա ու  
գոխինդ

—Հորքույրն՝ հուռութ մ'հեթանոս—սիրտ մը վոսկի  
ու հակինթ...

Բակին մեջ ձին եր կեցեր՝ վարդեր՝ կամար վիզն  
իվար.

Նվարդ ուղունքն եր կախեր, բոժոժն ու ծոպն ել՝  
թամար

Ու յիբր Վաղրիկ բաղմեցավ թամրին վրա  
պարսկական, —

կարծես թև Շահն եր հզսր վոր յետ կուգար  
հաղթական:

Նվարդ առավ կուժ մը ջուր, ճամբին վրա շուռ  
տվալ.

Վորաբեսզի ձին Վազրիկի դեպ փա՛ռք վարգեր  
սրարչավ.

Ճամբան ծաղկեր փունջ առ փունջ առջև անո՞ր  
նժույդին,

Ծովը ցամքեր, և անդունդն անոր բանալի իր վուկին:

Վոր շոգն՝ անուշ սյուք դառնար, ամայքն հոսեր  
կաթնաղբյուր,

Ուր նա նստեր հանգչելու մի ծառ ծլեր  
հեշտաբույր.

Վոր ծովն ու Զին ու իրան անոր առատ դանձ  
տային

Յեկ նա բարով իրեն գար յերբ վոր անցներ յոթ  
տարին:

Ապա յերթի ճամբին վրա կոտրեց սակորն եղ  
կարմիր,

Դատա՛րկ — իր վորբ սրտին պես, ու վար հույսին  
պես՝ պատիր.

Տարավ գողնոցն աչքերուն, մի դող իրանն իր  
ցնցեց.

Սոխակն ինչպես վարդ կուլա ենպե՞ս նա տաղն ես  
հեծեց.

— ԿԵՆՏԻՆ վոր դո՛ւ կը կոխես, յես ի՞ն ճամբան  
պիտեյի.

Ողակ-ողակ քեղ գրկած՝ պատկերդ՝ անվերջ  
դիտեյի.

Ու յերբ ծարսով դու կայնես վճիռտ ակի մը վրան,  
Յես են ջրիկ պիտեյի ու ցողեյի քո բերան:

«Հո՛ն, ուր վոր դո՛ւ հանդ կառնես, յես չեն պանդոկ  
Քեզ հայ ու դառ խորոված, շարբաթ ու մեղր  
թափեյի.

Հո՛ն դար քունըդ դյուրեկան քանց խունկ ու վարդ  
հունեան.  
Վոսկի աթոռ քեզ աայի, մարմար լաղնիք ել վրան...

«Բաղարն վոր դո՛ւ կը մտնես, յես լինեյի բեկիրդան.  
Գանձերն յոթը ծովերու, լ'նչ վոր թուրան ու Զին  
կան —

Բոլո՞րն հոժար կուտայի քո մեկ հատիկ համբույրին.  
Ասոված վկա, վո՞չ մեկ մարդ անկե կրնար տալ  
մեծ դին:

«Կարդի յուղով ծանրաբեռն՝ յես զով հովը պիտեյի.  
Քրտնած դեմքիդ արևվառ՝ կաղդույր ու բույր  
դնեյի.

Եազերդ ի վար վարդի թերթ, հպարտ ճակտիգ՝ ել  
համբույր.  
Ըսեյի—շա՞տ եմ տանջվեր. գլխիս տե՛ր, չո՛ւտ տուն  
յեկուր...»

\*\*\*

Քարվանն ընկավ ճանապարհ՝ զըրընդ, զըրընդ  
յերդերով.  
Լելակ ու վարդ թափեցին կույսերն սատափ  
մազերով.

Թամար անուշ ու դթու՝ տվավ մի մոր  
• որհնություն.  
Ապա մարած վա՛ր ընկավ վորսես զարնված մի  
թռչուն:

### VIII

Թամար իրենց այգին բերավ մի թարմ բարունակ  
Ու տան բակին մեջ տնկեց իրեւ հույսի նշանակ.  
Նվարդն ել վոստ մը հարդի վանա քափուր  
վարդերուն —  
իրեւ կարոտ բոցավառ, սերի վերքին պես  
կարմըրուն:

Գաղտնի արցունք մը թափեց անոնց վրա հետ  
թամար,

Նվարդն ել պատ մը հրուտ, ցալի ժպիտ մաննշմար  
Մինչեւ անոնք ուռճացան, բացին բաժակ հոտեան  
Շուրջը դուռին յերդեցիկ, հորին առջև ու դրան:

Գալթին մոտիկ, ուր Վաղրիկ որվա խոնջեքն իր  
կառներ,  
Հո՛ն, ուր աթուն եր մարմար՝ վարդաստանին  
առընթեր,

Մեկը նուռի մը տնկեց, մեկն ել լացող ուռենի.  
Մեկն հոն գրկանք յերազեց, մեկն ել պաշտում  
մայրենի:

Բուրդը մահճին Վաղբիկի քա՛նի դղբար գղեցին,  
Կախարդ քա՛նի հավքերու փետրով բարձերն  
լեցուցին.  
Վերմակն ամրող ծաղկեցավ դույն դույն մետաքս  
վարդերով,  
Բարձի աստառն ու ծածկոցն՝ անմհոռելի թերթերով:  
  
Յերբ վոր դիշերն քողի պես կ'իջներ վրա Վոստանի  
Նայմածքն անոնց կը դամվեր են վառ աստղին  
ընտանի,  
Վորի համար լսած եր Վաղբիկ. «Աս' աստղն ե  
բախտիս.  
Վորքան փայլի նա՝ արես դեռ վա՛ռ ե, ձեզ  
ավելիս . . .»

Հո՛ն եր են աստղն, յերբ դիշերն անամպ լիներ ու  
բարի.  
Բայց յերբ դոռար վորթորիկն, վրթեր թաթառն  
վիթխարի,  
Յերբ բուքն՝ արձակ դեմի պես՝ դար արշավել  
սարեսար,  
Անոնց հոգուն մեջ սարսափն անդունդի պես  
կամրանար:

Ամեն չաբաթ յերկու որ պահք բռնեցին, յերկու՝  
ծոժ.  
Ժամ չի մնաց, ուր անոնք չը վառեցին խունդ ու  
ծոժ.

Մասուռ ու սուրբ չի մնաց, ուր չացին  
ուխտավոր,  
Զեղավ մեկ վանք, ուր մատաղ չը բաշխեցին  
կամավոր:

Ամեն քարվան, վոր կանցներ, անկե մի լուր  
կուզեյին,  
Գուշակ թե դար՝ Վաղրիկի բախտը կարդաւ  
կուտային.  
Իսկ թե անցորդ մը թակեր գոնակն անոնց մոռացված,  
«Վաղրիկին յեկավ» գոչելով կը մարեյին գրկարաց:

Այսպես պատկերն Վաղրիկի եղ տան միջին  
կը մէծնար՝  
ինչպես ուսին անկապուտ մեջ իր վաղքին լեռն ի վար.  
Յեվ զույգ հատնող մոմի պես սիրուն նվարդն ու  
կը հսկեյին են ճամբան, ուրիշ Վաղրիկ պիտի դար...  
կը հսկեյին են ճամբան, ուրիշ Վաղրիկ պիտի դար...

## IX

Քարվանն որո՞ւ ու շորո՞ր՝ մութը չիջած հասավ  
վան.  
Վաղրիկ հո՞ն ճութ հայլաքեց, վոսկի տուփեր  
դյութական.  
Գինու թասեր նկարեն, գունար, ճանոց ու տորան.  
Յեվ ել մեկ տեղ հանգ չառավ մինչև իրան ու  
թուրան:

Յոթ գին տվին ի թէհրան, ինչ վոր առած եր Վանեն,  
Տաս գին տվին ի թուրան, ինչ վոր տարավ իրանեն.

Անձավ քարվանն որե որ, ինչպես գետը կը մեծաւ.  
Անցավ թաշկենդ, Սմբանդ, իջավ մինչև Բուխարա:

Քարվանն անկե մտավ Զին—անծայր յերկերն Արեին-  
Ռուր տեղ հաղար քաղաքներ գետերն ի վար կը ձգվին.  
Կույսեր ծաղիկ ցանեցին յերբ նա անցավ ժպտագին—  
Կարծես ուղմիկն եր հաղթող ճամբին վրա իր  
փառքին:

Ապա անցավ կղղիներն՝ անթիվ գանձի ու բույրի —  
Ուր կյանքն հեքյաթ մ'ե անուշ և տունն՝ առանց  
կտուրի.

Ամեն մարդ, ուր կուր ունի և ամեն կուր՝  
մարդարիտ.  
Ուր մեղք ունի ամեն տունի, ամեն ծաղիկն ել  
ժպիտ:

Նորի բարձած մարդարիտ, փղոսկը, մետաքս,  
բուստ ու սաթ,  
Զարկեց զուրերն լուսնկա—ճերմակ ու ջինջ վորպես  
կաթ,  
Անցավ Սիամ ու Սիյան, ուրկե իջավ Հինդուստան—  
Աշխարհն վեպ ու մողության և համեմի  
վարդաստան:

Այստեղ քարվան մը կաղմեց ճերմակ ու հաղթ  
փիղերու.  
Յեվ ձորն ի վեր Գանդեսի ու զով շուքեն ծառերու  
Մտավ Դելհի սրբազան, և գեմ Խանի պալատին  
իջավ դարբասն հոյակերտ՝ ևս հայ հզոր Ալատին:

Դեհի կեցալ յոթն ամիս, ու յոթն անդամ  
Ճոխացած՝  
Համեմ, հոմա և լահոռ ու քաշմիր շալ բեռցուցած—  
Քարվանն հանեց նա ճամբար դեպ իսպահան  
ու Շիրաղ—  
Տունը քափուր վարդերու, քերթողներու հրամագ:

Անկե իրեն հետ առալ հինա, վարդյուղ, դորդ ու  
զարդ,  
Լուսնի լույսով քարվանը մտալ Բաղդադ լուսաղարդ,  
«Հաղար ու մեկ Գիշերի» կախարդ ու մեղկ եղ  
վոստան,  
Ուր տեղ չո՛րս բան կար հարդի— ձի, վեպ ու կին  
ու դուրան:

Ենտեղ ի՞նչ վոր նա ծախեց, հաղա՛ր տվին փոխարեն.  
Ո՞վ վոր մի բան գնած եր, գնել փութաց այն նորեն.  
Ապրանք բերալ ծախելու նա՛, վոր գնել չեր կրցած.  
Այսպէս փարթամ բեղիրդան Բաղդա՛դն անդամ  
չեր տեսած:

Քարվանն հաղար ուղարկերու հասալ Մուսուլ,  
իջալ Շամ—  
Փարթամ քաղաքն, վոր տոնի ծիծաղն ունի  
հարաժամ,  
Են վոր վեպի սես դյութիչ բաղար ունի շարե շար՝  
Միջին իունկ և արար թուր, գերի, ծարիր ու  
շպա՛ր...

Յեկ հուսկ լեցուց նա նավերն՝ ամբողջ կախարդ  
Արևելք —  
Գոհար, վարդյուղ ու շպար, մետաքս ու շալ —  
ամեն բերք,  
Խունկն ու հաշիչն Արարիո, նուան դինի տիկ առ տիկ ·  
Բացավ ճերմակ առաղաստ — մինչեւ դշոս Վենետիկ ·  
Հո՛ն, ուր չքեղ կը կանգնի մարմար ժամն Սուրբ  
Մարկոսի,  
Ծովի ու յոթ ցամաքի դանձը այնտեղ կը հոսի ·  
Հո՞ն կը փութա դոժն ու կոմս, արքա և լորդ  
իսաչակիր,  
Ծպայալ խաներն իրանեն, ամիր, սուլթան ու  
ֆառ' քիր :

Վաղրիկ բեռներն իր ծախեց, Հո՛ն շահելով մեկին  
սա՞ս ·  
Բեռցուց նավերն՝ անթիվ դենք, արձան, պատկեր ու  
կերպաս,  
Հասավ փարթամ Բյուզանդիոն, ուրիշ սա՛ դիրն  
ճամբեց տուն ·  
«Մայրիկ, փառքով կը դառնամ — ապրի՛ դուշակն  
իմաստուն . . .»

X

Բակի նոնենին յոթն անգամ բացավ  
Շիկնոտ ծաղիկներ՝ ժպառող հույսի պես ·  
Ու Նվարդ դաղտնի՛ իր սերը լացավ  
իր դալար սերը — նուան ծաղկի պես :

Յոթն անդամ ծփաց հունձքը ծովի ի ծով  
Դեղին հասկերով՝ սրսուռ վոսկու պես.  
Յեվ անբախտ թամար ի զուրու կսկիծով  
Բապասեց վորովուն - վոսկի հունձքի պես:

Յոթն անդամ ճութերն կախվեցան թուփին՝  
Ժպտող կույսերու աչքերուն նման.  
Բայց գինու թասերն գուրս չելան տուփին՝  
Կարմիր ոծելու իր գարձի ճամբան:

Յոթն աշուն մեռան մարմար ճյունի տակ,  
Յոթը ճյուն ծածկեց ճամբան իր գարճին.  
Յեվ անոնք գրկած մեկ վառ հիշատակ  
Մի զույգ ուռենու պես յերկար լացին . . .

Շինեց արագիլն իր բույնը նորեն,  
Ծաղկավ նռնենին ես ել ութն անդամ.  
Բարի գիր յեկավ Հոռոմի յերկրեն.  
Վաղրիկն եր գրած. «Մա'յր, շուտով կուգամ . . .»

## XI

Վաղրիկ թողուց Ստամբուլ յերբ դես յեկած չեր  
զատիկ.  
Բուռն եր իր տան կարոտը՝ ինչպես թաթառն ե  
սաստիկ,  
Վոր իր առջև ամեն բան կընե փշուր և ավա'զ.  
Չըրընդ, զըրընդ, քարվանը տուն կը դառնար վաղն է  
վազ:

Փութով հասավ նա կարին, գնաց Արծըն իջալ Վան,  
Յեկ մոտ դռան Դավիթի փուց անծայր իր քարվան.  
Յոթը խավիշիկ դերիներ վրանն անոր կանդնեցին.  
Հարյուրն՝ դանձի բեռները սարի նման դիկեցին:

Ամբողջ դաշտը կոներու մի քաղաք եր դունապեղ.  
Եսունկ կը ծխար ամեն դի, լույսեր կային ամեն տեղ.  
Պահակ եյին կանդներ հոն քառուն կտրիճ դինավառ  
Յեկ շահտ դերի ու ծառա, վորոնք համրելն ե դժվար:

Կաճեր լինչպես փոթորիկ՝ խրխինջն արար, ձիերու,  
Բաշերն ոծած լուսնկան, աչքերն նման բուցերու.  
Ռւղտերն եյին տարածված վորպես ամպի դորչ  
Յեկ մոտն անոնց՝ ուղտապահնն մի նոր աչխառէ  
կերաղեր:

Յոթը գուսան ձեռք առին իրենց քնարն ու բանդիռ.  
Յեկ վեպ ու սեր յերգեցին, արկած ու ձին  
ամպաթիռ,  
Պանըուխա տաղերն վողբաղին, մինչի բոլոր.  
աչքերն  
Լայը մարդրիտ առ մարդրիտ վար հուեցակ  
մեղմորեն:

Հետո պարերգն սկսավ շուրջը վոսկի խարույկին-  
Ծնծան ու դավին հնչեցին, պար բանեցին այլ ու  
կին.

Դյութված քաղաքն եղ զիշեր մնաց մինչեւ լույս  
արթուրն .

Ինչպէս պատմեմ յես իր վասոքն , իր գանձն ու իր  
ճռիսություն :

Վաղին տա՛սն որ կեցավ Վան , բայց տաս տա՛րի յեր  
կարծես .

Յերեկն առողջութն իր կըներ չնորհալի , ժողովերես .  
Բայց յերբ կուգար մութ գիշերն՝ զնդան կըլար  
անկողինն

Անոր վոր կուռքն եր գարձեր զլարթ քաղքի  
ամբոխին :

Մի սա՛ր միայն կը բաժներ այն իր պաշտած  
Նվարդեն .

Դոփյուն մը . . . յեկ արար ձին տուն կը ձղեր զինք  
արդեն .

Սակայն յերկյուղն աղետի մայնքան հսկա ու ցավոտ  
Ան իր մահճին կը գամեր մինչեւ վոսկի առավոտ :

Աերը սկրուն Նվարդի՝ Աստծու կրակ եր կտրել ,  
Աիրան իր՝ շամփուրն եր անցեր որ ու գիշեր կը  
մըկեր .

Ել չի կրցավ դիմանալ եղ բարկ , անձար կրակին .  
(Պայծառ մնա՛ հորդ տունը , վոսկի ճրադն իր  
հարկին) :

Ամսի թիվն եր տասներեք. որը կըլլար իրիկուն.  
Կանչեց պետն իր քարվանին— Դիսակն բարի ու  
լողում,  
— Վարողե՛տ, ըստի, լաճերուն բաժնե մեկ մեկ ճռ'լու  
քսակ,  
Ճամբառ հանե՛ քարվանը յերբար ծաղի արտոյակ.

Այս հեծավ իր սկ ձին, մի բա՛ռ մնջեց զորովի.  
Բայց նժույդն իր ոռւնգերն, տնկեց վիզը կորովի,  
Քակեց նըման ջրվեժի անզուսպ հորձանքն իր բաշին-  
նինուս յեղան մութին մեջ հեծյալն ու ձին ու  
փոշին...

## XII

Մա՛յր, յերեկ գիշեր չա՛ր յերազ տեսա.  
Եռ'լթքն եր. չողերով մեր այգին հասա.  
Խաղողն եր հասեր թուփի թուփ առա՛տ  
Ժպտի պես շիկնո՞տ, քաղցր ու վոսկեհատ...

Վաղրիկս ել ճերմակ ձի նստած տեսա  
Շքե՛ղ ու զվարթ վորպես նոր վեսա.  
Արագ զսուլթով մտավ մեր այգին —  
— Ծարա՛վ եմ, ըստի, նվա՛րդ, իմ անդին...

Յոթն արծաթ փարչով քամեցի դինի.  
Ուր ծորեց սի՛րտս ել - լացող ուռենի.  
Սպակ լեցուցի յերկու վոսկի թառ.  
— Դու այգին հասար դաժա՛ն, վաղն ի վազ:

Վաղրիկի նժույզն տեսքեղ խրտչեցավ.  
Առ ձեռքի դինին թասեն թափեցավ  
Յել կուրծքը ներկեց մի թարմ վերքի պես -  
Զին ել կարմրեցավ արյունն ե ինչպես :

Դուն ել սելերով պարել սկսաբ -  
Աջ ձեռքը եր կարմիր արյան հավասաբ .  
— Պարի՛ր, իմ հարսնիկ, թո՛ղ վորդիս ցնծա՛ -  
Ըսիր ինձ, հանկարծ քունես արթնցա՛...

Յերազդ ե բարի, իմ սիրուն նվարդ,  
Գիշին ինդուք ե, ու ձին ել մե՛ծ բախտ.  
Քընի մեջ արյունն ու վերքն ե բա՛րի.  
Գուշա՛կն ե ըսեր. անցավ յոթ տարի:

Ել չուսով կուգա վորդուս կարավան,  
Կանցնի Բյուզանդիոն, կիշնե Արծն ու Վան  
Ու բարձած վարդյուղ, զարդ ու անթիվ գանձ  
Կուղա քեղ կարգել բամբիչ փառապանձ :

### XII

Գիշերն ուշ եր յերր Վաղրիկ հասավ Վոստան  
Ճառաշամ ամբողջ կը բուլեր լելակ ու վարդ ու  
Փշատ.  
Ծաղկեր եր թուփ ու պարտեղ, ծաղկեր անուշ  
լուսնկան,  
Ծաղկեր եր իր հոգուն մեջ սերի վարդը դյութական :

Բլրի լանջին յերեցավ իրենց տունը հնամի,  
Վորի գլխեն անցած եր հաղար փորձանք ու քամի,  
Բայց դեռ կանգուն կը մնար մի ժայռի պես  
անսասան . . .  
Վաղիկի մնջեց . «Ո՞վ իմ տուն, ախտքի որերդ ե՛լ  
Հասան» :

Մի քուրմի պես յերկյուղած՝ բացավ բակի դուռն  
արույր .  
— Ներսն եր փթթեր քափուր վարդ՝ շիկնոտ ինչպես  
ե համբույր .  
Բացվեր եր բույլ նունուֆար՝ աստղի նման՝ գուղին  
շուրջ .  
Բակը դըրախտն եր անձառ՝ համակ փթիթ ու  
անուրջ :

Փութով նժույզն իր կապեց ամուր ողե մը յերկաթ,  
Ուր ձին դուռեն դյութական ըմպեց աստղ ու լուսնի  
կաթ,  
Յեւ դով ոյուքեն վար թափած նոան թերթեր  
կոխելին՝  
Աիրտը նուռի պես փթթած՝ Վաղիկի մտավ տան  
դոնեն :

Ինչպես ստվեր՝ սանդուխեն Վաղիկի սողաց դեպի  
վեր,  
Ենյակն յելավ Նվարդի՝ անձա՛յն ինչպես մի ստվեր-  
իւ քովն անոր սնարին կեցավ լուռ ու հելադին .  
Լուսնի շողը կաթեր եր մարմար աչքեն երդիքին,

Յել շուրջ դեմքին Նվարդի լույսե պսակ եր կապեր .  
Սել մաղն անոր ծովի պես բարձին վրա յեր թափեր .  
Դեմքը՝ վճխո յերաղի և ըյուր թովքի եր մատյան ,  
Վոր մեծ դուսան մ'եր դրած և այն կնքած

Հայլիսյան :

Յովը տարմա յերակն եր մարմին առած իր առջև .  
Ե'դ դեմքն ուղղած իր ճամբան՝ ինչպես անմուտ  
վառ արև ,  
Ե'դ կեռ հոնքերն եր հիշած յերը կապած եր ծխածան .  
Եղքան սիրուն՝ չեր տեսած վո՛չ մեկ պատկեր ու  
արձան :

Այնչափ մեղմ եր իր շունչը , կարծես յերբեք չե՛ր  
չնչեր ,  
Բերանն հասուն մի նուռ եր , կարծես միս ու  
արյուն չեր .  
Կոսկերն իր նուրբ՝ ամպի պես ծածկեր ելին իր  
աչեր .  
Հրեղեն կարափան եր , վոր մի կաթ լճի ափին կը  
հանգչեր .

— Նվարդ , Հողյակ , իմ անդին , Վաղրիկ մեղմով  
վախսաց .  
Մոլար ճամբորդ ե յեկեր , բա՛ց ծով աչքերդ ու վեր  
կա՛ց .  
Սիրու մե՛կ բառ խոսե ինձ , մեռնիմ տաճար քո  
բերնին —  
Ապա դողով սղասեց՝ ինչպես լացող ուսենին :

Նվարդ աչքերն իր բացակ, եղ ինչ անճառ բերկու-  
թյուն.

—Վազրի՞կո ես դու, թե՛ յերազ, քո՞ւն եմ արդյոք,  
թե արթուն.

—Վազրի՞կո ե վոր քեզ կուզա՝ թողած իր գանձն ու  
քարվան.

Նվարդ վոտքի յել յելած՝ ինչպես լույսի  
շատրվան...

Յել գերկն ինկան իրարումի զույդ շողի հանգունակ,  
Բերան բերնի ծաղկեցան ինչպես յերկու բարունակ.  
Ապա անխոս դեմ առ դեմ անհատ իրար դիտեցին—  
Մի զույդ սիրող լուսահավ՝ մթուն ձգված  
առանձին...

Վազրիկ հանեց մի մանյակ՝ ամբողջ մարդքիտ ու  
սուսակ

—Յել այն կախեց Նվարդի կարապ վըղեն սպիտակ.  
Ու յոթն անդին մատանի՝ յոթը տարվա իրը նշան՝  
Անցուց անոր մատները քնքո՞ւշ ինչպես ջրշուշան:

Հանեց պսակ մի չքեզ՝ տասը տատկե հորինված՝  
Մեջտեղ շողակն մի արև, ասես սիրով հրդէհված,  
Յեկ այն դրապ Նվարդի սիրուն գլխին, և ըստվ.  
—Իմ սե՞ր և իմ թագուհի՛, փառքի մեծ որը  
հասակ...

—Վազրիկ, տանջված իմ գլխին դո՞ւ ես լոկ թագ  
ու պսակ.

Ու փառքս՝ վորպես բարտենի ձղվող դալար եղ  
հասակ.

— Բերել եմ քեզ անբավ գանձ, ապրանք, դերի ու  
գոհար.  
— Սիրտըս միայն քեզ կուղե, ի՞նչ ընեմ գանձն ու  
աշխարհ...

Դիշերն ուշ եր, յերբ անոնք խոր քուն մտան լուսնի  
հետ—

Բացված յերկու թարմ կոկոն քափուր վարդի  
հոտավետ—

Վոր չե՛ս դիտեր թե արդյոք պիտի բացվի՞ն վաղ  
նորեն՝

Առանց անդարձ խլելու սիրող ձեռքե մանորեն...

#### XIV

Լուսաստղն յելած եր արդեն ինչպես կանթեղ  
ադամանդ,

Ու կը վառեր տրտմորեն վերև եղ տան հնավանդ,

Զլի պա՛հն եր քարվանին. նժույդն՝ սեդ վիզն իր  
տնկեց,

Ու բուռն վաղքին կարոտը մութին մեջ զի՛ւ վրնջեց:

Թամար ցատկեց իր տեղեն—խրիսինջ իր տան  
բակեն եր...

Վո՞ր իւնթ ասպետն եղ ժամին իրեն տուն հյուր եր  
յեկեր.

Կամ թե չըլլա՛ Վաղբիկի քարվանն եր ան սպասված,

Վոր չուտ իր տեղն հասնելու համար մթով եր  
քալած...

Այիրտը դողով՝ հեղագին թամար իջակ իրենց բակ, Ուր կը հնչե՛ր սալին վրա, արար ձիու կուռ սմբակ. —«Վորդուս ձի՛ն ե սա հրեղեն, մեռնիմ կամար իր վըղին. Քարվանն ել դո՛ւռն ե անշուշտ, անթիվ դանձով միասին»:

Բացակ բակի դուռն արույր, վոր չոր լացով ճըռճըռա՛ց, Դո՞ւռն երս ամայ-ծառերու սոսակին անդամ եր լուծ. Հեռվեն կուգար դետի յերգն—ամբողջ կարուս ու սարսուս. Թամար՝ շփոթ՝ յետևեն դոցեց բակի ծանըր դուռ...

—«Յեկողն յեթե վաղիկն եր, ո՞ւր են քարվանն ու բեռներ. Եքեղ վորդի՛, հեգ մայրըդ, դարձի ճամբիդ թող մեռներ. Վորի՞ն ե են ու նժույդ... ո՞վ Տեր, մի՞թե հնար ե վոր հեղ ու քաղցր հարսնուկըս վորդուս դեմ դավն այս լարե»:

ՑՄի՞թե իր լացն ու հառաչ կեղծ են յեղեր ու պատիր, Կեղծ են յեղեր պահքն ու ծոմ. մի՞թե ժամը. Ճնրադիր Նստած՝ փոխան աղոթքի՝ ոտար սե՛ր ե կարդացեր. Ո՞վ ե տմարդ են ասպետն, վոր դավիկս տեղն ե դողե՛ր...»

«Անոր սիրով տանջըլի վորդիս ամբողջ յոթ տարի .  
Կուրծքը բանա բուքին դեմ, դլուխն դշնե ժեռ քարի,  
Խոկ իր սերի առարկան, ծոցը բանա գողերուն,  
Ծաղլու վորդիս, կյանքին թույն խառնե, հացին եւ  
արյուն...»

«Ոտար' աղջիկ, դու մեր տուն մտար վորակես  
հրեշտակ, դարունն ես ծաղկած, արևն ունիս կոպիդ  
տակ.  
Հիմա չար դեն ես, մեր սիրան ամուսը բռնած  
կը քամեն.  
Խաբոված վորդի՛, արևառ ճակտիդ մատաղ լինիմ  
յես...»

Թամար զդոււյշ հեվալեն սենյակն յելալ իր հարսին  
Շնչառ հասավ բարձին քով, վորի վրա միասին  
Յերկու դլուխն նշմարեց և ուր լսեց յերկու շունչ.  
Մի դուղ ինկավ ծունկերուն և իր հոգուն մեջ  
մոռնչ...

Մի պահ ուղեց նա նետվիլ վրա պատվի եղ գողին,  
Ակուներովն իր պատռել կոկորդն հարսը խաբողին,  
Յեվ կամ ճանկել կյանքն անոր՝ ճագը խլմած  
վագրի պես,  
—Վախցավ, վոր իր ուժը դինք կրնար դակել  
վերջապես:

Համելա՛րծ իր քով, պատեն կախ տեսավ զրահ ու  
գենքեր  
Մի դանձի ողեա՝ իր ձեռքը արար դաշույն մ'եր  
ինկեր,  
—Աղտն, վոր դու տանս քսեցիր թող այն սրբե  
քո արյուն,  
Լսավ. անոր կուրծքին մեջ խրեց հասու եղ  
դաշույն...

Ցավոտ մոռունչ մ'եր պոռթկաց զարնված հսկա  
եղ լանջեն  
—Նվա՛րդ, սրտիս ի՞նչ կըլլա. զանգերն ինչո՞ւ  
կը հնչեն.  
Նվարդ ցատկեց իր տեղեն. «արյո՞ւն, արյո՞ւն,  
ո՞վ ասաված,  
Վաղրի՛կ, դո՞ւ ես կը տքաս. դո՞ւ ես արդյոք  
զարնված...»

—«Կուրցե՛ք աչքե՛ր, խլացե՛ք իմ չար, անտեր  
ականջնե՛ր.  
Կուրծքը, վոր յես ոլատոեցի, մի՞թե դավկիս հաղթ  
լանջն եր.  
Նվա՛րդ, վառի՛ր ճրագը, մեր տան ճրա՛գն և  
մարո՛ղ...  
Ո՞վ և լսել վոր դասնա մայրն իր վորդու սե  
դլո՞ղ...»

—«Ես ի՞նչ աղու կը հնչեն զանգերն արծաթ՝  
քարվանիս.  
Նվարդ դուռեն դո՞ւրս նայի՛ր... ինչո՞ւ ապշած  
կը կայնիս...»

Մոմի շառ լույսն եր ինկեր դեմքին վրա վազրիկի·  
Աչքերն ելին նվազուն նման մարող կրակի:

Կարմիր դաշույնն ձեռքին մեջ թամար անշարժ եր  
կեցած,

—«Անսիրտ աստված, անե՛ծք քեզ... Գուշակն եսպես  
չե՛ր պատմած.

Վոսկի ու փառք կուղեյի—սև ու արյուն կամեցար·  
Վորդիս գրկել տենչացի—դահիճն ըրիր ինձ  
խելամը...»

Նվարդ սեղմեց իր բռունցքն, վորմե արյուն  
կը կաթեր.

Կարմրեր եր աչքն՝ արյունեն, կարմրեր՝ ճերմակ  
իր լաթեր.

—«Զեռքըդ չորնամ, սևսիրտ կին, ինչո՞ւ կուրծքըը  
ել չի բացիր.

Դու վոր լոկ փառք փնտրեցիր ու հարսդ ել բո՞լ  
կարծեցիր...»

—«Մայլիկ, այստեղ մոտեցի՛ր... տե՛ս իսոնջ  
վորդիդ ե յեկեր...  
Ի՞նչ... քեն ունիս ինձի դեմ... հոգյամը, ինչո՞ւ  
յես վղձեկեր»:

Նվարդ խեց սնտուկեն թանկ ու ճերմակ մի սալան,  
Անով փորձեց կեցնել քանդվող կրծքի շատրվան...

—«Եստե՛... Նվամըդ, բարձիս քով... անո՞ւշ նայե  
աչքերուս...

Զըրընդ... զըրընդ... կը լոե՞ս... բերե՛ք քողեր  
վոսկեհյուս...»

զոհա՛ր բերեք տուիերով . . . և ել Հինան ու  
Հարդի . . .  
Բռնի՛ր ձեռքես . . . վառեցի՛ք վուկի ջահերն ի՛մ  
վառքի . . .»

«Բա՛յց դու կուլա՛ս . . . պաշտելի՛ս, դեմքիդ քողն  
ի՛նչ Հարմար ե . . .  
Աչքերդ անդամ մ'ել տեսնեմ . . . ձեռքըդ սառ ու  
մարմա՛ր ե . . .  
Զըլը՛նդ, զըլը՛նդ . . . բաց . . . դուռը . . . քարվանն ե  
այն Հևապահ—  
Լույսերն . . . ինչո՞ւ . . . մարեցի՛ք . . . ջո՞ւր . . .  
ջո՞ւր . . . ցո՞ւրտ ե . . . ու խալար . . .»

Վազրիկ բերանն իր կնքեց ինչպես մի տուփ  
դյութական . . .  
Փակեց աչքերն կարոտած՝ մահի քնով մշտական . . .  
Նվարդ դիտեց այն յերկա՛ր, անլաց հեծքով մը  
քանդիչ . . .  
Ապա հանկարծ արձակեց սո՞ւր ի վայրադ մի  
քրքիջ . . .

Թամար մե՛կ մը նայեցավ ձեռքի արար դաշույնին—  
զե՞ , այդ քրքիջն ալելի՛ հատու յեր ու մահագին,  
Եեկ ել վորդուն նայեցավ, վոր մե՛ծ քամիուր  
վարդի պես  
վերքը կրծքին՝ կը սպանկեր. հա՛րսն ել սոխակն եր  
կարծես,

Վոր եղ վարդով խելահեղ՝ կերգեր ու պար  
կը դառնար.  
Մերթ քող ձգած իր գլուխին՝ լուռ ու անշարժ  
կը կենար.  
Մերթ ել ծռած վազրիկի ականջն ի վար  
կը մնջեր.  
«Վե՛ր կաց, հողուս սիրական, գուշարկն եսպես  
պատմած չե՛ր...»

Նորե՛ն պարել կըսկսեր. «մա՛յլ, տե՛ս թիթեռն ես  
թռեռն նախշուն են ինչպես աչքերն անուշ՝  
վազրիկի...»  
Յեկ կը վազեր շուքի պես նվարդ անոր յետեռն՝  
Վոր իր կյանքի յերա՛զն եր, ինքն ել՝ անոր  
խենթ գերին...»

—«Գլխի՛դ փուլ դա յերկինքըդ, քա՞ր եմ, ինչպե՛ս  
դիմանամ,  
Անրախտ նվա՛րդ, հերի՛ք ե. ներե՛... ա՛խ, թող յնա-  
կուրինա՛մ...»  
Մեկ ել կուրծքին մեջ խրեց դաշույնն եղ սո՛ւր,  
արյունուտ.  
Երմունջ մըն եր... Յեկ թարմար գնաց պառկիւ  
վորդուն մոտ...»

Իսկ դեռ նվարդ՝ անտարբե՛ր իր խենթ պարը  
կը դառնար.  
Մերթ ել կուլար վողբագին ինչպես ջարդվող  
մի քնար.

կամ զիլ ու բարձր կը քրքչար. «Գուշակն եսպես  
պատմած չե՞ր».

Մերթ ել թիթեռն բանելու տենչեն կարծես  
կը թռչեր...

## XV

Անցավ գիշերն ահավոր, վորպես տեսիլ մի ցավոտ.  
Ու վրա քաղքին ծաղկազարդ՝ իջավ վոսկի առավոտ.

Զույդ զույդ սարեկ ու ծիծառ՝ ծաղկուն ծառերն  
ըրին թառ

—կտուց կտցի մնջելով հնչուն սիրերդ մը անճառ:

Ամեն մի տան յերդիքեն յելավ ծուխը ծիրանի.

Վա՛ռ եր ամեն մեկ թոնիր, ամեն ակութ ընտանի.

Միայն ուսիրտ Նվարդի տունն եր անծուխ,

անկրա՞կ.

—Գրողն զուռեն եր մտեր և այն թողեր ավերա՞կ...

Նվարդ մաղերն փետտելով դեպի Վաղրիկ կը

խուժեր—

Վստահ՝ վոր բարկ համբույրով պիտի խոր վերքն  
եղ բուժեր.

Յեվ են շքեղ պարմանի արյունն սառած

շուրթերուն՝

իր խենթ պարը կը դառնար վորբուկ յեղնիկն  
եղ սիրուն:

Մերթ կը վաղեր դեպի բակ, հո՞ն ուր նժույգն եր  
կապած.

Ճակատն անոր կպագներ՝ բաշին հետ մազն իր  
խառնած,

«Քաջիս հրեղեն յերիվա՛ր, հիմա կելնե իմ ասպետ,  
Յեղ կթռիք դեպ աստղեր՝ ինձ ել առած ձեզի  
հետ . . .»



Հեռվեն, Վահա ճամբի կողմ յելար փոշին վոսկեղեն,  
ինչպէս մի ամպ յերկնքի դաշտին վրա լուսեղեն,  
Աւ հետ անոր զըլնգուն զողանջն արծաթ զանդերուն,  
Յեղ հետ անոր վըրընջյունն՝ հաղար արար  
ձիերուն . . .

Մոտիկ բանող մշակներն մոռցան ցանքերն ու  
պարտեղ .  
Յերբոր քարիանն Վաղրիկի հպա՛րտ յելավ  
ի հանդես .—  
Զըրընդ, զըրընդ մոտեցավ. Վոստան մարդե  
դատա՛րկ եր .  
Այժեն դեմքի զարմա՞նք կար, ամեն շուրթի ել  
դովքե՛ր :

Հովիվն կըսեր—«Թիվն ասոր մե՛ծ ե նույնիսկ  
աստղերենն,  
Յերբոր լուսնակն ե մտեր, հատերն յերբ դեռ  
քնի՛ր են . . .»  
Ասպետ մը թե—«Սողոմոն եսքան դանձ չե՛ ունեցած».  
Նավորդն. «Ասոր չափ ավաղ վո՛չ մեկ ծովեղը եմ  
տեսած . . .»

«Յերնեկ են տանն, վոր տերն է եսքան անձառ  
Ճոխության»  
Ու կը քալեր դեռ քարվանն, վոր ծայր չուներ ու  
վախճան.  
Յեկ վողջ Վոստան կունկնդրեր կարծես վեպի մը  
կախարդ,  
Վոր հին դբքե մ'եր յերգած վարպետ դուսան  
մ'ալեղարդ:  
  
Ու մեծ գետի մը Հման քարվանն անվերջ կը հորդեր՝  
իր ծոց ժողված անթիվ դանձ, բուրմոնք ու շալ ու  
զարդեր,  
Ճողը հասալ Վաղբիկի անտեր դրան առջև զո՞ց—  
իւ հոն կեցալ կազմելով մի ծո՞վ ծփուն, ալեկո՞ծ:  
  
Գիտակ իջալ նժույգեն. դեմն եր բակի դուռը մեծ.  
Թակեց վակ դուռն ամրակուռ—ներսեն լոկ ձին  
վրբնջեց.  
Նորեն թակեց անհամբեր—զո՞ւնն եր միայն վոր  
կերդեր.  
Յերբորդ անդամ վոր թակեց—Նվարդ առջեն եր  
կանդներ:  
—«Վողջո՞ւյն, չքնաղ տիրուհի՛, քարվանն բա՞րով  
հասեր ե.  
—«Կեցի՛ր, Վաղբիկս յես կանչեմ—վարդը սրտին՝  
պառկե՛ր ե.  
Հեռո՞ւ ճամբեն նա կուդար՝ տանջված ու շա՞տ  
հոդնած եր.  
Մայրն ել կարծեց թե ոտար մ'եր վոր ծոցս  
պառկե՞ծ եր . . .»

Դիսակ չփոթ նայեցալ զարնված եղ վորբ յերեյին .  
Մաղերն ալիք առ ալիք մինչև ծունկերն կիշնեյին ,  
Դեմքն եր դունատ մոմի պես , կարմիր եր լաթն  
պալխտակ .  
Նայլածքն եր մութ ու պարապ՝ ինչպես անդունդն  
անհատակ :

—«Ի՞նչ կը նայիս ձեռքերուս , պարսիկ հինան ե  
հարդի .  
Պատահք բերի՞ր մայրիկին , վոր հոն անձայն  
կը պառկի՛ ...  
Տե՛ս , տե՛ս թիթեռն ի՞մ վոսկի—լանջը կարմիր  
կակաջ ե .  
...կեցի՛ր , ձա՞յնն ե Վազրիկիս , զարթնե՛ր ե ...  
ինձ կը կահչէ՛ ...»

Քսակ բուքի պես արա՞գ խուժեց սենյակն աղետին .  
Արեն ինկած եր յերդեն , և վողջ մահիճն ու գետին  
կապեր ելին լերդ արյուն . Թամար պառկած  
վորդուն քով՝  
Անոր ճակատ կը չոյեր կարծես սառած իր ձեռքով ...

Վազրիկին ել բա՛ց աչքերով դարձեր եր դեպ  
լուսամուտ ,  
Ուրկե քարմանն կերենար՝ սոսովա փառքով  
ոճանուտ .  
«Վե՛ր կաց , անուշ սիրակա՞ն , անծայլ քարմանն ել  
հասակ» .  
Կահչեց նվարդ . ու մեկ ել՝ իր խոր մահպարն  
սկսակ ...

Գիսակ, վոր լո՛ւռ՝ Նվարդին մինչեւ դուռն եր  
հետեած,

Տեսակ արյունն ու վերքը, տեսակ կարմիր

արարված—

Յեկ հասկցակ թե աղետն շանթի նման իջած եր.

Գիտցակ ինչո՞ւ սիրահավն վարդը լալեն

դժված եր . . .

Լալով մահճին մոտեցակ եղ սեղ բարի ծերունին.

Ու գիրկն առած դանդրահեր դլուխն՝ անբախտ

պարմանին

Ոծեց մի հոր համբույրով՝ սառած ճակատն ու

այտեր.

«Ինչո՞ւ ինձ չը լսեցիր, ինչո՞ւ թողիր տունդ

անտե՛ր . . .»

Գիսակ կանչեց քարվանեն յերկու հզոր գիտնական,  
Վորոնք կախարդ դեղերով և թանկ յուղով

պատվական՝

Մորն ու վորդու դիակը հայետ անեղծ դարձուցին,

Յերկու կույսեր ել անոնք փարթամ լաթով

պճնեցին :

Ապա բերին հոտավետ փայտե յերկու մնտուկներ—

Մե՛կն եր բանված սատափով, մե՛կն ել վոսկով

ծեփուն եր,

Ու հոն ծալ-ծալ մետաքսի մեջ և խնկի ու վարդի

Դրին թամար, ու վաղրիկ, վոր սիրտն եր հեգ

նվարդի:

Հետո ծաղկով զարդարած եղ զույգ հարդի  
սնտուկներ

Բարձին յերկու ուղտերու . յերկու տասնյակ  
խայշմկներ

Անհուն սուրբի նման՝ սկը, անոնց պահակ կանգնեցան .  
Աւ յերբ միջինք չեր յեղած՝ ճամբա ինկավ կարավան :

Յեկ կը փովեր զողանջը հաղար արծաթ զանդերու՝  
Տրտո՛ւմ ինչպես յեղերերդ, թաղե ի թաղ և հեռո՛ւ .  
Յեկ նուրբ փոշին խունկի պես կելներ վոլոր ,

ողապա՛ր,  
—կարծես մահի թափորն եր լալով ինկած  
ճանապարհ . . .

Մեկ ճոթն անծայր քարվանին արդեն դաշտը  
հասած եր .

Մեկալ ճոթն ել դեռ անտեր դուռին առջև կսպասեր .  
Ու հարց կուտար ամբոխը ամեն մարդի ապշահար—  
«Քարվանն ինչո՞ւ յեր յեկած, ինչո՞ւ արագ խույս  
կուտար» :

Վերջին ձիերն ել թողին դուռն եղ մոայլ ու անտեր .  
Բայց դեռ նվարդ՝ տենդադին իր բակն ու տուն  
կը դիտեր ,

Վոր իր սերի ու վշտի ամուր վանդակն եր յեղած .  
Բաժնել զինք այդ անցյալեն, մի՞թե հնար եր,  
աստվա՛ծ :

Մինչ կը հոսեր քարվանը՝ մի գետի պես վոսկեջուր—  
Արեն թեքած եր սարին, կարմրեր եր դաշտ ու բլուր՝

Եռլունկ բացված Վաղրիկի լանջին նման վիրավոր .  
Շորոր կերթար գեռ քարվանն ինչպես մի ամպ  
հեռավոր :

Նվարդ իր տանն նայեցավ վոր ել կնքված  
դամբանն եր ,

Աղա կախարդ քարվանին , վոր հետն առած կը տաներ  
Վաղրիկն անուշ և արձակ մազերն հովին ցանելեն  
Խուժեց դեսկի կարավան , վոր խույօ կուտար զնդավեն :

Ի՞նչ վոր յերբեմն նա ուներ — Անցյալն ու սեր ու  
յերաղ —

Յեկ ինչ վոր եր իր անձը , և իր պատկերն հեղանազ —  
Հանձնած եր նա քարվանին , վորի տրտում ստվերն  
եր —

Անոր սլիտի հետեւեր , վոր մեկ ճամբեն այն  
քալեր ...

Յեկ կը զնդար հեքյաթը հազար վոսկի զանդերուն —  
Միրու կանչին պես դյութիչ , մի վողի պես  
դալարուն .

Ու կը վաղեր չուքի պես նվարդ անոր յետեն ,  
Անձայր ճամբեն , վոր արդեն վորը կը մնար  
արեն ...



## ԼԵՅԱ ՅԵՎ ՄԵԶՆՈՒՆ

### I

Աարի գիշեր — յերա՛ղ՝ հյուսված աստղերով,  
Թուլիչ բույրի և հեշտանքի անտակ ծո՛վ,  
Ցելավ ծածկեց հանդերն ու գյուղն ու բլուր  
Ցել հեշտ քնին ամենքն ըրավ անձնատուր:

Մշակ Մեջնուն — անհայր վորդին Դադոյին  
Քուն կը մտներ հանդի դատեն եր դարձին.  
Ցեվ մի աղջիկ դալար սալիի ուռի պես —  
Ցերաղին մեջ, նաղանքներով կուզար տես:

Կարծես մի զույգ կաքավ ելին լուսածին —  
Թեև վոսկի լույսովն բարի արեին  
Իրարու քաղցր աչքերուն մեջ տիրանույշ  
Ցեվ վոչ մեկը իրեն պատկերն տեսած եր:

Ու հմայքեն եղ յերաղին հրեղեն՝  
Ցեվ կարոտեն եղ աղջկան լուսեղեն,  
Մեջնունի սիրտն ամբողջ որը կարյուներ  
Մի յեղնիկի լահջին նման կարեեր:

Պատերուն տակ խոփերը ժանդ կապեցին  
Ու բանտի պես փակված մնաց գոմին դուռ.

Դաշտի ճամբին սայլերն ել չի ճռացին,  
Յեկ ցանքերը մնացին չոր ու անջուր :

Մեջնուն զարնված, վորը կունկին եր նման,  
Վոր անկարող իր յերամին հասնելու  
Մի լճի յեղը արյունելով կուդա ման  
Որհասական — ու յերամեն շատ հեռու :

Նա անտառին յերգեց իր ցավին ահագին  
Յեկ իրեն հետ լացավ իր սազն աղեթել.  
Ու թերթերը՝ թոշնած դողեն եղ յերդին՝  
Վա՛ր թափեցան ինչպես մեռած թիթեռներ :

Նա իր վերքը բացավ գետին ու ակին.  
Յեկ ափերուն վրա ծաղկեցան տրտմագին  
Վայրի վարդեր ու կարմրագեղ կակաչներ —  
Ինչպես վերքե կաթող արյան վառ շիթեր :

Յեկ Մեջնունի սիրող մայրը սևաբախտ,  
Վոր իր վորդու թագուն եղ վերքն եր տեսած,  
Մի առավոտ անոր վզին նետվեցավ.  
Մազերը խոխիլ ինչպես անտառն հողմակոծ՝  
Անոր ուսերն ի վար ինկավ լալագին :

«Ով մահի մեջ քալող հրեղեն Մեջնունիս  
Տրտում ստվե՛ր, ասա քո մոր ցավագար,  
Մո՛րդ, վոր քեզ հետ չիրմե չիրիմ կը տանիս.

Մորմե՞դ ե լոկ պիտի քո վերքը պահես,  
Վորմե լեռը հազար կակաչ ե բացեր .

Լոկ ծոցի՞ս մեջ լացըդ թափել կը մերժես,  
Վորմե հովը հաղար հառաչ ե հյուսեր:

Ա՛խ, եդ վերքը, վորդյա'կ, ծանը ե քո սրտին,  
Անոր կեսը թո՛ղ սրտիս մեջ յես կըեմ.  
Վշտիդ բեռեն վարդ հասակդ կը կըի.  
Թո՛ղ վոր կեսը յես ուսերուս բեռցնեմ...»

Մեջնուն բացալ իր սիրտը մորն, ու թողուց  
Վոր իր վերքի անդունդներուն նա նայի.

— «Քներ եմ թե չե՛, իմ անրախտ մարե,  
Լուսե մի աղջիկ — վարդ ու ամբարե  
Կաքամի, քելքով, յերկնային վելքով  
Անուրջի պես ջինջ կը կայնի իմ քով...

Բլբուլի նման նա կը ճլմլա —  
Յերեսն ե արե, չըթները՝ լալա,  
Հենց բոնել կուզեմ — ինձմե խույս կուտա —  
Հըեղե՛ն յերազ — և կա' և չկա'...

Կարոտես կառնեմ շահենի թեեր,  
Ա՛յ, դու սե, չա՛ր բախտ, քո տերը մեռներ —  
Կը համիմէ թե չե — մի ծով խոր, անծեր —  
Կը բացվի մեր մեջ — կընկնին իմ թեեր...

Կրա՛կ եմ ընկեր, սեավոր մարե՛,  
Սիրու քոցն յելեր ու հոգիս կերե.  
Գիշերը վոր դա — կարոտ եմ լուսուն,  
Որը վոր ծագի — կսպասեմ մթուն...»

Բասալ անոր ցալով դարնված հետ մայրը .

«Անբախտ վորդիր, մայրդ ցավիդ թող մեռնի,  
Եւ ամային ու անապատն և իմ տուն  
Մինչև կախարդ մի լճակի յերազեն  
Սիրուդ կարսապն՝ հափշտակած քե՛ղ բերեմ . . .»

## II

Որե՛ր անցան. ու մոռացված դեղձենին  
Նորեն բացալ իր ծաղիկներն աննման .  
Յեկ մաղերուն վրա ձյունի սառ փոշին՝  
Մեջնունի մայրն չափեց Արտոսն ու Բոհոն :

Նա գյուղե գյուղ թափառեցալ տենդագին,  
Ու կույսերուն բաժնեց լաշակ ու ծարիր,  
Վորով անոնք իրենց աչքին՝ անդունդին  
Թուլքը կուտան, և ունքերուն՝ յերկնի ծիր . . .

Զուրերու ային հուլունք բաժնեց ամենուն .  
Գուցե վլզե մը այն կախած միջոցին  
Տեսներ պարիկն իր Մեջնունի իղձերուն  
Յեկ հուլունքը մարդըիտ կտրեր վիզն ի վար :

Վրանե վրան նա գինդ բաշխեց կույսերուն,  
Բերվորներուն տվալ սանդը ու հայելի,  
Վոր թե մեկը ժալտեր իրեն պատկերին՝  
Եղ ժալտին մեջ տեսներ նու հույսն իր զավիկն :

Նա Փալ բացավ աղջիկներուն քաղքենի,  
Ու պատմերդեց անոնց վեպ ու հեքյաթներ.  
Գուցե մեկին բախտը պատմած միջոցին  
իր Մեջնունի բախտն անոր հետ գուշակեր:

\*

Այսպես չսփեց նա դաշտ ու սար առանձին  
Մարմին առած մի յերազի ի խնդիր.  
Յել ապեցավ ժխորն անմիտ քաղաքին  
Միշտ վինտուելով վորդու պարիկն անբասիր:

Ճա՛տ եր հողնած, անզոր ինչպես մի դիակ,  
Յերբ կանգ առավ ափին աղբյուրին Սինջանի,  
Վոր մի յերգով անմահական ու հստակ  
Կերթար լուծվիլ մի լճի հետ արծաթի:

Հոն մի աղջիկ, առավոտեն գեղեցիկ՝  
Զեռքն արծաթ թաս՝ աղբյուրի ափին եր կայնած:

Հասակն անոր գեղեցիկ եր ու փարթամ,  
Ինչպես գետի ափին կանգնող բարտենին.  
Դեմքը ծագող արեգական եր նման.  
Անոր աչքերն սարը պառկող այծյամին  
Աչքերու հուրքն և անուշ թովքն ունելին.  
Թարթիչները արծըլի թև լինելին,  
Վոր նորածագ արևի տակ կը թոփ:  
Շուրթերն անոր համով կարմիրն ունելին  
Հնաիր նուան հատիկներուն գինեթոր.  
Յել կարապի անոր վիզը չնորհալի՝

Մարմար քարեն լույսի նման յերկարող  
Մի ջրվեժի ուներ՝ հրապույր անպատճեմ :

Պատկերն անոր ջուրին ծոցը կը շողար  
Յեկ աղբերակն՝ անով գերված՝ ու դիմով  
իր մեղեղին և ընթացքը կը մռանա՛ր . . .

Սիրուն աղջիկն յերբ վոր տեսավ յեկող կին  
Վաղեց, գթով թեր մտավ ժալտագին.  
Դատարկ պարկը անոր ուսեն վար առավ,  
Ու նստեցուց այն կանաչին վրա դալար.  
Արծաթ թասով անոր ակեն ջուր բերավ,  
Խմեց ծեր կինն, ու շունչն իրեն դարձավ յետ,  
Վորդու սիրածը գտնելու հույսին հետ :

— «Աղջի՛կս, գալար մնա հասակդ հավիտյան,  
Ու կատարվի փափագն հոգուտ կուսական» :

Յեկ շիկնեցավ աղջիկն ինչպես թարմ կակաչ.  
Առավ, պագնեց Մեջնունի մոր գողցով աջ,  
Ու ձայն տվավ. յերկու առուցդ հովիներ  
Փութով բերին լոչ ու կարագ, կաթ ու սեր  
Ու ծեր կնոջ հրամցուցին հարդանքով :

Իսկ կույսն անուշ նստած ստանջված եղ մոր քով  
Արեկ պես անոր վրա կը ծաղեր  
Իր դյութական, իր անտապատճեմ սև աչքեր.  
Ապա հարցուց, մինչ բոցի պես կը չիկներ.

— «Մերի՛կ, ի՞նչ ցավ ե քեզ սարերն ես նետե՛ր»·  
— «Գոհար աղջի՛կ, լոկ Մեջնունիս անույշ սե՛ր»

— «Մերի՛կ, ինչե՞ն են քո ճակտի կնծիոներ · · · »  
— «Զարքաշ կյանքը, և հալածանք ու հոգսեր  
Յեկ մորդուս ցավին են անորնք հոն ակոսեր · · · »

— «Ամթ մաղիդ մէջ՝ արծաթն ինչե՞ն և բուսեր»  
— «Մորն անհուն սերն ու ջալուլած իր հույսեր  
Կընեն սե-սաթ մաղերն անոր սպիտակ,  
Միրտն՝ սեավոր, մէջքը կքած ցավի սոսկ · · · »

Լոեց աղջիկն . աչքին մեջ լոց կերեար .  
Գիրկըն առավ գլուխն եղ մոր վշտահար ,  
— «Թող կատարվիր վորդուդ կարտոն-տանջլած մա՛յլ · · · »  
Բասով սղաղնեց անոր ճակատն ու մազեր :

Իսկ Մեջնունի մոր սիրտն իրեն կը խոսեր .  
— «Ահա՛ փնտուածդ, քո վարդ հարսը, վորդուդ սեր · · · »  
Յեկ իր հոգուն մեջ՝ ցավերու տակ կործան · · ·  
Կամար կապեց պայծառ հույսի ծիածան · · ·

Մեջնունի մայրն հարցուց .  
«Եա՛կ սիրադին,

Ի՞նչ կոչեմ քեզ—տեսի՞լ, հրեշտարկ թե չե կի՞՞ն .  
Տեսիլ ըսեմ, են չե քեզ պես փաղաքուշ .  
Հրեշտարկ ըսեմ, հրեշտակ քեզ պես չե՛ բարի .  
Թե կին ըսեմ, հողեղենի չես նման .

Բ՞վ ես արդյոք, և ի՞նչ անուն պատվական  
կուտան քեզի ծնողք, ոտար, ազգական»:

Լեյլան անոր ցուցուց հեռու վրաններ.  
—«Կոներն են են մեծ ցեղապետ քոչարին,  
Վորի սահմանն կանի հետ են սարերուն  
Մինչև Շիրվան, մինչև Տարոն ու Սասուն,  
Վորի գաշտերն ու արոտներն կերկարին  
Տեղբան ի վար մինչև Բոհոտան ու Բաղին.  
Անոր աղջիկն եմ. Լեյլա՝ ե իմ անուն...»

Կոռը ձեռքին, ուժ տալով ծեր ծընդերուն՝  
Վոտքի յելալ անբախտ մայրը Մեջնունի.  
«Լեյլա՝, աղջիկս, թող շեն մնա քո հոր տուն...»  
Բսալ. տբառում ինկալ դարձի ճանապարհ :

Լեյլան շփոթ՝ վաղեց անոր յետեւն.  
— «Կեցի՛ր, մերիկ, մեր տուն կեցի՛ր ես դիշեր.  
Մութը կիշնե—դուրսն ահ ու գող ու գաղան  
Դարան մտած՝ պատրաստ վորսէ կոպանեն.  
Ինձ հյուր յեղի՛ր, աստծուն հյուր ես դիշեր...»

—«Լեյլա, աղջիկս, տունըս դարձալ ոլլիշա՛կ...  
Դու՝ մեծատուն, Մեջնունս՝ աղքատ ու մշա՛կ.  
Մարդս շուն լիներ, խեղճ ու մշակ չըլիներ.  
Դե՛, դուրս յելե՛ք, դողե՛ր, կատաղած դաղաններ  
Հոշոտեցեք խեղճ Մեջնունի անբախտ մա՛յր...»  
Բսալ, լալով բռնեց դարձի ճանապարհ :

Լեյլան շշմա՛ծ յերկա՛ր անոր նայեցալ.  
Սերտը փլալ, ինքն ել նստած կուշտ լացալ...

Մեջնունի մարյըն թողուց Սլինջան ծաղկավետ  
 Ու տուն դարձավ, վորդու անձար վերքն իր հետ  
 Վստահ դիտեր թե մի աղջիկ չեր Լելան,  
 Այլ ակրավառ մի բոց յերազգ լուսեղեն  
 Աշխարհի վրա— իրենց հասեն շատ հեռու,  
 Վորի անհաս պատրանդանին հասնելու  
 Արծովին թևերն անդամ տկար կմնան,  
 Մեջնուն պիտի վաղե անոր ստվերին,  
 Խնչպես մանուկն կայծուիլի՛ յետեւն,  
 Լոկ իր մատղաշ սիրուր վերքով ծածկելու:  
 Մարյն ու վորդեն վալով ընկան իրար գիրկ—  
 Խնչպես իրար կը գրկեն քուքն ու խալար.

— «Մարե՛, ստանջված ու եղ մաշած կերպարանքդ  
 Ճիշտ պատկերն ե իմ հույսերուն ու կյանքին:  
 Վոտքերդ, վոր իմ սերը փնտուել գնացին  
 Ճամբի խճեն ու փուշեն են վիրավոր.  
 Լոկ մի քուքն ե վոր մերկությունդ կը ծածկե.  
 Գիշերաթույր քո մաղերու վրա, մա՛յր,  
 Կարոսն ու վիշտն իրենց ձյուներն են մաղած.  
 Յեկ աչքիդ մեջ յես սրատկերը կը տեսնեմ  
 Մեռելներուն, վոր կյանքի մեջ կը քալեն...  
 Բսե, իմ մա՛յր, աշխարհներե դյութական  
 Վորդուդ նարո՞ւ թե մահացոն ես բերած»:

— «Յերնե՛կ սիրու նարուն վորդուս բերեյի, —  
 Մահածոնը թող թշնամուդ մայ լինի.

Յես քեզ մորկանդ սիրող սրտիկն եմ բերած  
Վոր քո ցավը և խոլ յերապն հոն թաղես :

Աղջիկը, վոր քեզ այդ մեծ վիշտը նյութեց  
Քո յերապի մեջն և միայն վոր կապրի,  
Քո սրտամու յերապին մեջ հրավառ :  
Մոռցիր դուն այն . Վանա ծովի արխունքեն  
Վարդեն սիրուն քեզ հարսնցու կը բերեմ .  
Արարատեն կամ քեզի հարս յես կընտրեմ ,  
Վոր աչքը՝ ծով լինի , հասակն՝ ուռենի . . . »

— «Բայց, մա՛յրիկ, են սրտես ի՞նչպես յես ճապկեմ ,  
Թող վոր նույնիսկ յերաղ լինի լուսառեջ .  
Ի՞նչպես մոռնամ անոր դեմքը հրեղեն  
Ու կիներուն դառնամ , վորոնց ծոցին մեջ  
Մահու թույն կա և մսի սերն անորեն . . .

Յես պիտի են վինտուեմ ներքեւ արեին —  
Գուցե վոր նա ծիածանի մեջ կապրի .  
Անունն անոր ովհատի յերդեմ գիշերով —  
Լուսնկային մեջ գուցե նա կը բնակի .  
Յես են պիտի վինտուեմ յերգով ամեն տեղ  
Մինչեւ դոնեմ , կամ մինչեւ յես ել հզոր  
Մի յերապի անյութ պրկին մեջ ընկնեմ . . . »

#### IV

Են դյուղի մեջ եղ ի՞նչ մեծ սուդ և իջած ,  
Վոր կույսերը կուլան եսպես ցավապին .  
Փողոցներեն վորի՞ սև նաշն և անցած  
Վոր բուռ առ բուռ վարդերն եսպես կը թումին :

— Մեջնուն անցավ սեր ու վշտով բեռնավոր .

Այսոր ցավովին ե աղջիկները կուլան .

Նա վոր սերը վտղոցներուն մեջ յերդեց

Յեվ գինջերը անո՞ք դիմին նետովեցան :

Բերվարները վորի՝ յե դեռ կ' սպասեն

Տիկերը լիք սերով, մեղրով, դինիո՞վ .

Հովվուհիներն անոր ե վոր կը կանչեն .

— Նա կը քաղե անտուն՝ ձմեռ դիշերով :

Քանի՛ սրտեց քո բարկ սիրով վառեցիր .

Ու քանի կյանքը դու քանդեցիր, ա՛յ սրդա .

Յավդ ամենքին մի դրքի պես լա՛յն բացիր .

Ու չը թողիր վոր մեկն իրեն քեզ բանա . . .

\*

Ու շրջեցավ նա ամեն տեղ՝ անդադար,

ինչպես գարննած մատղաշ յեղնիկ մը մոլաք .

Քարերն միայն իր վորը դիմին բարձն յեղան .

Իրեն ընկեր՝ սարի աղվեսն ու դաղան :

Քանի կահեցներ որ ու ամիս ու տարի

Հույսի վարդերն կը մեռնեյին մի առ մի .

Բայց անմեռ սերն իր լեյլային դյութական

Կաճեր ինչպես հրդեհ անդուսպ, խոլական :

Փոշին՝ ուսին, ձեռքին մեջ ցուպը մաշած ,

Յերկա՛ր ճամբեն հասավ Սինջան ծաղկավետ .

Դեմքին վրա զրկանքն ու ցավն եր տպված ,

Բայց դեռ սիրու կրակն ուներ իրեն հետ :

Վար առավ սազն իր խոնջ ուսեն վուշելատ,  
Խմեց արեն, և հոն լվաց իր ճակատ.

Յեվ լծի ամի, յեղեգներու շուքին. տակ  
Սազին վրա, լացավ իր յերզն արտաքանդ:

Մի վարդ աղջիկ՝ շաղված լույսե ու բույրե  
Դեռ չլաված սիրու մի յերդ շրթներուն,  
Կառաջանար մոտիկ ճամբեն վոսկեման՝  
Ծաղկոց սարի Սինամ կաքի շորորով...

Կապույտ, անփույթ մի շրջաղգեատ սրախուն  
Կը ծածկեր նուրբ հասակն անոր գեղեցիկ,  
Ինչպես խնկի կապույտ ծուխը ծըփծըփուն,  
Վոր կը պատռե մարմար սյուներն սլացիկ...

Մի զույտ սանդալ՝ նոր կակաչի պես կարմիր  
Գրկած եյխն անոր շուշան տոտիկներ,  
Թողնելով վոր հազար վայրի ծաղիկներ  
Բարկ սրունքներն համբուրելեն՝ մեռնեյին...

Մեջնուն ճանչցավ փերին իր վաս յերազին—  
Յերազի մեջ իսկ նա ենքան սիրուն չեր.  
Ու սրտին մեջ հազար գարուն ծաղկեցան:

Լեյլան ընկապ վիրոն իր մշակ սիրածին,  
Հորդ մաղերու բուրյան ջրմկժը հոսած  
Ուսերն ի վար իր սիրական Մեջնունին:

— Լեյլա՛, արդյոք ես ել յերազ ե անդութ.  
Զե՛, յերազված յերանությունն, իմ Մեջնուն...

Դյութանքին տակ լուսնկային՝ են դիշեր  
Անոնք բացին իրենց վերքերն ու կարոտ .  
Սերը անուշ-կարոտը խոց ու մոռուշ եր .  
Ու ժպտեցան, լայի՛ն մինչև առավտոտ . . .

Յերեք անողամ լճի լանջին վլրա փաղկուն՝  
Լուսին բացալ նունուֆարի բաժակներ,  
Յեվ նորածաղ վառ արևին ի վողջույն  
Յերեք անողամ ամրոնք պարագեց արշալույսն :

Ենողե՛ս անցան յերեք ցերեկ ու դիշեր,  
Ինչպես շշուկն մի առաջին համբույրի ,  
Ինչպես թոփչքն յերաղին մեջ դուրեկան :

Լեյլայի դլուխն՝ իր հոյակապ կրծքին վլրա ,  
Յեվ իր ճակատն անոր մազի ծովին մեջ .  
Մեջնուն կըսեր Լեյլային .

—Լեյլա, հոգի՛ս, արի տանիմ քեզ հորս տուն  
են խեղձո՞ւկ ե. այնտեղ թե վոտք դնես դուն  
ել ի՞նչ անեմ վայելքն ու դանձ ու յերկինք .  
Շե՞ն ե չոյլ, թե հոն մեկտեղ բնակինք :

Իմ ա՞րտն ե կորթ, վոստին ու քար ու քռա ,  
Բայց հողն պիտի քո վոտքի տակ սարսոս ,  
Յերբ ինձ հետ դաս տափի ընելու վարոցին .  
Պիտի ծլի ցանքըս առատ-վոսկեծին . . .

Յեվ հունձքս պիտի ծփա հանց ծով բոցագես ,  
Դալա՛ր, դալա՛ր քո հասակի, քեզի՛ պես .

Ու կալոցին շեղջես՝ վլուկու պես սրսուռ,  
Պիտի հանեմ մա՛ս խեղճերուն ընդհանուր :

Մեջնունի գլուխն իր ծունկին վրա կախարդած  
Յեկ նայլածքի յերկինքն անոր տալրածած՞  
Լեյլան այսպես իր տիրածին պազատեց :

— «Մեջնո՞ւն, հորըս դառներն արի արածենք  
Գիներբուկի պուրակներուն մեջ փթթուն.  
Հո՞ւն և անթիվ մեր սիրական դառներուն :

Հաղա՛րն՝ անբիծ ու ճերմակ են ձյունի պես,  
Հաղարը՝ թուխ քո հոնքերու թովքին պես,  
Ու յոթ հաղարն՝ եղ աչքերուդ պես նախշուն :

Յերեք հաղար են մեր չուռերն ըսպիտակ,  
Վորոնց գաժը մարդերուն վրա կը փրփրի,  
Ինչպես Տիգրիս՝ Սուրբ Գևորգի ժայռին տակ :

Կակաչներով յես պիտի քեզ պսակեմ,  
Ու պիտի թույլ տամ վոր ճերմակ շուշանի  
Մանյակիդ աստղի պես վար թափես վիմ պղին  
Մինչեւ յոտքերս համբուրելու յերկարին :

Մակաղ՝ կողեղ, բերնիու՝ սրինոյն հոգեթով,  
Զրերու ափ յերք մենք յերգենք միասին,  
Գառներն պիտի պարեն դլարթ մայունով  
Յեկ մեր բոլոր՝ նունուֆարներ բողբոջին :

Յեկ հովիկը մեր մամունջն գինովցած  
Մեր հոտին հետ պիտի շրջի շարունակ,  
Մաքիներն ել մեր պատկերեն հմայլած  
Ամեն մարտին պիտի ծնին յերկողորյակ :

Յերբ բերվորներն կաթը շալկած տունն դառնան,  
Գառներն իրենց մոր համբույրին արձակվին,  
Մենք ել իրար գիրկը ընկնենք սիրակա՞ն,  
Իր մոր կաթին վաղող կայտառ ուշին սես» :



Իրիկունը հեքյաթի պես քնաբեր,  
Ու քաղցր վորպես են շարրաթը դյութական,  
Վոր անհամբար անմահական ծաղիկներ  
Կաթիլ կաթիլ իրենց մեղրեն են ծորեր :

Ոի վհուկի կախարդ փարչին մեջ կապույտ,  
Իրիկունը՝ սիրված հարսի պես անուշ՝  
Իջավ դաշտին ու բալաճիդ սարերուն  
Յեկ մշակի վոսկեծվուն արտերուն :

Ու աստղերն ել եղ հեշտանքեն սարսուն,  
Հրեշտակներու աչքերուն պես սիրավառ,  
Հույլ հույլ իջան մթնաշաղով վայլու,  
Արտեն դարձող լաճերուն հետ սիրահար,  
Ժպիտն անուշ՝ դյուղի համեստ կույսերուն...

\*\*\*

Կաքավիւ պես կըմկըմալեն  
Առած վիճակ, վիճկի մեր—  
Արեւ պես փելքիլըտալեն  
Սինջան իջան աղջիկներ.

Յեւ յերգելով դուք հյուսելով  
Թախտ շինեցին ծաղկազարդ  
Բազմեցուցին վիճակն ծեսով—  
Քառսուն աղջիկ-քառսուն վարդ:

Յեւ բոլորան են թախտի չուրջ  
(Թող շեն մնար են տարին)  
Ո՞վ չեր հյուսած աիրու անուրջ.  
Հան, ջան, վիճակն ի բարին.

— Թանկ ակունքներ առած կուգա  
Յեկ ձիավոր մի տղա' .  
Աղջի, ձեռքերդ չուտ դի՛ր, հինա—  
Քեզ տանելու կուգա նա :

— Զինարի պես հասակ ունիս  
Յերնեկ քեղի, ջա՞ն աղջիկ,  
Սարով են կողմ մի յար ունիս—  
Քաջ-գովական մի կտրիճ :

— Մարալ աղջի՛կ, կա մի չարկամ  
Քո վառ սիրու ճամբեքին.

Գուշ մի տիսրիբ—սերդ ե արգար,  
Շուտ կը հաղթես ամենքին:

— Աղջիկ, քեզի հարս ոլխոտի տան  
Քալթառ, հարուստ մի մարդու.  
Վոսկի քամար, մեսուաքս կապան.  
Վայելք բաժին ունիս դու:

— Աղջիկ, սիրողդ մի հոտա՛ղ ե  
Ծուռ-քուռ թիկնեղ մի տղա.  
Յերնեկ բախտիդ, բախտը խա՛ղ ե,  
Մե՛ծ մարդ պիտի նա դառնա:

Փարթամ աղջիկ, սիրուդ համար  
Չկա պետ ու մեծավոր.  
Մեկ քաջ մշակ, սիրուդ համար  
Կուդա յերկրե հեռալոր:

— Ե՞ն իմ բախտն ե, իմ ջան Մեջնուն,  
Վոչ մի պետի չեմ հավնած.  
Յես ի՞նչ ընեմ գանձ ու անուն  
Դու ես սրտիս լոկ սիրած:

Բսավ լեյլան ու սիրածին  
Ուսին դրավ իր յերես.  
Սիրու յերա՛ղ արևածին—  
Վեհ ու հզոր մահվա պես:

Նորեն հատնում և անքանք . . .  
Նորեն սիրու հեշտ տանջանք . . .  
Յեկ չքացավ մարդն ու աշխարհ . . .  
Յերկու վառ սիրու—յերկու լա՞ր . . .

\*\*\*

Ամեն աղջիկ իր քախտն լսեց  
Սիրու դողով—հեվագին . . .  
Մինն եր զվարթ, մինն եւ տխրեց  
Վարդավառի կիրակին :

Հանկարծ հեռվեն, հըռհըռալեն  
Կժերն ուսին—չորորելեն  
Կույսերն ջրի ափ կեցան;  
Չեղի լաճերն յերեցան . . .

Յեկ սկսավ մեծ ջրախաղ . . .  
Լաճ ու աղջիկ սիրահար  
Կը հաղածեն ու կուտան վարև՝  
Բայց կը վնտուն միշտ իրար :

V

Կալերուն վրա և յերաղող կոներուն,  
Հովիվ աղջկա ժպիտներուն պես անուշ,  
Ծագած եր յոթն անդամ վոսկի արշալույ . . .  
— Ու դեռ անոնք նստեր եյին դեմ առ դեմ :

Յերկինքն ու ծովն ինչպես իրար կը նային  
Մեկ մեկու քաղցր աչքերուն մեջ կապտագեղ՝  
Ենպես անոնք յերկար իրար դիտեցին,  
Անհաղ սիրով և բոցալառ կարոտով։

Յերգեմն տրտում իրարու գիրկ լաց յեղան,  
Գեղեցկացած նույնիսկ հեղին այդ լացին,  
Ինչպես իրար զրկող մի զույգ բարունակ,  
Ինչպես պայծառ յոթ գույներու անանակ։

Հեռու ապեն լալկան մի յերդ սրբնդի—  
Հրաժեշտի տրտում կանչը քոչարին,  
Հովն իրիկվա սփռեց հունձքի դաշտի վրան  
Մեռելոցի աղոթքին պես ցալադին։

Լելան հիշեց, վար են գիշերն եր յերթին,  
Յել աչքերեն լացի յերկու կաթիլներ  
Աստղերու պես Մեջնունի վրա թափեցան.  
Անոնց այրելն զգաց նա իր ճակատին վրա։

—Մոտ ե գողանու, ուր մեր վրանը կը կանգնի,  
Գառնուկներու զիւ մայունը չե՞ս լսեր.  
Հորս յերթամ ու թող կամքովն իր բարի  
Մեր ուսերուն ծաղկի՛ նարուն ես գիշեր։

Յերգվե, վոր ինձ եսուեղ պիտի սպասես  
Քեզ աչետի գամ՝ ուսիս նարոս բախտալոր.  
Հերք կակաչներն աստղերու տակ քունք մտնեն,  
Քեզ պիտի գամ ճամբաներեն ցողաթոր։

— ԿԵՐՊՎԵՄ սիրովս , վոր մահի չափ հզո՞ր ե .  
Կյանքես շատ թանդ քո անունով յես կերպվեմ  
Յեվ քո շնորհքով , վոր լույսի պես անմեռ ե ,  
Մորըս կաթի սրբությունով յես կերպվեմ —  
Ո՞ր ու գիշեր քեղի պիտի սպասեմ  
Մինչև դատնաս , հետըդ բերած լույսն ու որ ,  
Դեմքիդ ժալիս , նարոտն ուսիդ լուսավոր :



Վրանին տակ նստած եր ծեր ցեղասպետն  
Յեվ լեյլայի վերադարձին կար ի դետ .  
Ու յերբ պայծառ դեմքը իր վարդ աղջկան  
Մթնաշաղի քողի մեջեն յերեցավ  
Ինչպես լուսնակն , վոր մութ ամպեն կը ծագի ,  
Կանչեց անհուն դորովով .

— «Լեյլա՛ , չար աղջիկ , եղ ո՞ւր մնացիր .  
Աչքերս քո դարձի ճամբին գամեցիր» .

— «Յերազի մասուռ կեցա յերեք որ ,  
Թասերով գինի բաշխեցի վարչես  
Մինչև սուրբ կույսի դեմքին լուսավոր՝  
Ծաղկեցալ ժողիս նուան ծաղկի պես .  
Յեվ քաղցր տեսիլքի մեջ նույն եղ գիշեր ,  
Ինձի յերեցավ , իմ կորիծն , իմ սե՞ր . . . »

— «Յերազդ մարմնացա՞վ , յեկա՞վ քո աստետ՝  
Նստած ճերմակ ձի՛ գանձ ու վառքի հետ» :

— «Հա՛յր, յե՛լ ու որհնե բախտավոր Լեյլադ, —  
Յես դտա՛ իմ սեր, առի՛ իմ մուրադ...»

— «Բաե՛, իմ աղջիկ, վո՞ր ծովի արքան,  
Վո՞ր հզոր ասպետ, կամ մեծ տանուտեր,  
Են վո՞ր աշխարհի փարթամ բեղիցան  
Իր սիրտն ու դանձը քո վոտքն ե բերեր»:

— «Եդ փուճ մեծերեն վո՞չ մեկին համար  
Սիրող սրտիս մեջ կա խունկ ու տաճար...»

Հոր ճակտին վրա սև ամպեր լիջան  
Ու ծեր հոգուն մեջ կոկիծ անսահման :

— «Բաե՛ ինձ, Լեյլա՛, ո՞վ ե քո սիրած,  
Բամի՞կն, անաղա՞տն, ոտա՞րն անաստված...»

— «Գեղջուկ մի տղա, մշակ մարեվառ,  
Նա գտա միայն իմ սրտին հարմար...»

— «Լեյլան չե՛ խոսողն, դեր զբարտիչ.  
Սսովա՛ծ, դո՞ւ յեղիք ծեր գլխիս փրկիչ.  
Ծե՛ր եմ, տկա՛ր եմ, մի՛ անեց հանաք,  
Սրտիս մի մխեր քո ժահըռոտ դանակ...»

Լեյլան փղձկեցավ վնչպես դարնան որ.  
Լուսնակն եր ծաթեր, ու ջրերն բոլոր  
Լեյլայի լացին նման լուսավառ  
Կիջնեյլն լքված բլուրներն ի վար:

— «Մշակը սիրելն, հա՛յր, միթե՞ մեղք ե...»

— «Առ'ւս, Լեյլա՛, չա՛րն ե քեզ հանած խելքի :  
Մեծ ցեղապետի յես ծնունդ աղնիվ,  
Ենքա՛ն բարձր ես դու վորքան ե աղօծիվ  
Գորտեն, վոր ճահճի ծնունդն ե անարդ .  
Համբուլովիլ կրնա՞ս՝ մի բոըոտի հետ .  
Կամ դունդ շան հետ վենակցիլ հավետ,  
Կո՞ւղես ունենալ ժանտախտ քեզ լնկեր,  
— Ահա՛ թէ ի՞նչ ե սամիկը սիրել...»

— «Յածն ու բարձրը միայն հնչյուններ են սին,  
Յերբ յերկու սբուեր կրնան միասին  
Զգալ նույն տրոփի, տեսնիլ նույն տեսիլ  
Յեվ նույն խոհերու մեջ մեկտեղ սուղիլ —  
Անոնք ծնած են իրարու համար :  
Հազար թաղավոր, ասպետ անհամար  
Յես մասու՛ղ կընեմ մշակ Մեջնունիս» :

— «Նայե՛ յերկնամուխ ե՞ն բանձրիկ սարին,  
Վոր ձյուն-թաղ դլիսին հպարտ ե բազմած,  
Մեկ ել են ցածրիկ բլուրը դու տես,  
Վոր վարն, անոր դեմ ծունկի ե յեկած .  
Կրնա՞ս սարն իջնել բլրին հավասար,  
Կամ բլուրն յելնել գառնալ բանձրիկ սար .  
Տիրոջ սուրբ կամքն ե վոր եսպես մնան —  
Մեկն՝ զամած ստոր, մեկն՝ տիրող հսկան,  
Մարդերն ել՝ Աստվածն եղագես ստեղծեց —  
Հազարը՝ սամիկ, մեկն՝ աղա՛տ ու մեծ...»

— «Աիրածս և ազնիով քանց սալվի չինար  
Զկա՛ մեծավոր Մեջնունիւս հավասար» :

Յել ծեր ցեղագետն սաստիկ բարկացած  
Իր գերիներուն տվալ հրաման,  
Վոր ձի հեծցնեն Լեյլան պինդ կապած  
Ու ճամբա հանեն դեպ Զիդիր, Բոհտան :



Քակած եյլն բոլոր սլրաններն մի առ մի,  
Թամբած եյին հազար նժույդ ամեհի.  
Յել իրը հուռութք՝ հաղար հաղար դառներուն  
Սիրուն ճակատն ու ձյունադեղմ կռնակներ  
Սոսըր քսեր, շաղված կաթով մայրերուն :

Յել քաղցր Լեյլան՝ ձեռքերը կապ ու շղթա՝  
Առատ մաղի ծովերն անցած հովերուն,  
Հպարտորեն՝ հեծավ իր սե յերիվար՝  
Արեին պես, վոր կը բաղմի ամպերուն.  
Յել դառներու մայունին հետ ծաղկատենջ՝  
Ճամբա ինկառլ դեպի Զիդիր ու Բոհտան :

## VI

Գիշերն ո՞ւշ եր, բայց դեռ Լեյլան կուշանար.  
Գիշերն ո՞ւշ եր. ու բարի քունը չեր դար  
Մեջնունի աչքն են ճամբայեն քաժնելու,  
Ուրկե տատրակն իր յերաղին թե առավ :

Ու գրկին մեջ, վոր մեկնումով Լեյլային  
Արևեն զուրբկ մի վհի պես խավար եր,  
Հիմա, Մեջնուն սաղն եր գրկած տրտմալար՝  
Յեվ հովերուն Լեյլայի սերն նա կերդեր:

Էռւյսը բացավ վեր Սինջանի ջրերուն,  
Նունուֆարի և նարդիղի բույրերուն.  
Լիճն ու յերկինքն վորք մնացին աստղերեն  
Ինչպես մի սիրտ կամայանա իր հույսեն—  
Բայց մոռացկոտ աղջիկը դեռ կ'ուշանար:

Դուցե անոր հոր վրանը հեռո՞ւ յեր.  
Ու քաղելեն հոգնած Լեյլան կսպասեր,  
Լույսի նման առավոտին հետ դալու.  
Ինքն ել պայծառ մի առավոտ անվախճա՞ն  
Մեջնունի մութ կարոտ հոգուն ծաղելու:

\*\*\*

Խարտյաշ ամառ—վոսկի քաղի ժամանակ.  
Արեգակի քարկ ու մրկող շողին տակ  
Կը չնկային հաղար մանդաղ, գերանդի.  
Գյուղը՝ դաստարկ, գեռուն եր կյանքը հանդի:

Լուսաստղին հետ, շող-կեսորեն մինչ դիշեր,  
Գեղջուկ ճակտեն քրտինք քանց գետ կը հոսեր  
Աղի ոճած վոսկի հասկերն ու դետին,  
Վոր ծովի պես հորդեր ամբարն մեծ պետին:

Բորիկ վոտքով՝ կոխելով փուշ ու տատառկ  
Կին ու տղա կը ժողվեյին թափած հասկ.

Ու կը կանդներ արտերուն մեջ մեկ մեկ դեղ  
Մեծ հրդեհի շեկ բոցերու սյունի պես :

Բարդով բարձած սայլերն անցան ճռուալեն,  
Յել հետն անոնց ծեր գեղջուկներ տքալեն  
Մեջքով վորա տարան հանդեն մինչև կալ  
Իրենց անխղիճ մեծալորին բռնակալ :

Ապա յեկալ կալի շմջան, լուսնի տակ.  
Աշնանն յեղար հարդ ու ցորեն սպիտակ.  
Պետը յեկալ սրառու եղ շեղջը դիտեց  
Ու զայրացալ, հողնած մշակը տիեց,  
Վոր թե ինչո՞ւ գեղը կրկին չեր յեղած.  
Ի՞նչ կար տարապ. գեղջուկին բան չը մնաց :

Նա վոր դատեց հերկեն մինչև կալատուն,  
Ծանր սրառով, դատարկ ձեռքով դարձալ տուն . . .

Ես ամենը հեռվեն դիտեց հեղ Մեջնուն,  
Դիտեց ու միտ բերալ իր մայրն ու իր տուն.  
Ու մտածեց վոր արան անքաղ կը մնար,  
Յեղներն՝ անկեր, մայրն՝ անոթի ու տկա՞ր.  
Բայց Լեյլայի սերն են վիր տեղն եր դամած,  
Ճուտով կուգար, չե՞ վոր յերդում եր ըրած . . .

Վերջին աշունն ել հյուծեցալ համբարար  
Ինչպես սիրով խոցված մի կույս վողեվար.  
Դաշտերուն վրա մշուշն ինկալ անխափան  
Սրտի վրա նստող ցավի մը նման.

Յեղ մի որ ել անհծքի պես տեղաց ձյուն,  
Զմեռն իջալ կատարները սարերուն.  
Բայց Ախճանի լճի ափին ամայի  
Նա կսպասեր վերադարձող Լեյլայի :

\*\*\*

— «Մոլար քամիկ, վոր կը վազես սարե սար,  
Հսե՛, արդյոք անուշ Լեյլաս չի տեսա՞ր.  
Սարալանջի ճամբեն գնաց ծաղկավետ,  
Կարաւներու և ջրերու յերդին հետ :

Ա՛յ, կռունկներ, դո՞ւք վոր յերամ առ յերամ  
Մեր աշխարհեն կերթանք Զիզիր ու Բոհուն,  
Աստված սիրեք, իմ յեղնիկը և իմ սեր  
Վո՞ր ջրի ափ, վո՞ր չուրին տակ եք տեսեր :

Ա՛յ, չոր թերթեր, թա՞րմ-յերբ նա քովս կը փթթեր,  
Հիմա անտեր՝ չորս հովերուն եք նետվեր.  
Արդյոք մի դո՞ւյժ վասիսաց ձեղի ջան Լեյլաս,  
Վոր դուք բարով կուզաք ցանել են վրաս :

Դեղնած լեռնե՛ր, վոր յը հեևաք բալածիդ,  
Հպարտ ժայռեր և սահանքնե՛ր յերգեցիկ,  
Յերբ վոր Լեյլաս զա վերստին յերգել ձեզ,  
Հսեք, անոր սիրո՞ւյն յեղա վողջակեղ...»

ԱՇ, անիծվի թող են տարվա դեկտեմբեր .  
ի՞նչ վոր Մեջնուն տեսավ, շա՞տ մարդ է տեսեր,  
Բայց աշխարհահի կայուն կարգն է համարած  
Յեկ անտարբեր իր սկ որերն է համբած :

Լճի ավելին Մեջնուն շինած եր իր տուն  
Հաստ յեղեղով և ճյուղերով ուռերուն .  
Յեկ դուռ նստած ամեն մի որ ու գիշեր  
Նա կը նայեր ուրկե՛ պիտի դար իր սեր :

Զյունը փակած եր ճարն ու դուռն ու ճամբան .  
Գյուղն եր դարձեր վողջ մարդերու դերեզման .  
Մի խումբ ասպետ՝ աչքերն արյուն, ձեռքը թուր,  
Մարեն իջած, ափ կառնելին ամեն դուռ :

Կը խլելին իրենց սիրտն ի՞նչ վոր ուրեր,  
Ինչ վոր գեղջուկ մի տան լոկ ճագն ու հույսն եր—  
Միակ վոչխարն, ալյուրն ու տաշտ, դործիքներ,  
Հեղ նորահարս, թարմ ու համեստ աղջիկներ .  
Ու կերթային—դյուղը սուդի մեջ թողած :

Քանի՛ գեղջուկ՝ եղ դառն կյանքեն ձանձրացած  
Մինջանի ափ կը հասնելին դիմահակ  
Իրենց ցալին հետ թաղվելու լճի տակ :

Մեջնուն տեսավ ես բոնություն ու չարիք,  
Անիւղձ վայելքն, անվերջ վաստակն ու կարիք,

Յեկ կյանքն այլևս իրեն թվաց անխմաստ .

Որ մ'ել սիրու ճամբին ինկայլ դիմապաստ

Սերն ու կարոտ դեմքին վրա քարացած —

Զո՞ւրն եր բերեր իր կյանքն ու հովին եր տարած . . .

\*\*\*

Զմեռն անցալ . կարսպները Բառիեն

Վերադարձան իրենց բույնը փրփրաշեն

Զյուն լանջերով արծաթ ջուրը հերկելու,

Ու յերբ տեսան սիրտկարոտ սրարմանին

Աղվո՛ր-նույնիսկ իր անվախճան քնի մեջ ,

Վեպերը կախ , մրմունջներով ցալագին

Դաշին իրենց սերը ծածկել շամբին մեջ :

Արագիլներն ել զույգերով յե՞տ դարձան ,

Անժեղունակ իրենց սերովն անխափան

Նո՞ր յերաղներ ու նո՞ր յերգեր հյուսելու :

Եա՞ իր դեմքը դեպի ճամբան հեռավոր ,

Սաղը դրկած իր սրտին վրա սիրաջեր ,

Մութ խոռոշեն , վոր յերեմն ա՞չքն եր աղվոր ,

Կարծես անոր վերադարձին կ'սպասեր . . .

VII

Ինչաղես յերամն ձյունասպիտակ հավքերուն ,

Հաղար քոչար վրանները կանգնեցան

Զուրերու ափ ու մեջ դալար ձորերուն :

Ոջախներեն յելավ ծուխը ծիրանի  
ինչպես հուշը մի մեծ սիրու հեռավո՞ր .  
Աւ հարավի տաքուկ արև մը բարի  
Դաշտին մեջ կյանք սփռեց , լճին վլաս՝ յերազ...

Հոտի ճամբեն—մեկ դարձն վոսկի , մին՝ զմբուխտ՝  
Սրբնդ բերնին հովիվն ածեց «Ճրին յելոդ» .  
Յեկ ջուրն անոր յերգէ մեջեն կարկաչեց  
Զով ու դլդլան , ծաղիկներու յերազեն .  
Զրիկժն՝ մարմար ժայռերեն վար յերկարեց  
Իր հասակը դոտի կապած՝ ծիածան .  
Յերգեն դինով հոտը մինչև արթնցավ  
Յոթն անապակ ջրերու ափ դյութական :

Հովիվն ենտեղ սկարգեց իր հաստ դարանակ ,  
Նետեց սրինդն , նստավ լուռ ու դլմահակ .  
Կյանքն ել իրեն համար պատրանք եր յեղած ,  
Յեկ են յերգեք յերազի ափ չեր հասած .

Հիշեց իր «տուն»-ն , կինն ու զավակ՝ դոնէ դուռ ,  
Յեկ իր հոգուն պատեց կարոտ ու մրմուռ .  
Հանց ջուրն՝ ակեն՝ ենակես իր վիշտն նա պոռթկաց .

«Տերըդ մեռնի՛ , վուճ աշխարհ...  
Ոճն ունի բույն և սե աղառվն՝ իրեն թառ .  
Իսկ ծեր հովիվն վո՛չ տուն ունի , վո՛չ սթար :

Գառն ու մաքին կը մեկտեղվին առեն որ ,  
Ու կը դառնա հավքն իրեն բույն հեռավոր .

Իսկ ծեր հովիվն՝ քարն իրեն բարձ, ժայռի տակ  
լույս ու մթուն կերաղե կին ու զավա՛կ...

Տերըդ մեռնի՛, չար աշխարհ...»

\*\*\*

Դղյակին մեջ ծերունի հոր Լեյլային,  
Պարսիկ հարդի դորդերու վրա նկարեն,  
Փունջ վտունջ մեռան ծաղիկները աշնային՝  
Անբախտ կույսի տանջանքներու սնարեն:

Հովագենուն վրա անոր մահի՛ճն եր,  
Ու սյուներեն կախ և զվիսին կուսական,—  
Հմայակներ ու անհամար հուսութներ  
Վոսկի, դոհար տուակերու մեջ պատվական:

Թանգ փերուզով բանված յերկու տատրակներ  
Բարձին յերկու ճոթերն ելին թառ նստած  
Զար յերաղե և չար աչքե փրկելու  
Անբախտ Լեյլան ու իր չքնա՛ղ շնորհքներ...

Բարձին վրա մաղերու ծո՛վն եր ծփուն  
Թուխ, ինչպես ծովն իր ցաման մեջ ահաղին,  
Դժույն եր դեմքն ինչպես հույսը նախորդին  
Յեկ մարմրուն իրիկունին պես տրատ՛ւմ...

Հայրը սնուր գլխին հակած կը չոյեր  
Վշտի բոցեն այրող ճակատն եղ մարմար,  
Ապա պղտիկ մանկան նման կարտասվեր.

— «Անլութիստ աղջիկ, քո սիրու պատռողն և քո հայր».

— «Յերբ մեռնիմ հայր, ինձ Սինջանի ափը տուր,  
Յել ափին մոտ իմ դերեղման շինե դում.  
Թող յեղեգներ վրաս ձոճեն անդադար,  
Ուզեմ մոռնալ, բայց մահն իսկ ինձ չըտա՞քուն...»

— «Հոգ մաներ լեյլաս-վառ դարունի և մոտ—  
Աստված կամենա—կերթանք մեր զողան,  
Ճեզ կը պսակեմ սոսք ու փառոք,  
Մեջնունդ ել կանեմ հաջորդս ու փեսաս».

— «Մեջնունս քե՞զ հաջորդ—Մեջնունս ցեղաղեմ—  
Ժահը մի խառներ դուն լուսե սիրուս հետ—  
Աշխարհն վո՞ր պետեն լավ բան և տեսեր  
— Լոկ լաց ու զրկանք, լոկ անվերջ հոգսեր...

Ի՞նչ արժեն հաղար ավան ու քաղաք,  
Ի՞նչ ընեմ եսքան բերդ ու ապարանք.  
Ասողերուն թիվ կա—ու հոտիդ չկա,  
Ավաղին՝ համբանք՝ ու դանձիդ—չկա.

Բայց ի՞նչ շահ տվին անոնք ; ի՞նչ բարիք .  
Միայն լեռ տանջանք , միայն ծովի կարիք—  
և եղած ժողովրդիդ սև բաժին մնաց :

Անոնք դատեցին , մնացին անհամ'ց ,  
Անոնք շինեցին , մնացին անտուն ,  
Յել մեռան անոնք վոր ապրի՛ քո տուն :

Մեր հացը՝ մարդու մսի համն ունի ,  
Մեր ջուրն ու գինին՝ անմեղ արյունի—  
Ասես Ես բոլորը քեզ չեր բավական ,  
Ոիրան ել պատուեցիր քո հեղ աղջկան» :

Յել հայրը կանչեց ցավին մոլեգնած—

— «Զը լուսնար են սև որն վոր յես ծնա—  
Զքիւր են վայրկյան լույս , աշխարհ տեսա .  
Մեծցա կամակոր , մեծցա յես հզո՞ր  
Համբավը հնչեց աշխարհքըս բոլոր—  
Մինչեւ վոր կամքիս , հզոր վոտքիս տակ—  
Յոթը ցեղ ըրի հլու հպատակ .  
Ի՞նչ վոր ուղեցի , բերին ուժն ու զենք—  
Ի՞նչ վոր ցանկացի ինձ տվակ որենք :

Եսքան ուժն ու դանձ ինձ վ՞նչ են արժեր՝  
Հոգու խոր կոկիծ—տանջանքի դիշե՞ր .  
Մել հատիկ աղջիկ բիրտ ձեռքովս խոցված .  
Տե՛ր , ես ինչ վայրադ դադա՞ն եմ յեղած . . .

Եելլա՛, քե՛զ մատաղ, ներե՛ քո ծեր հոր,  
Յես դո՛ւրս եմ հաներ հազար ձիավոր,  
Վոր ո՛ւր ել լինի գտնեն քո Մեջնուն,  
Գտնեն ու փառքով բերեն քո հոր տո՛ւն...»

— «Յերազիս տեսա իմ Մեջնուն, իմ սե՛ր.  
Մարմինն՝ ցրտատար, աչքը կըա՛կ-եր.  
Հսալ. անաստվա՛ծ, ինձ սպանեցիր,  
Փայտե դանակով կաշխ քերթեցի՛ր.  
Դեղչո՛ւկ ե ըսիր, հետն անեմ կատակ,  
Ինչ վույժ վոր մի տուն կըլլար փլատակ.  
Քանդվի՛ թող Սինջան, անապա՛տ դառնար...  
Մեկ ել դիրկս ինկած լացավ անխնա:

Մեռելի լացը, հա՛յր, ինչ դաժան ե.  
Կյանքս առանց անոր բո՛յ ու դէհյա՞ն ե...»

\*\*\*

Յոթն աշխարհե, յոթը ճարտար բժիշկներ  
Լեյլայի ցավն յեկած ելին բուժելու.  
Մեկը փրանկ սպեղանին եր բերեր,  
Մեկն՝ իր դեղը—ավանդն անթիվ դարերու:

Ու յերբորդն ել յո՞ւղն եր բերած հոտավիստ  
Մշկեղնիկի սղորտեն քամված ու վարդեն.  
Զորբորդն ուներ առյուծի կաթ իրեն հետ.  
Մեկն ել մի ճա՛յր Ճինդուստանի կախարդեն:

Ու վեցերորդն հզոր փոշին եր բերեր՝  
Կուսնի լույսով բյուրակնի մեջ պատրաստված։  
Ու յոթներորդն՝ շաբաթ մը քաղցր ինչպես սեր  
Յոթը կույսի կույս համբույլով կնքը վաճած։  
Վոչի՞նչ յեղալ, սակայն, անոր վերքին ճար.  
Վո՞չ մեկ բժիշկ գիտցալ պատճառն եղ ցավին։  
—«Զարն եղարկած սիրան աղջկանդ, անբախտ հայր»  
Ըսին, յեկած ճամբով նորեն յետ զացին։

\*\*\*

Մարտն եր արդեն. ու մաքիներն մարդին վրա  
Կը ծնելին իրենց զաներն յերկվորյակ.  
Կը տարածվեր կոնե ի կոն հեռակա  
Մկանցն առույր՝ ուլիկներուն սպիտակ։

Յեկ կույսերը չորսրավեն ու զվարի  
Վրանե վրան՝ պատկաղարի դույլերով  
Կը տանելին դալը՝ դեղին վորուս սաթ՝  
Ենկով սծուն ու մակարդիած ըսւլերով։

Եյլան, սակայն իր հասին տես չի գնաց.  
Յոթն ուլերեն նա չի կախեց բոժոժներ.  
Նոր կաթն՝ արծաթ կթոցներու մեջ մնաց.  
Յեկ իր բերնին չի դպան նոր դալն ու սեր։

Կը մատծեր վոր Սինջանի լձին քով  
Իր Մեջնունի կանաչ արեն եր մարեր.  
Իրեն համար ի՞նչ արժեր որն ու արե.  
Կյանքն՝ անիմաստ, որն ել ցալ ու խալար եր։

Գարունն յեկավ, ճամբար ընկավ կարավան  
 Դեպի հյուսիս, դեպի Զերմաճոր ու Սինջան.  
 Կը տալածվեր հեռուն, սարե մինչե սար  
 Զվարթ զնուցն ըստոժներուն զըլընդուն,  
 Յեկ տողանցքը կորիճներուն զինավառ.  
 Հետո պարբ խենթ ու կարտառ այծերուն՝  
 Հսկին ձղված կույսերու ոև մաղին պես,  
 Ապա շարքը մաքիներու թիսագեղ՝  
 Բերդուրներու աչքին նման յերազուն,  
 Յեկ զառներու հանդարս շարանը ձյունեղ՝  
 Մարդարտաշար մի մանյակի պես ծիծդուն:

Անցան խուժբերն վարդ կույսերուն գեղեցիկ,  
 Գարնան նման վառ գույներով գարդարուն՝  
 Գլուխ դրած մետաքս զգակ գունագեղ—  
 Զարդ-վուկիով, ակունքներով բնոնավոր.

Յեկ անոնց հետ անցավ Լեյլան սեարախտ՝  
 Մի տոն որի զամբան տարվող նտշին պես...

— «Լեյլա՛, մեր մեջ վայլով լուսնակն ևս պայծառ  
 Ու մենք՝ չուրջըդ վասփող ասազերն ենք պլազուն.  
 Դու վառ զարնան ծիլն ու ծաղիկն ևս դաւար  
 Ու մենք՝ թափող տերեները աղազուն...»

— «Քույլե՛ր, մարող տուալն եմ յես տարագեր  
 Յեկ զուք չուրջըս թոչող կյանքոտ փոսուոս.

Յես իմ սիրու սև դադաղն եմ սգակիր  
Յել դուք յերկնուց կախվող աստղերն արծաթյա...»

Կոռւնկներու մի խումբ անցարվ մոլորուն,  
Հեռու, անհաս՝ մեր հույսերուն, սիրուն պես.  
Ու կ'երդեյին կարստն վայրի վարդերուն,  
Գիներբուկին, վոր կը ծաղկի ծովի պես:

Լեյան կանչեց ձայնով մը քաղցր ու արտում.  
— «Յերնեկ ձեզի, դուք ցավ չունիք, կռունիներ,  
Սրտի մրմուռ և սիրու վերք չե՞ք դիտեր.  
Զկա ձեր մեջ դաս ու կապանք ու պատվար.  
Մե՛կ ե ձեր կռատն ու սիրու մեջ եք հավար:

Շա՛տ ջրի համ, շա՛տ ծաղկի հոտ եք առեր.  
Անցած եք շա՛տ կախարդական յերկիրներ.  
Ձեր կտուցին մատադ, ըսե՞ք, կռունինե՛ր,  
Իմ հրեղեն Մեջնուն արդյոք կապրի<sup>օ</sup> դեռ...»

Բայց կռունիներն շտափ անցան կրթալեն.  
Ու հետ Լեյան անպատճախան ու լալեն  
Հնձվող գաշտի ճամբեն կերթար դեռ Սինջան  
Հոն դանելու իր սերն ու կամ վր վախճան...

\*\*\*

Ու կը զնդար մանդաղն ամեն մշակի  
Վորպես վայլակ, արտն եր կարծես բռնկեր.  
Ու բոցի պես կը ծփային բյուր հասկեր  
Կը դառնային խուրձերուն մեջ զուտ վոսկի...

Զուրեն՝ շորո՛ր դարձան գեղջուկ աղջիկնե՛ր.  
Կուժն եր չիկնած անոնց վզին դեմ մարմար.  
Ու ճակատին հուլունք ու դարդ շարե շար.  
Հարսներն յեկան տիկերը լիք կաթ ու սեր:

Յել մշակներ կոնակ տված խուրձերուն  
Շուրջ բոլորան պարզ, անխարդախ սեղանին.  
«Ես քրոջինք չե վոր կը թափենք—մեր արյուն...»  
Բոխն, իրենց աղքատ տուներ միտ բերին:

Մինչ զնդալեն մեծ քարվանը կը հեղար  
Հնձված դաշտի մեջեն իր տաղն անդադրում.  
Յել անոր հետ կերթար Լեյլան մոլորուն  
Հնձված արտի պես իր հույսեն մերկացած...

## IX

Մեջնուն չկա՛ր. լոկ իր տանջված վոսկորներ  
Ցրված եյին տակ խոտերուն, յեղեգին.  
Ամենքի տակ աղբբանց-արուն եր փթթեր  
Աղբիմ-չապլիմ և հրանունկ մը վոսկի՛...

Մեջնուն չկա՛ր. բայց դեռ դաշար յեղեգներ  
Իրար գրկած կը սրափային սիրագին.  
Յել հովուհին՝ իր գտներուն կը սրնդեր  
Իր սերն անմեղ ու վեպն արծաթ լճակին:

Վարդավառի իրիկո՞ւն եր հրանուշ  
Ու դեռ Լեյլան ըստվերի պես կը քաշեր  
Լճի ափեն. և աչքերեն իր անուշ՝  
Լացն աստղերու պես շամբին ծոց կը ժաղվեր:

Տարի մասամբ ենտեղ անձառ դրախտ եր,  
Դիշերն՝ յերազ, որն ել ինդուն ու բախտ եր.  
Յերր իր կողքին սեղ կը կանգներ իր Մեջնուն,  
ինչպես սոսին՝ մեջ անտառի ծառեցուն:

— «Այսաթ լճարել, վոր կը նազիս վետ ի վետ  
Համբուլյրին տակ քնքուշ հովին ամբարե.  
Բաե՛, մի՛թե ափերուղ վրա ծաղկավետ  
Սիրած Մեջնունս յերբեք պիտի չը քալե՛...

Յերբոր դյուղի սիրող հովիվն ու հոտաղ  
իրիկունով արնդել դան ջըրիդ քով  
Մի դուսանի յոթ հեքյաթները չքնաղ.  
Նա չը պիտի՞ լսե անոնց հրձվանքով...

Այլևս պիտի չըտեսնե՛ նա վաս դարուն,  
Վո՞չ քաղն վոսկիլ, և կուժն հորդուն մաղերով.  
Վո՞չ գաղթն ըշտապ աշնան նախշուն հալքերուն,  
Յեվ վո՞չ ել դարձն ուրախ իրենց լքված բո՞ւյն...

## Հ

Վերջին մի տեհչ վասեց սիրու Լելայի.  
Մի անգամ ել իր մարմնալոր աչքերով  
Իր պերճ Մեջնուն տեսնելու տե՛նչն ահազին.  
Նորե՛ն անոր ժպիտին մեջ թաղվելու,  
ինչպես ձուկը լճի բյուրեղ ջրերուն,  
Հավկըն ել կապույտ յերկնքին մեջ կը սուզի.  
Ու անկե՛ վերջ ել ինք բաժինն ե մահին,  
ինչպես թափող տերեն ավարն ե հովին:

Կմմախքին դեմ, վոր իր առջևն եր գիղված,  
Ծունկի յեկած, աչքերն լացի դես հորդան,  
Նա՛ յետ կանչեց իր սեաբախոտ սիրական...

— Զա՛յն տուր իմ Մեջնուն, ձա՛յն տուր, սիրական,  
Հոգին հանեցիր սիրածդ աղջկան.  
Հե՛յ, ալմաստ սարե՛ր, հե՛յ զաշտ ու ձորեր  
Վիրավոր սիրուս յես ձե՛ղ եմ բերեր:

Թափեցեք ձեր ցողն, ձեր ըույլն ու արե  
Անբախտ սիրածիս վոսկըրերուն վերեւ.  
Թող կյանքին դառնա վնչպես խոտ ու ծառ  
Գարնան արեի թովքին տակ պայծառ» :

Յեվ մարդաբայա իր արցունքին լնդմեջեն  
Լեյլան տեսալ տեսիլն ես քաղցր, վաղաքուշ.

Կմմախքին վրա մի միտ յեկալ տյնքա՛ն թարմ,  
Վորքան լուսուն դեռ նոր բացված քափուր վարդ.  
Լանջն ուսնեցալ նորոդ չունչե մը առույդ  
Գարնան կախարդ ոյուքերուն պես կենաբար.  
Ու գեմքին վրա մի վառ ժողոտ ծաղիս ծաղկեցալ  
Ենքան պայծառ, վոր առավոտն իսկ չունի՛ :

\*\*\*

Յեվ կը խաղար շամբին մեջ հավն յերջանիկ  
Թիերն լույսով, բույրով, սիրով բեռնավոր.  
Արծաթ ալիք մը՝ թափալած լճափին՝

Կը պսպղար վոսկուն վրա ավաղին .

Յեվ մնջունը մի զուբդ սիրող տատրակի

Որհնության պես դաշտին վրա կը փռվեր :

Մեջնուն իր հետ խոտ ու ծաղիկ կոխելով

Աղբյուրի պես յերդ ու ցոլքով կը քալեր :

Յեվ մեծ տանջանքն ու հսկումի սև տարին ,

Յեվ իրենց չուն գեղի Բառին , և ձմեռ ,

Ու վառ կարոտն , վոր իր հույսերն եր խանձեր ,

Անդությ յերադ կըթվեյին Լեյլային ...

\*\*\*

Լեյլան կըսեր Մեջնունին .

— Զեր տուն տա՛ր լինձ , Մեջնուն , բոնած ես ձեռքես ,

Հոտա՛ղ լինիմ , կալվո՛ր լինիմ , ի՞նչ կուզես .

Տա՛ր լինձ , բոնած ես ձեռքես ...»

Մեջնուն կըսեր Լեյլային .

— «Տընես մի քա՛ր չե մնացած քարի վրա .

Լոկ ծեր ազամին չոր բարտին կը կուա՛

Յեղերորեն իր տաղտկալի շարական .

Մայրս մեռավ՝ խոցված լուրե մը դուժկան .

Հանդս ու այդիս—պարման ձեռքովս մշակված

Խոսկա՞ն են այժմ , սեղ ու փշով ծածկված ,

Քեզ ո՞ւր տանիմ , քաղցր Լեյլա՛ս ...»

Լեյլան կըսեր Մեջնունին .

— «Մեջնուն , մատադ , արի յերթանք իմ հոր տուն ,

Զով ջրի ափ, սարի լանջին իմ հոր տուն,  
Աւք մշտական ծաղկատոն եռ գարուն.  
Մեջնուն, մատա՛ղ ,արի յերթանք իմ հոր տուն...»

— «Բո հոր տան մեջ մշտակ Մեջնուն տե՛ղ չունի.  
Յել հն աբգեն լոկ մի հուշ ե անցյալի.  
Մարած ե հուսկ կայծը անոր կրակին,  
Յել պաղ մոխիրն ցրիած անթիւ հովերու:  
Վայրող մի խումբ աղնվական դողերու  
Իջավ սարեն ինչուս անզուսպ պատուհան.  
Հայրէ զգալով վոր յեկած ե իր որհաս  
Մի մեծ ժայռէ վար նա յեղավ դահավեժ.  
Հոտերն տարան գեղ Համադան ու Դավրեժ  
Մորթելէ վերջ ձեր կովողները բոլոր.  
Յել ժողովուրդն յեղավ նորեն հպատակ  
Աղնվական եղ դողերու վոտքին տակ:

Ավա՛ղ, մարած ե աստղը քո տան ու քո հոր.  
Քեզ ո՞ւր տանիոմ, հե՛ղ Լեյլաս...»

— «Տա՛ր ինձ, Մեջնուն, ուր կուղես,  
Մարերե դե՛ն, ծովերե դեն—անապատ,  
Արեադարձն, դեալի հյուսիս ձյունապատ,  
Հոն ուր սերը չունի շղթա ու պատվար,  
Ուր մարտը տերն ե վաստակին իր արդար.  
Գերիդ եմ յես, քո սիրուհին, քո ըստվեր  
Ահա կուղամ, բա՛ց ինձ հզոր քո թեկր...»

\*\*\*

Հաջորդութ որը յերբ իր վոռքըիկ հասին հետ  
Ծելուկ հովիպն հասավ Սինջան ծաղկավետ,  
Լճակին մեջ, յեղեղներու շուրբին տակ  
Գտավ հանեց հեղ Լեյլայի սուս դիակ :

Աչքերը բաց նա դեռ Մեջնուն կ'երազեր.  
Նուհուժարով զուզված եցին իր մազել  
Կազմելով զոզտը պսակին անրիծ հարսնության :

Կրծքին սեղմած եր զանգը չոր, սիրական  
Իր վեսային, իր Մեջնունին վազամեռ—  
Աւ Լեյլային դարձած կարծես կը ժողոհե՛ր . . .

Պ

ԼԵՅՐԱՆ ՈՒ ՋԵՅՐԱՆ

Սկաց տիրոջ լա՛ձն եր Հեյրան—  
Թիկնեղ ու քաջ ու բարի,  
Վոր խենթի պես սիրեց Ջեյրան—  
Ոչակ մի կույս չինարիի՛:

Վորպես բարտին դաշտի միջին  
Յերենի՛ յեր Հեյրան.  
Վորպես շուշան հովտի միջին  
Շնորհալի՛ յեր Ջեյրան:

Սպիտակ ձին տակ իսպալեն  
Նա դժուզի շուրջ ման կուգար.  
Լուսնակի պես ծըծըղկտալեն  
Ջեյրան ջրի դուրս կուգար:

—Քո շնորհքին Մակաց նշխարչ  
Ջե՛ արժանի, իմ Ջեյրան.  
— Քո մեծ սիրուն միայն հարմար  
Կանա խորոշն ե, Հեյրան:

— Մթնած ե վողջ աշխարհ, Ջեյրան,  
Դու իհծ համար վառ որ ես,  
— Դալար բոյիդ մհոնիմ, Հեյրան,  
Հաղարի մեջ հոր՛ը ես:

\*\*\*

— Վորովի, էն՝ ո՞վ ե քո սիրած  
Վայե՞լ ե նա Մոկաց տան.  
Վո՞ր մեծ զարմեն ե նա սերած—  
Վո՞ր արքայի դեղլաստան...

— Հայրիկ, գտա յես Մոկաց տան  
Միաւկ վայել տիբռուհին.  
Վո՞չ Մըսր, վո՞չ Վիրք ե վո՞չ Վոստան  
Ինոր հավոար կին ունին...

Բոյը բարակ ու դալա՛ր ե  
Նոր իսպահան ուոյք ոլես,  
Յերեսն՝ արև, ունք՝ կամար ե,  
Յերանն ընտիր նուոյի ոլես :

Արեի տակ դեռ չե՛ բուսեր  
Ծաղիկ քանց յարս գովական.  
Վո՞չ մեկ աշուղ կրնա հյուսել  
Գովքն են մշակ աղջկան

Հոնքեր կիտեց Մոկաց իշխան.  
— Զարք խարեր են քեզ, Հեյլան.  
Բամիկ մի քած՝ Հա՞րս Մոկաց տան—  
Այդ չե՛ հնար հավիտյա՞ն :

\*\*\*

Քունը փախավլ ինոր աչքեն  
Հայ չի դպավլ բերանը .  
Ալրուն գույնը թափառլ դեմքեն—  
Ել չեր նա նույն Հեյրանը :

— Մոմի նման զունատ ես դու—  
Իմ աչքի լույս, լմ Հեյրան .  
— Ասոված քանդեր կարդը մարդու  
իմ միտել սեր, լմ Զեյրան :

— Կերթամ քաղաք-կասեմ քո հոր  
Սիրտը որենք չի մանար .  
Դեռ մեր սիրու նման հզոր  
Մեր չե՛տեսած ես աշխարհ :

Չե՞ զոր հայրդ ե—ու սիրտ ունի .  
Նա՛ ել մեղ պես սիրած ե .  
Մարդ ե, կ'ելնի մեր սերն կ'որհնի—  
Մեր դիրն եսպես դրա՞ծ ե :

Զարկարլ դնաց Մոկաց քաղաք—  
Իշխան զողան եր մեկնած ,  
Դարձավ, հասավ զողանն արտէ,  
Որն իրիկուն դեռ չեղած :

Մակայն անոր աղաչանքին  
Իշխանն մնաց անուարեր .

— Ամենքն ևս խենթ ձեր տարեքին  
Դուք չեք գիտեր ի՞նչ և ոեր :

Մոկաց հզոր տան ժառանդին,  
Ես խենթ ոերը չե վայել.  
Քաջն իր փառքին, ոերն իր կարգին—  
Ասոված եսպես և կամեր :

Հոր դեմ ավալ կարիճ Հեյրան,  
— Քեղի նման Մոկս ու փառք.  
Իմ տունն-ասովալոր, փա՛ռըն և Զեյրան—  
Բավկ հեծալ ձինն արագ :

Հավասալ Զեյրան իր թարքն առալ.  
Կայծակի պես քշեց ձին.  
Ամպի նման փաչին յիլալ,  
Քող հյուսելով սիրային :

Իշխան կանչեց շա՛տ ձիալոր  
Ու ավալ խիստ հբաման,  
Ետ չի դառնան քանի դեռ վոր  
Յետ չեն բերած և Հեյրան :

\* \* \*

Զեյրան փոշու ամպի տակին  
Տեսալ մի խումբ ձիավոր.  
Զրահը վառ, սուրը՝ ձեռքին,  
Դաժան ասոված ու դինվոր :

— Տես, տես Հեյրա՛ն են ջուխտ յեղնիկ—  
Քառասուն չար շուն յետեւն.

— Դու մի՛ ախրիր, մարալ աղջիկ  
Վերև անհաս սարե՛րն են:

— Նետ ու աղեղ ամուր բռնած՝  
Են տեղ կանգնած ե վորսկան.

— Դու անհոգ կաց—մեծ ե աստված,  
Նետ չի դանի վր նշան:

— Հեյրա՛ն, տե՛ս են կարմիր պարան  
Փախի ճամբիր յերկայնքին.

— Կալմիկ կատկաչ ե այն, Զեյրա՛ն—  
Ծաղկած են զով բարձունքին:

— Ժայռի ծերին կայնալ անհամ'ս  
Աղատ ու սե՛դ են յեղնիկ.

— Թռի՛ր արագ, ջան յերկովարս  
Տա՛ր իմ Զեյրան, իմ յեղնիկ:

\*\*\*

Սարի ծերեն չուքերն ընկան  
Հեծյալներուն վիթխարի՛.  
Հեյրան բռնեց ծաղկած ճամբան  
Ծաղարթախոտ անտառի:

— Քանց ուռի ճյուղ հ՞ր կը դոդաս,  
Իմ ջան աստվոր, իմ Զեյրա՛ն.

— Քանց մաս արե կը շողջովաս ,  
Վախեմ մարեն քեզ , Հեյլա՞ն :

— Գետով են դին—քաջ ու բարի  
Կաշտի ծռերն են հզոր .  
Են աեղ—լանջը են ովես սարի  
Տանինք մեր սեսն սահսրավոր :

Զի չեր ասես—հո՞ւր ու յերաղ  
Հետ յերկնուց մեկ կը թոներ .  
Յել գունդն անդուլ—արագավալաղ  
Անշեղ անոնց հետքին եր :

Հասան Զոել , ուր Մոկաց գետ  
կը զուդվի հետ Տիգրիսին .  
Հեյլան անցավ գետն վորպես նետ  
Թանկ յարփին հետ միասին :

Բայց գնդին հետ գետն արաց խաղ  
Վորն կուլ տվից ձիուն հետ .  
Վորն—քարե քար—արնաշաղախ  
Քշեց տարավ նա անհետ :

Միայն մնաց պետը գնդին  
Վարար գետի են մեկ ափ ,  
Մահվա գեղինն իր չար գեմքին ,  
Ու հողուն մեջ մեծ սարսափ :

\*\*\*

Յերբ կաշտ հասան—մութն եր իջած,  
Յեկան—տարան հյուրատուն,  
Հոն հանդ առին ու կերան հաց,  
Արին իրենց պատմություն :

Ու քաջ ծուերն կաշտի չքնաղ  
Խորհուրդ արին միասին.  
— Մեր հողն ու ջուր, մեր հացն ու աղ  
Զեղի հալալ ե—ասին :

Են տեղ սիրով Հեյրան—Ջեյրան  
Շեն ու պայծառ տուն յեղան.  
Տեսան թոռներն իրենց թոռան,  
Յեկ նույն սիրովն ել մեռան :

\*\*\*

Դարեր անցան ու Մոկաց տուն  
Անցավ փչող քամու պես,  
Անցան պետերն, իրենց անուն  
Քամու տարած փոշու պես :

Բայց կը պատմեն բերնե բերան,  
Թե ի՞նչ խորու եր Ջեյրան,  
Թե ի՞նչ սիրով սիրեց Հեյրան—  
Գեղջուկ եղ վաղող աղջկան :

ՄԱՍԹԵԼԸ

Վերամշակված

Ոխտանի սեղ կատարեն,  
Որո՞ր, չորոր յա՞ր,  
Թհ առավ Սինամ կաքավ,  
Հուրն ի հրեղեն յա՞ր.

Տեկ աղեն չող-լող առալեն  
Որո՞ր, չորոր յա՞ր,  
Հանց յերազ ծովափն յելավ,  
Հուրն ի հրեղեն յա՞ր:

Բոժոժներն զըրընդալեն  
Սոնա աղջկէն հոն կանդ առավ,  
Ծամերու ծանըութենեն  
Ծամթելն կարավ ի ծովն բնկավ:

— Իմ վլզի վզնոց կուտամ  
Դե՛, հանի՛ր ծամթելն ի ծովեն.

— Լողլորի մեկն ել յես եմ,  
Զե՛մ հանիր, ծամթելն ի ծովեն:

— Իմ կամար ընքվեր կուտամ,  
Դե՛ հանիր ծամթելն ի ծովեն.

— Լողլորի մեկն ել յես եմ,  
Զե՛մ հանիր ծամթելն ի ծովեն:

— Իմ կարապ վզիկ կուտամ,  
Դե՛, հանի՛ր ծամթելն ի ծովեն

— լողվորի մեկն ել յես եմ,  
զեմ հանիր ծամթելն ի ծովեն:

— իմ չինար հասակ կուտամ,  
դե՛մ հանիր ծամթելն ի ծովեն.

— լողվորի մեկն ել յես եմ;  
զեմ հանիր ծամթելն ի ծովեն:

— իմ կառկաջ լրերան կուտամ,  
դե՛մ հանիր ծամթելն ի ծովեն:

— լողվորի մեկն ել յես եմ,  
զեմ հանիր ծամթելն ի ծովեն:

— իմ սրտի՛կ քեղի կուտամ,  
դե՛մ հանիր ծամթելն ի ծովեն.

— իմ ջուխտակ աչքիս վըրե՛ն  
Ծամթելն հանեմ անտակ ծովեն:

\*\*\*

— Յար ունիմ, յար ունիմ,  
Յա՛րս ե դալար չինար ծա՛ռ,  
Յար ունիմ, յար ունիմ,  
Խնձոր թալեմ, յեկ ինձ տար,  
Յար ունիմ, յար ունիմ,  
Շեկիկ լողվոր սիրահա՛ր,  
Յար ունիմ, յար ունիմ,  
Եեկ պաղն ուղես, յերկուսն ա՛ռ:

— Զա՞ն աղջիկ քեղի համար  
Որո՞ր, շորոր յա՞ր,  
Յոթ ծովի տակ կիջնեմ յես  
Հուրն ի հրեղեն յա՞ր :

Նոր ծամթել ծամիդ համար  
Որո՞ր, շորոր յա՞ր,  
Շոռ ամպեն կը հյուսեմ յես  
Հուրն ի հրեղեն յա՞ր :

— Ինձ քաշել մի՛ տար կարոտ,  
Շո՛ւտ ինձ արի ուսիդ նարոտ.

— Բարով դա են անճառ որ,  
Իմ վառ արի, իմ ասովոր :

— Իմ վզիկ մատա՞ղ քեղի,  
Դե՛, շուտ արի՛, ուսիդ նարոտ,

— Քո վզիկ պերճ մարմար սյուն  
Պատկ կապած բարի լուսուն :

Իմ ընքվեր մատա՞ղ քեղի,  
Դե՛, շուտ արի՛, ուսիդ նարոտ.

— Քո ընքվեր յերկնից կամար,  
Լողվորյադեն քեղի մատաղ :

— Իմ բերան մատա՞ղ քեղի,  
Դե՛, շուտ արի՛, ուսիդ նարոտ.

— Քո բերան պատվական նո՞ւռ,  
Նոսն գինուց վա՛ռ՝ քո համբուլյո:

— Իմ հասակ մատա՛ղ քեղի,  
Դե՛, շուտ արի՛, ուսիդ նարուտ.

— Հասակդ ե խողահան ո՞ւռ,  
Հպարտ կանդնած կալերու դուռ:

— Ի՞նչ ունիմ՝ մատա՛ղ քեղի,  
Դե՛, շուտ արի՛, ուսիդ նարուտ.

— Ինձ համար արծվի թև ես,  
Վառ ծխածան, հուր-արև ես...



— Յար ունիմ, յա՛ր ունիմ  
Խնձոր ունիմ, կծած ե,  
Յար ունիմ, յա՛ր ունիմ  
Չորս բոլորն արծըթած ե.

Յար ունիմ, յա՛ր ունիմ  
Աղբերս ուզեց չը տվի,  
Յար ունիմ, յա՛ր ունիմ  
Ասի յարի կծած ե:



Յ Ե Ր Ց Ը

Յես քո ճամբան լինելի վոսկեսփոշի, վոլորուն,  
 Վոր տարփորեն կը գրկե դալար կողը սարերուն.  
 Գալարներուս մեջ դյութիչ պատկերդ ամուր դրկեցի  
 Ու մոտ ծաղկուն պուրակին քեզ նայելու պառկեցի  
 Յերբոր դու հանդ կառնելիր զով աղբյուրի մշ ակին:

Ու յերբ կեսոր քարվանը կը հորանջեր ծուլաբար՝  
 Շողեն հիվանդ՝ կոխելով դաշտերն անջուր ու անծայր  
 Գյուղին հովիկը ծոցին՝ քեզ վարեցի սիրադին  
 Կարիարդական շղարշը պարզած անուշ յերաղին  
 Վոր դու հանդիստ քալելիր այդ տոթակեղ  
 ճանապարհ:

Յերբ դար գիշերն աստղապարդ, ու զնդոցով մոլորուն  
 Ճամբան ընկներ քարվանը դեպի ափերն անանուն,  
 Յես ականջիդ մնջելի վեպն աստղերուն դյութական,  
 Ու սիրողիդ սրտին մեջ քո բացած վերքն անդարման.  
 Յել ըսելի թե ոերբդ քեզ կսպասե կարուսով:

ԲԱՑՑ ԴՈՒ ԶԵՍ ԳԱՐ

Լիճն ե հոսած լուանի կաթեն հըանուշ,  
Ու ծոցին մեջ աստղեր վառած՝ կը պառկի.  
Նախակս կարեր եմ մի ափի վարդաքույշ,  
Ու ջուրն յերա՛ղ ե և ազադն ալ՝ վոսկի՛:

Ուսիդ թափած դիշերն աղվոր մաղերուտ՝  
Արի՛ արծաթ ես լուսնկա ճամբայեն.  
Արի՛ վորպես մի տրտում յերդ գդվանուտ—  
Նախակս ջրի լույծ համբույրին յես քակեմ:

Անմահական նունուֆարին պես գրդուր,  
Վոր լուսնակի տարփանքին տակ կը բացվի  
Հանդարս լճի յերազանքին մեջ մաքուր,  
Նորեն հասակդ թող իմ հոգու մեջ ծաղկի:

Նստիր՝ լինչ փույթ աստղերն տեսքեդ նվազին,  
Նախակս հետ քալե լուսին սիրահար.  
Գերի՛ն լինիմ խաժ աչքերուտ անդունդին,  
Վառ ժպիտիդ յերկինքը բաց ինձ համար:

Կուղեմ հոգիս քո նայլածքի մեջ լուծել  
Ու ժպտիդ տակ բանալ կյանքս վիրավոր.  
Ինչպես լիճը լուսնկային ե բացվեր —  
Ու մեջդ մոռնալ աշխարհն ու վիշտս ահավո՞ր

Բայց դու չես դա՛ր . նավակս թափուր կը հեա .  
Կյանքիս կիջնե թախիծն անհուն , կապարե ,  
Լուսնին ըսեր եմ լացերուդ բարձին վրա  
Նուռ շրթունքներդ իմ միոխարեն համբուրե :



Կ հիշե՞ս, հոգի՞ս, դիշե՞րով ամրան,  
 Յերբ լուսնակ դալար մեր բարտինելուն  
 Առա հասակն ի վար իր մաղն յերազուն  
 Կր թափեր կաթե ջրվեժի նման,  
 Յերբոր Վարագեն հողը խնկավետ—  
 Քաղցր ամեն բանե — բացի քո շունչեդ —  
 Լելակի թփին մեջ կը մարմրեր...

Կը հիշե՞ս քափուր վարդի պուրակեն,  
 Ուր մի զույդ սարեկ իրենց բույն դրին,  
 Յեկ ածուներեն ծաղկին, ուհհանին՝  
 Ուսդ ի վար քակած մազերուդ հյուսկեն՝  
 Ինձ կը կանչեցիր համբույրիդ մեղրին.  
 Յեկ կյանքիդ չերգված մի թովք սիրագին,  
 Գլուխո ծնկիդ՝ մնջելու նորեն...

Համբույրիդ մեջեն կը հիշե՞ս, հրեշտակ,  
 Ինքդ կը հոսեցիր կարոս հոգուս մեջ՝  
 Ինչպես լուսնկան Վանա ծովուն մեջ՝  
 Գարնան անպատճամ իրիկունին տակ,  
 Այս, հաշին անուշ՝ չնչիդ հոտելան,  
 Վորի գոլն այժմ իսկ չնչիս մեջ կղզամ —  
 Մինչ մեզ կը բաժնեն յոթ ծով ու ցամաք:

Դադաղիւ պես լուռ սենյակիւս մեջեն  
Լացով կը գրեմ ես զիրս պանդիտի .  
Սիրտս ինքն իր մեջ մոխրանա պիտի  
Քո սըտին նորեն լուծվելու տենչեն .  
Անհուն կարոտեն կուրծքս կը պատոի .  
Ո՞ւր թափեր ես լացս , ուր ըսե ինձի .  
Հոդյա՛լ , ի՞նչ կարժե կյանքն առանց քեզի :



### ՅԵՐԻ ՎԵՐԱԴԱՐՆԱՍ

Յերբ վերադառնա՛ս հոգնած քարվանի անուշ  
զնդոցով,

Բեռնձերդ առտղա ծաթրին — կնդրուկով, յերազով  
ոծուն,

Ու յոթը ծովի թովիչ նայվածքեն աչքերդ դինով,

Պիտ ելնեմ զուգեմ ճամբատ ծաղիկով մեր  
հովիաներուն:

Յերբ վերադառնա՛ս մնջելով հեքիաթն ահճառ  
ափերու,

Վորպես իրկրուն հյուծող կյանքերու վերքերը կարմիր.

Յավոտ սպասումս և անհուն կարոտս քեղի ոլասմելու,

Քո ճամբի վրա պիտով վոգեմ ցավի յերգերը անդիր:

Յոթն յերկինքներեն հույսի շեկ կայծեր խլած գաս  
յերբոք,

Մարող ոճախիդ սրբազան կրակն միշտ պահելու վառ,

Հողուս հոտակիտ խնկեն մաս առ մաս պիտ դնեմ անոր  
Բարկ շողյունին մեջ — կյանք — բույրովս պատկերդ  
խնկելու համար:

Յերբ վերադառնաս կոտերըդ ցավի արցունքեն  
կարմիր,

Ուր կուրծքըդ քահոված կարուաեն անոնց, վոր  
այլհաս չկան,

Եղ անբախտ գլուխող սերերե այրի ես դրկես մեջ  
պի՛ր,  
Բնավեր արծի՛զս, թող տառապանքիդ յես մատաղ  
ըլլամ :

Կամ թե վոր դառնաս գունա՛տ վորպես հորդ շիրխմին  
մարմար,  
Յել աշխատանքեն քո չինար հասակ կքած ու ավեր,  
Թող ցամքի արյունս՝ մեսնող սրտիդ մեջ հոգելու  
համար  
Ու դիտեմ կյանքիդ հետ ոլիսի փթթիմ յել, ոլ իմ  
սի՛ր :

ՎԵՐՁԻՆ ԳԵԿՏԵՄԲԵՐ

**Պ**ո պատկերի խորանին տակ յոթ տարի  
վերքն ամիս մեջ քեզ կսպասեմ, սիրական.  
Հույսը՝ շիջած կանթեղին պես կը մարի,  
Հոգիս՝ հատնող խնկի ծխին ե նման:

Ճոկս փթիթով մեր դռնեն դուրս յոթ մայիս  
Հաղար ծաղիկ բերին փարթամ ու սիրուն.  
Յեկ այդ ծաղկած ամայության մեջ հոգիս  
Կարոտ մնաց քո դրվանքի վարդերուն:

Ու յոթն ամառ դաշտերու ծոց թափեցին  
Վոսկի ծովեր՝ խաժ ցորենին բոցահեր.  
Մանդաղն ուսին՝ դեռ կսպասեմ առանձին,  
Արտիս միջին մի վոսկի հասկ չե՛ բռւսեր:

Յեկ հուշերուս պարտեղին մեջ՝ յոթն աշուն  
Զոր վոստերես դառն մորմքներ կափեցին.  
Յեկ յես տեսա ինչպես թերթերն ազաղում,  
Բարձիս վրա ընկան նման իմ լացին:

Սեր, այս վերջին դեկտեմբերն ե, վոր սեմիս  
Ու յերազիս իր հուսկ ձյունը կը մաղե.  
Տժույն պատանքն, վորին փարի պիտ հոգիս  
Անամանո՞ր. ա՞յս, այս գիշերն ի՞նչ պաղ ե:

Քո պատկերի խորանին տակ, յո՛թ տարի  
Վերքն ափիս մեջ քեզ կսպասեմ, սիրական.  
Հույսը շիշած կանթեղին պես կը մարի.  
Հոդիս՝ հատնող խնկի ծխին ե նման:



## ԱՆՎԵՐԱԴԱՐՁ

Ծերբ ձյունածաղիկն մեր մարդերուն մեջ բուսնի,  
Յեկ մանիշակն ու սուսամբարն դլխահակ՝  
Մատղաշ հովի պաղն ընդունի ինկենին՝  
Ծերբ մասուրի յերազարույր շուքին տակ:

Յերբ գառները հովիաներեն կաթ մայեն  
Սարալանջի իրենց ձյունեղ մայրերուն.  
Յեկ հոտաղը՝ դինով հովի թարմ բույրեն՝  
Իր հորովելն հանձնե բուրյան հովերուն:

Մի փունջ կապե՛, մա՛յր, սարերու կակաջեն,  
Վարդ ու մուշկեն ու նարդիսեն աչաղեղ.  
Ու ոեհանեն քո գորովիդ պուրակեն,  
Մեջը թափած համբյուրն հոգուտ սիրազեղ:

Այն ժայռի մոտ ուր գեռ ուժդին կը հնչեն  
Բոցե տառերն քո վողջերթիդ անմոռաց,  
Ուր վոր լացըդ գեռ կը վառի, սալաքեն,  
Կայծոռիկի մի հույլի պես կայծ առ կայծ.

Կայնե՛ այնուեղ փունջը սեղմած քո լանջին  
Յեկ վոգեպինդ ինձ սպասե, անդին մա՛յր,  
Ու յես պեղած հետին կայծերն իմ սրտին՝  
Քեզ պիտի դամ առտվա ճամբեն վարդավառ:

Կարավանի մեղմ դողանջով հեշտագին  
Պիտի գամ յես, բեռներս ոծուն թույրերով  
Յոթը անմեռ յերկինքներու բորբ լույսին,  
Պիտի գամ քեզ հաղար բարիք ձյունելով:

○

Յեվ մայր կապեց փունջը դարձի յերգերով,  
Ու ժայռին քով կեցած զավկին կապասեր.  
Փունջը հույսի արցունքներեն թրջելով՝  
Աւ ժայռին մոտ, պանդուխտ զավկին կ'ապասեր:

○

Մոմին աղոտ լույսն լացին տակ պառկած՝  
Անկե տժույն, անկե նիհար կը մեռներ  
Հյուծախտավոր դավակին անոր սպասված,  
Անուրջին մեջ դրկած փունջը ծաղկահեր:

○

Սպասումին՝ չորցան դալար ծաղկիներ,  
Դաշտին գիրկը վոսկի հունձքը կը խայտար.  
Ու ժայրն հույսով փունջը սրտին կը սեղմեր՝  
Սպասելով յեկվոր զավկին վոր... չի կա՞ր...

○

Վ Ե Ր Ա Դ Ա Ր Զ

Պեմքու լույսով վարդաղոծ, կտրի՛ճս, դու ինձ կը  
դառնաս,   
Բեռներուղ մեջ ես ժողվեր գանձերն անտակ ծովերուն,  
Ու հողինդ կը պսովիկա մի նոր կյանքի ալելուն,  
Սեր ու կյանքով բեռնավոր նորեն դու ինձ կը դառնաս:

Մըրկարաշ նժույդիդ ամբակներուն տակ վոսկի՛.  
Մոխրին վրա հասկերը արևի պես կը ծագիին,  
Ու գողիս մեջ՝ մուշկ ու վարդ, վոր կը թափեմ քո  
առջին.

Յեզ ուսերես վար կընկնի գիշերաքողն իմ սուգի:

Հերի՛ք, վորքան իմ հոգին յես շինեցի գերեղման  
Յեզ պատանքներ հյուսեցի իմ արյունեն ու կյանքեն.  
Յելնեմ, ամոթս ե՛ն անդարձ գիշերներուն հետ  
թաղեմ.

Հաղար կյանքով բեղմնավոր դու ինձ կուլաս,  
սիրական:

Առտվան հետ կը ծաղկին մեր գյուղն ու տունն  
ավերակ.  
Վաստակն հանուր կը հորդի այլեստաններն, արտե  
Յերբոր սիրու գանձերով ինձի կուլաս դու հպարտ.  
Յեզ բոցավառ կվառի մեր ոճախին մեջ կրակ:

Ն Ա Զ Ա Ն Ք

Մազերդ վորպես ջրվեժ ուսեղ վար կախած՝  
Պարտեղն իջնենք, սիրակա՞ն.  
Մեր վարդերու գգվանքեն ա՞յդն և փախած.  
Խոտն ու ծաղիկ դեռ կուլան:

Անուշ աչքերդ քաղցր յերազով թաթառվուն՝  
Ծաղկոցն յերթա՞նք, իմ անդին.  
Քո սանդալի պարերդներեն այդ հնչուն՝  
Հասմիկները թող բերկրին:

Շունչդ կը բուրե հոտն լելակին ու մուշկին  
—Շուշան քաղե, ո՞վ իմ սեր.  
Հովերն դեմքըդ վառ արշալույս կարծեցին  
Ու թուխ մաղերդ՝ հեշտ դիշեր:

Ծաղկոցին մեջ ոեհան ու վարդ կը քաղես.  
—Զյուն ձեռքերդ են ցողաթոր.  
Ու կակաչներն մի համբյուրի բոցին պես  
Կայրին վոտքիդ տակ աղվոր:

Կը մոտենամ ծածուկ՝ վղին քո կարապ  
Կը դնեմ վարդն իմ պաղին.  
Աղա արադ յեղնիկին ալես հապչոտապ  
Ծառերուն մեջ կը փախչիմ:

Կը թոչկոտես դ'ու յետեվես՝ հրեղեն  
Թիթեռնիկին պես աղվոր,  
Վոր կը թոկ մի յերազի յետեն  
Թհերն մեղրով բեռնալոր:

Յեվ կը փախչիմ՝ գինձ ու ծաթրին կոխելեն՝  
Վոր վոտքիոդ տակ կը ծաղկին.  
Ու կը վաղեմ առուներու յեղերքեն՝  
Վոր յետենոդ կը հոսին:

Ու կը բռնես ինձ շուքին տակ յերազուն՝  
Դեղձենիին մեր դալար.  
Աչքերուդ մեջ սիրու հրդեհ մը անհուն,  
Լանջոդ՝ խանդեն հրավառ:

Կը նստեցնես ինձ խոտին վըա հեշտագույր՝  
Գլուխս ուսիոդ կախարդած.  
Դեմքիս վլընկինի քո մաղերու հորդ դանդուր  
Վորսկես դիշերն անթափանց:

Մոռցած արար—աշխարհն ու կարդն իրերու  
Իրենց վաղքին մեջ տենդուտ.  
Մեր չրթները կը միանան իրարու  
Մի համբույրով արեվոտ:

Վեր, արևին տակ կեռասներն կը կարմրին  
Քո շրթներու նոան պես.  
Յեվ մի ալիք վլընկինի վոսկի սփունքին  
Հոն մեռնելու սիրակեզ:

Ս Ի Ր Ե Ր Գ

Հասակդ շիտակ մի ուռի՛ յե իսպահան —  
 Դալա՛ր, դալա՛ր, ո՛վ իմ հնձվոր սիրական,  
 Ծլած ափը սարի յերազ աղբյուրին,  
 Վորի պատկերն անուշ և չուքն հոտեան  
 Զուրբ գրկած կը թալալի հեշտագին՝  
 Ժայռերն ի վար յերանորեն մեռնելու:  
 Հասակդ դալար մի ուռի յե իսպահան:

Դեմքը հունձի լիալուսնա՛կն և պայծառ,  
 Վոր կը սփոռե իր փելքն ու կաթն լուսավառ  
 Ծովակին ծոց ու պուրակին վրա դալար.  
 Յեվ կը ժպտի մշակ աղջկան սիրագին,  
 Վոր բացեր և իր վիզն ու ծոցը մարմար  
 Անոր աննյութ և լուսաթոր համբույրին —  
 Դեմքը հունձի լիալուսնա՛կն և պայծառ:

Սիրտը կըզձա քեղի այնպես' կաթողին,  
 Ինչպես վայրի նարգիզն՝ սարի վտակին  
 Յեվ սպասող կալվորն՝ փչող հովիկին.  
 Ինչպես արար—աշխարհ՝ ծագող արեին  
 Յեվ անոթի ուլիկն իր մորկան կաթին —  
 Սիրտը կըզձա քեղի այնպե՞ս տենդագին:

Սարի աղբյուր, հստակ աղբյուր կարկաչուն,  
Յա՞րս և կայներ վոսկի արտին մեջ ծփուն.  
Ու յերդելով հասկե պսակ կը հյուսե.  
Ես վառ համբույրս անոր բերնին դու քսե',  
Յերբ նա ծարավ գա դյութավան քո ջրին.  
Հսե,՝ գերին եմ իր կանաչ արևին:

ԱՆՏԵՐ ԳԻՒԵՐ

Անտեր գիշեր բուք ու բորան  
Անտուն մոլոր, հողմակոծ՝  
Յես կանդ առի, յա՞ր քո դրան  
Շունդ եր այնտեղ, դուռըդ՝ դոց:

Դու դուրս յեկար հանց վարդ բացված,  
Բոցի պես վառ՝ քո թշեր.  
Շունը ներս առիր, այ անաստված,  
Ինձ դուրս թողիր են գիշեր:

Այ սև գիշեր — բուք ու բորան,  
Զյունն իմ զլսիս կը մաղվեր.  
Հազար յերնեկ տվի քո չան —  
Անտեր գլուխոս ո՞վ թաղեր:

○

ՓԱՐԹԱՄ ԱՂՋԻԿ

Անդութ, թե ինձ չեյիր սիրեր  
Ե՞ր սիրուս հետ խաղ արիր:  
Դուռըդ բերիր ինձ են գիշեր,  
Մատաղ սիրալս դաղ արիր:

«Մեր միջն կա մե՛ծ անջրակետ»  
Դու ինձ ասիր լալաղին.  
—Շատ գանձ ունեք ու հայրդ ե պետ —  
Յես վորը լածն եմ մշակին:

Դո՛ւ կը հաղնես մետաքս հալալ,  
Լանջիդ՝ ակունք չարե չար.  
Խսկ ինձ եժան կտավն ե լավ —  
Իմ տունն՝ աղքատ, անպա՛չար:

Փարթամ աղջի՛կ, բայց այս ամենն  
Ի՞նչ կազ ունեն սիրու հետ.  
Սերն անյութ ե, ա՛յ անորեն,  
Սերն ի՞նչ ունի դանձի հետ:

Անգութ, թե ինձ չեյիր սիրեր  
Ե՞ր սիրուս հետ խաղ արիր.  
Ինձ դուռըդ բերիր են սե գիշեր,  
Դալար. սիրալս գա՛ղ արիր:

## ՎԱՐԴՆ Ի՞ՆՉ ԱՆԵՍ

Մարմար քարեն կըվկըվալե՞ն  
Սինամ կաքավ թև առավ, յա՞ր.  
Որո՞ր, չորո՞ր փունջ կապելեն  
Մշակ աղջիկն հանդն յեկավ, յա՞ր.

Փունջն եր քափուր, յարն՝ աննման  
Սիրտըս ծաղկավ վարդի նման:

Չուներ կաքավն յարիս քելքի  
Թելիկ—նազան չորորը յա՞ր.  
Վարդը չուներ յարիս դեմքի  
Փթթուն ժպտի բոսորը, յա՞ր.

Մեռնեմ յարիս չորոր քելքին  
Հուր ու հրաշք արև տեսքին:

Փունջն ինձ տվավ. փունջն ի՞նչ անեմ.  
Շուտ կը թումի դակահար, յա՞ր.  
Թույլ տուր թշեդ մի վարդ քաղեմ  
Վոր թարմ ե միշտ ու դալար, յա՞ր.

Դալար աղջիկ, յերազ ու բույր:  
Վարդն ի՞նչ անեմ յերգ կահբույր:



ԱՐՏ ԿԸ ԶՐԵՄ

Լուսնակ գիշեր, արտ կը ջրեմ —  
Առուն արծա՛թ կտրած ե,  
Սիրտս կրակ ընկալ նորեն —  
Յարս կո՛ուր նստած ե:

Բարով ծլեք, ծիլ ու հասկեր,  
Յարըս դալար ծաղիկ ե.  
Չինար հասակ, լուսնի պատկե՛ր —  
Յարըս հրաշք աղջիկ ե:

Ածվե ածու ջո՛ւրն ե հորդած,  
Յանքըս սրսուռ դարի՛ յե.  
Յարըս սիրու խոսք ե տված.  
Ես ի՞նչ որհնած տարի՛ յե:

Լուսնակ մտակ, ո՞րն ե ծաղած.  
—Արտըս ծիլ ու կոկոն ե.  
Յարըս շքեղ չո՛ր ե հաղած  
—Եսոր սիրու մեծ տո՞նն ե...

Արտըս ծիրուն, արտն ե դժբռուխտ,  
Շուտով կելնի նա վոսկի.  
Յեկող հունձքին արած ենք ուխտ  
Նարոտ սիրու, պսակի:

ՔԱՐՎԱՆ ՅԵԿԱՎ

Քարվան յեկամլ գնուալեն  
Վերի կանաչ մեր կալեն .  
Ո՞վ ե կուռքա հետ լույսին .  
—Զինար յարըս՝ կուժն ուսին .

Շեկմիկ մշակ տղա՛ յեմ ,  
Հորս տան ճրադ տղա՛ յեմ .  
Ա՛յ նազերով , ջան աղջիկ ,  
Ծով մազերով , հայ աղջիկ :

Քարվանն շատ ա՛կ ե բերած ,  
Վզնոց ու թադ ե բերած ,  
Շալ ու մատնի ու գոհար ,  
Հինա , նարոտ ու քամար .

Յարըս կի՛ն չե—գոհար ե .  
Ունքերն՝ ժամու կամա՛ր ե .  
Ակնարակն բոցի պես վա՛ռ ե .  
Հողիս ընկած կը վառե :

Գլխիդ հարմար թադ առնեմ ,  
Մատիդ՝ զյումբութ ակ առնեմ .  
Ինչպես մեջքիդ թանկ քամար —  
Դու իմ սրտին ես հարմար :

Հուր—նունուֆար , ջան աղջիկ ,  
Անդին գոհար , հայ աղջիկ .  
Մուրադ առած տղա յեմ :  
Նարոտ կապած փեսա յեմ :

## ՄԵԱԿԻ ՍԵՐԸ

իմ արտն եմ յաներ կեսն՝ վոսկի յորեն  
ու կեսն ել արծաթ ու սրսուռ դարի.  
Զրիկս եմ կապեր վարագա ձորեն.  
ԱՌ հովիով աղջիկ, դառներով արի:

Փարթամ վարդի պես ցերեկն ե փթթեր,  
Սկսու ակոս առուն կերկարի.  
Արտիս թալիշը ջուրն ե արծթեր.  
Յերազիս աղջիկ, վարդերով արի:

Եաղկած նշի տակ վուեր եմ սեղան.—  
Լոշ, գինի ու սեր ու հաղար բարի  
Դրած կ'սպասեմ բերվոր աղջկան.  
ԱՌ անուշ աղջիկ, նաղերով արի:

Իրեկվա չուքերն ընկան դաշն ե վար,  
Դեմքիդ պես շիկնած որը կը մարի.  
Ես արտս կըջրեմ յես վորի՞ համար.  
Կարոտիս աղջիկ, կալերով արի:

Յերկնքի վաղքեն հողներ ե լուսնակ,  
Յեկ առուն ի վար իջեր ե պարի՝  
Շուշանի փնջեր իր գլխին պսակ.  
ԱՌ, դալար աղջիկ, համբույրով արի:

Գիշերն է տաճար, սիրտը՝ վառ սեղան,  
Մատներդ նոր հինա դիր ու չուտ արի.  
Ճակտիդ իրրե զարդ աստղեր կը տեղան.  
Սիրուս չքնաղ հարս, նարուտով արի:

Հ Ր Ա Ճ Ե Տ Տ Ը

Այսող հոգիս ամբողջ հրդեհ ու ցասում՝  
Պատնեշին վրա կերթա՛մ իմ տեղըս բռնել,  
Ուր քու բանած կարմիր դրոշակն՝ անարդել,  
Բաղմերդիս հետ, պիտի քակեմ հովերուն...

Բա՛զ վոր իջնե, մա՛յր, մեր գլխին տրտմահակ՝  
Մեզ գերողին անարդ վոտքի պիղծ փոշին.  
Թռ՛զ լոկ մի որ ապրիս յես փառքը կովին,  
Ու հողն ազատ ալ զիս թաղե իրեն տակ...

Կյանքիդ մարմար սյունն է հասակս ծաղկատի,  
Վոր հետս բաժնած քու հոգու մեջ տնկեցիր.  
Յերբ այն ընկնի, սրտիդ տաճարն սգակիր՝  
Թաղվի անոր բացած վիհին մեջ պիտի...

Դեռ փրիկունն ծառերն ի վեր չը հալած,  
Ու լուսնկան չը կաթած մեր ծովին վրա,  
Գուցե զավիկիդ կանաչ արևը սեղնա  
Դեռ կեսորի իր վառ փառքով չը փայլած...

Բայց վո՛չ մեկ վիշտ, վո՛չ մեկ դղջում ու կարոտ  
Գունատ ճակտիս վրա պիտի դուն գտնես՝  
Այլ լույսին դեմ մարող բարի լուսնին պես՝  
Պիտ վողջունեմ ծագող կարմիր առավոտ:

©

Մ Ա Յ Ի Ս Ս Ե Կ

Ա շխարհներուն մենք կուտանք հաց  
Յել կը մնանք մենք քաղցած  
ի՞նչ վոր կա շենք—մենք ենք յինած—  
Մենք ընչալու'րկ , կողոպտալած .  
Զբկողներուն կյանք ու վայելք—  
Մենք՝ անբաժին , Մայիս Մեկ . . .

Եսոր—մել որ—մենք թողեր ենք  
Գործն ու հոգսը դործարան .  
Յել միակամ , պինու կը դարձնենք  
Մեր շարքերու կուռ շղթան .  
Հերթը մե՛րն ե , տերե՛ր , լոե՛ք ,  
Կովի հրամե՛ր , Մայիս Մեկ :

Յել աշխարհի չորս մել ծագեն  
Կյանքի կուղան նո՞ր շարքեր—  
Ամեն դույնի , հազար ազգեն  
Պողպատակուռ բաղուկնե՛ր .  
Եյ , զրկվածներ , յելե՛ք , յելե՛ք ,  
Հատուցման որ—Մայիս Մեկ :

Ու շինարար մեր կամքն հզոր՝  
Փլատակեն հին կարդի՝  
Պիտի կերտե աշխարհ մը նոր—  
Համայնավար նոր կյանքի .  
Խաղ ու ծիծաղ ամենուրե՛ք—  
Նոր արշալույս— Մայիս Մեկ :

Ն Ի Ա Գ Ա Ր Ա

Կ ովի յերգիչս, նիազարա, այսոր յեկա քեղ  
 այցելու—  
 ՔԵՇ, վոր հաղար, հաղար դարեր կույր բնության  
 կամքին հլու՝  
 Վորոտագոռ և լուսաբաշ կարշալես սեպ ժայռերն  
 ի վար՝  
 Հաղար միլիոն արար ճերմակ ճիերու պես  
 մըրկամլար :

Կերդեմ հզոր քո սահանքներ, ուր ալիքներդ  
 փրփրակուտակ  
 կը դալարմին ու կընթանան շոալանքով մի  
 անքանակ,  
 Ու իւենթ վաղքըդ, վոր անդադար ծեծելով քար  
 ափերն ու հուն  
 կատաղորեն կը ծալալի անդնդախոր ու  
 դալարուն . . .

Կերդեմ ահեղ ջրվեժներըդ՝ կաթնավլուր,  
 լուսահասակ,  
 Վոր զմբուխոի և տոպաղի դույնով դուռված են  
 շարունակ.  
 Յեկ վորոնց շուրջ պար են բռնած լույսե ամպեր  
 ու ծիածան  
 Մեր յերդերու մեջ բոցամլառ՝ համայնակար դարու  
 նման :

Ելենք ալ ունինք ուժ և խոյանք և մաքառում,  
Նիստարակ' ,  
Եր դասակարգե, վորի առաջ ըստ հմայքու ժամկ  
կը մնա .

Յել մեր արշավն չի ճանչնար վոչ մի սլատվար,  
առհման ու հուն,  
Ու մենք սլիտի քանդենք ամեն ամբոց դուռող մեր  
առերեսն :

Այն ժամանակ քե՛զ ալ աղատ որ սլիտի տանք—  
վիառքի չըջան,  
Յել քո անհուն դեղեցկություն, ուժն ու դանձեր  
քո անվախճան  
Պիտի բաժնենք ամեն վոքի-ամեն յերկըի .  
Համայնավար .  
Յել դու, հպարտ ու դեղեցիկ, սլիտի տճիս դարե  
ի դոր :

ՓԱԿՎԱԾ ԳՈՐԾԱՐԱՆ

Քերեղմանի պես լուռ և կերպասի մեծ գործարան,  
Վորի զանեն և հյուսեր սարդը նրբին իր վոստայն.  
Վորպես հոկա հարցանիշ կախվեր և սև այն ծխան,  
Արսափահար տչըի պես բաց և ամեն պատուհան:

Մեքենաները ժանդոտ՝ մահվան դալուկն են հաղեր.  
Նման մարած մոմերու՝ կողքան անթել իւիկներ.  
Հանկարծ քնառ մի չղջիկ առաստաղեն կառնե թե,  
Յել կը մաղվի սև փոշին բոցի նման հարստե:

Դեռ յերեկ եր վոր վարձքի հաղար հաղար  
ստրուկներ՝  
Ապանդաստան մեջ այս մութ՝ կապիտալին դիշակեր՝  
Կմախքեն չո՛ր մատներով և թոքերով ըսպառված  
Կաշխատեցին չարաչար վոր առն տանին մի չոր  
Հաց:

Յեկ անարի ու մոտլ այս գործատան մեջ խոշոր՝  
Անխօներու թալալման կեներ ազմուկն ու ժիսր  
Վորպես ցավի հեծեծանք, վորպես տրտունջ ու  
Բողոք

Այս վոճրագործ կարգին դեմ և կեղեքման՝ ահողոք:

Յեկ կը բանվեր թանգ կերպասն-ամբողջ դարուն,  
Ճիածան.  
Քանի՛ կյանքե, արյունե դույներն այդ վառ՝  
Ճաղկեցան.

Յեկ նուրբ թելերն հյուավեցան քանի՛ քանդված  
յերաղե-  
Վոր վարդ կերպասը հագին՝ հարուստ աղջիկը  
նազե՛ ...

Վոր տերերու ստեղծած միլիոնավոր ոլոռնիկներ  
Ավելի թանգ վաճառեն իրենց հրապույրն, իրենց  
սեր.

Վոր յոթ ցամաք և յոթ ծով դառնան հլու հպատակ  
Կապիտալի կայսրերու յերկաթակուո. թաթին տակ:



Բայց հին կարդի քայքայման հասավ շրջանը դաժան.  
Իւ վակլեցան ամբակուո դռներն մռայլ գործառան.  
Հաղարավոր բանվորներ ինկան փողոց, դռնե դուռ—  
Անդործ, անտուն, անոթի՛—բայց վճռական և  
ամուր:

Յեկ ճիշտ այսպէս վակլվեցան հաղա՛ր հաղա՛ր  
գործարան,  
Տասնյակ միլիոն բանվորներ գայլի բերան թողլիե-  
ցան.

Բայց անբաժին ու զրկված այդ ամբոխը սովահար  
Դրոշին տակ Լենինյան ընտրեց կոխի ու պայքա՛ր:

Արյուն պիտի հոսի շատ— Ատլանտյանի չափ առատ.  
Յեկ ամբակուո շարքերով պիտի դանք մենք  
անընդհատ—  
Մինչև քանդենք զրկանքի ամեն ամբոց ու պատվար  
Մեր ժշտահոս շարքերու հեղեղումի դեմ վարար:



Յերբ մեր հզոր դասակարգ շահի վերջին հաղթանակ,  
Յել դրամենք յերկիրը, և՛ նյութ, և՛ խոսք—  
ժամանակ,

Յել հիմնենք մեր լույսե կարգ-հին կարգին տեղ  
խելազար,  
Արշալույսեն չառ պայծառ վառենք մեր որն ու մեր  
դա՛ր:

Պիտի բանանք մենք այն որ ամեն մեկ փակ  
գործարան—  
Վորպես ուժի և կյանքի և վայելքի նոր կայան,  
Ուր խնդումը պիտի դա— արեի հետ կազմե ծով  
Անդասակարդ հսմայնքի ստեղծադործ հարվածով:



Ց Ա Ւ Յ Յ Ը

**Յ**ելած հզոր ու ամեհի վորպես մբրիկ,  
վորպես ովլիան՝ լեռնակուտակ հանած ալիք—  
կուռ շարքերով հասան քաղըի մեծ պողոտան  
Բանվորները ծովածավալ, սպառնական . . .

Ամեն անկյուն, հրապարակ—ամեն ճամբա  
Դիրք են բռնած հեծյալ զինվոր և միլիցիա.  
Յեկ անոթի դայլերու պես՝ հաղար լբան  
կը ոլքոտան բազմության մեջ հանդիսատես :

Ու մայթերու վլատ մարդու ծով և խուժած  
Խայտաբղետ և փոթորկոտ և զարհուրած.  
Յեկ շնչքերը կրանիտե, զած ու մարմար  
Դուրս են թափած անթիվ գլուխ ստրափահար :

Յեկ կը ծփան վորքան լողունդ, վորքան բողոք՝  
Արյունավառ մի հրդեհի պես անողոք.  
Ու գեռ վարար դետերու պես փրփրած կուգան  
Հեղափոխված շարքերն անվերջ՝ բանվորական :

«Կեցցե՛ք» հանկարծ կը հնչե բիրտ մեկ հրաման—  
Յեկ կը կանդնին— պատրաստ կովի՝ զորք, վոստիկան  
«Առա՞ջ, առա՞ջ» կը դոռա մի յերկաթ բանվոր—  
Յեկ կը շարժին շարքերը կուռ և ահավոր :

Լիրը տերերու հարվածին դեմ՝ հարված կուտան  
Առաջ հորդող շարքերն ամուր բանվորական.  
Յեթե մի տեղ հանկարծ անեն մի փոքր նահանջ—  
Տասը դիրքե փոխորկավաղ կերթան առաջ:

Զուրը կը թափեն սառած ջրի տեղատարափ  
Խորտակելու այս վասահեղ արշալին թափ.  
Ի զուրը զոտքի տակ ջարդելով կին ու բանվոր,  
Գրոհ կուտա Մորդանի մեծ հեծելազոր:

Դեռ կը քալեն... և կը հոսի առատ արյուն  
Յեղ բանվորի և բոսերու այդ չներուն.  
Յերբոր ընկնի մեկը մարած կամ վիրավոր,  
Անոր տեղը բռնել կուգան հաղար բանվոր:

Փա՛ռք մեր կամքին, պողպատակուռ լույս ընկերներ,  
Փա՛ռք ձեր զարկին նոր աշխարհի հույս ընկերներ,  
Կերթա՛ք անվախ... և հաղարներ ձեզ հետ կուգան  
Յեղ անվախճան հեղեղի պես դեռ պիտի դան.

Վորպես հրդեհ անմարելի և բոցավառ  
Դեռ կանդուն և ցուցանակի կարմիր անտառ,  
Զոր կը տանին դեսլի կոխին ու ապագան՝  
Հեղափոխած շարքերն անվերջ— բանվորական:

ՔԱՆՑԱՐԴԱՎ

**ՅԵԿԵՇՐ** ԵՋԻՆ ՔԱՂԱՔՆԵՐԵ, մԵԺՄԱՀԱՐՈՒՄԱՄ,  
 ՀԱԼԱՋԱԼՈՒՆ,  
 ՎՈՐՈՆց ՀԻՆՔԵՐԸ ՀՈյաշեն, յԵՐԼԻՆԱՍԼԱՋ,  
 ԱՄԲԱՐՄԱՎՈՒՆ,  
 ՅԵՐԵԼ աՆՈՆՔ կԵՐՄԵՐ ԵՋԻՆ աշխատանքով  
 սՄՐԼԱԿԱՆ.  
 Ո. ԽԱՌՇՐ աՆՊՈՐԾ ԵՋԻՆ աՆՈՆՔ— վՈՉ հաց և վՈչ  
 բՆԱԼԱՐԱՒ:  
  
 ՅԵՇԵՐ ԵՋԻՆ դՈՐԾԱՐԱՆԻ բանվորները տանջված,  
 նիհար,  
 ՎՈՐՈՆՑ ՔԸԵՆ գԵռ թունավոր հնացներու ծուխը  
 կուգար:  
 ՅԵԿԵՐ ԵՋԻՆ մՈւթ հանքերու դԵՐԼԻՆԵՐԸ՝ զԵմքերը սև,  
 ՎՈՐՈՆՑ կԵՄՆՔԸ՝ դարհուրանքի գիշերն յեղած եր  
 անարե:  
  
 ՅԵԼԵՇՐ ԵՋԻՆ մշակները՝ շողեն այլած լանջ ու  
 ձական,  
 ՎՈՐՈՆՑ ձեռքով անապատներ դարձան հանդեր  
 բԵՐՔՈՎ առաստ.  
 ՎՈՐՈՆՔ տեսեր ԵՋԻՆ իրենց, հնձած բԵՐՔԻ շեղջերու  
 մուտ  
 կը մեռներ մի վողջ դասակարգ կտոր մը սև հացի  
 կարստ:

Յեկե՛ր Եյին ամեն ազգե բանվորները յեղայիւական,  
Կարիքն վորոնք քշեր, բերեր եր Մորդանի Ամերիկան.  
Աև սաթ դույնով աղվոր նեղբեր, չեկ նորդիներ—  
աչքերը՝ ծով,

Ֆել մրահոն լեռնականներ— անդնդախոր սե  
աչքերով:

Յեկե՛ր Եյին արևմուտքեն, անարդ լինչի կեղ  
հարավին,

Յեկեր Եյին սառ հյուսիսեն, Ասոլանոյանի  
քաղաքներեն.

Ամեն կողմէ կուռ չարքերով հասեր Եյին  
մայրաքաղաք  
Ե՞ն կորովի ու գովական, ե՞ն հոյակապ, ոազմիկ  
տղաք:

— Տասներկո՛ւ միլիոն գործադուրկներու  
Բողոքն ենք բերեր ես տեղ զոռալու.  
Մենք ենք ստեղծեր ամեն ինչ վոր կա—  
Ամեն ինչ կտրեր մեր գլխի վրա:

Շիներ ենք աշխարհս, վայելքներն անոր—  
Ու մենք կը մնանք անտուն ու տկլոր.  
Հազար բարիքի, ուտեստի ծով ե.  
Իսկ մեր քաժինը զրկանքն ու սո՛վ ե:

Մենք վոր կերտեր ենք յերկիրն այս հղոր,  
Զեր գլխին պիտի փուլ տանք մենք մի որ.  
Յեկ պիտի կերտենք մենք մեր նո՛ր աշխարհ—  
Հանուր վաստակի, վայելքի համար:

Յեկ շարժեցավ Արշավին հանդարտ՝ մեծ քաղաքի  
վողոցներին  
Միջաղդայնի խռովստ կանչը փոթորկի պես  
վորոտալին.  
Յուցանակները ռազմաշունչ՝ բռունցքի պես տնկվել  
ելին.  
Յեկ աննվաճ այդ քալողներն՝ միլիոններու ուժն  
ունելին:

Դուրս եր հորդած հեղեղն անվերջ՝ բանվորներու  
հանդիսատես,  
Վորոնք Արշավին կողջունելին մի հաղթական բանակի  
պես.  
Յանքիներու այս մեծ վոստան՝ Վաշինգտոնի որեն  
ի վեր՝  
Դեռ չեր լսած մի այսպիսի բանվորական  
մարտահրավեր:

Յեկ վակեցին դոներն ըշտապ՝ կազիտալի,  
Ապիտակ տան.  
Ճար ու ճամբան բոներ ելին ոռումք, գնդացիր ու  
վոստիկան.  
Անդեն արշավին, վոր բռներուն բողոքելու եր հոն  
յեկեր,  
Անոնց աչքին կարմիր սարսափին ու մղձավանջը  
դարձեր եր:

Անդեն Արշավլը կանդ առալ . գունդ գունդ իրենց  
տեղեր դարձան՝  
Ընկերներուն ըսելու վոր Վաշինգտոննեն բան չի  
հուսան ,  
Թե տերերու այս հին կարդերն խելադար' ը են ու  
մարդասպան ,  
Յել թե կա բաց մեկ ճանապարհ — կալի դժվար ,  
կարմիր ճամբան :

Բոխն անոնք «նորեն կուգանք մենք ամբակուս ,  
խիս շարքերով .  
ՄԵծ հատուցման որին վստահ , սպառազեն այդ  
հավատքով .  
Յել խորտակվող սյուներու տակ , տերե՛ր , մենք  
ձե՛ղ սլխոի թաղենք —  
Վորովհետեւ նոր աշխարհի , նոր կարդերու տերը  
մենք ենք» :



Ա Մ Ե Ն Ո Ւ Ր Ե Ք

Անբա՛խտ , չքնաղ մեր Արեւելք ,  
Վորի սարերն  
Վորքա՞ն բարձր են աշտարակված դեպի արև ,  
իր ժողովուրդն  
Ավելի խոր մարճված ե գերության մեջ :  
Յել նույն աղջի հաղա՛ր տերերն ,  
Առ կայսրէրը կապիտալի  
Անոր մարմինն կըհօշոտեն  
Տարուց տարի՛ :

Խեղճ Ավրիկե՞ն ,  
Են սև մորթով , բոսոր վերքով կախարդ յերկիր  
Վորի գույնեն ավելի սև ե բոհությունն  
Տերերուն իր :

Գող Յելրո՛պահ ,  
Վորի բանմլորն  
Անծայրածիր յերկիրներե հավշտակած  
Իր տերերու շահին համար .  
Իսկ ինքն  
Անտուն և հողաղուրկ ե մնացած :

Յել վաշխառու Ամերիկա՞ն ,  
Վոր ամենքին պարտքով կուտա  
Հաց ու դրամ .  
Յել կը թողնե իր բանմլորներն առանց լաթի  
Յեվ անոթի՛ :

Ե՛յ զրկվածներ ես վո՞ղջ յերկրի,  
 Նույն լծի տակ անխռոս տնքող  
 Յեվ նույն տիրոջ կամքին գերի.  
 Վորքա՞ն մնաք դեռ մոլորած  
 Ու իրար դեմ չար թշնամի:  
 Ուշքի յեկեք և միացե՞ք,  
 Յեվ միական և ամեհի՝  
 Հրդեհի տանք հին կարդն ու սարք  
 Յեվ վողջ աշխարհն մեր կը լինի:

Յեվ կը տեսնեմ չորս մեկ ծագեն  
 Զրկվածնելու, մեծ բանակներ,  
 Հաղար լեզվով՝ նույն ուազմերով վորոտալով,  
 Փոթորկին դեմ և թշնամուն  
 Քակելով մեկի վառ դրոշակ  
 Արշալույսի և բոցերու նման կարմի՛ր,  
 Կարշապեն վեհ ու հաղթական:

Հին կարդն ու սարքն ու հին աշխարհ  
 Բոցերու մեջ կանհետանան.  
 Յեվ մեկ ծագեն մինչ մյուս ծագն արևի  
 Մեկ նո՞ր աշխարհ կը շողշողա—  
 Յեղբայրական բանվորներու յերկերը նոր,  
 Համայնական աշխատանքով՝  
 Մի դյուժական վարդի նման դեղափիթթած,  
 Արևի տակ— ծովե ի ծով— մինչ հյուսիսա՛յգ:

## Շ հ Կ Ա Գ Ո

Շիկագոյի մարտական ընկերներուն

**Ք**արյուրամյա ծեր Շիկաղոն, շոայլ տանիդ յեկա յես  
տես.

Փռեր եյիր շլացուցիչ միջազգային ցուցահանդես,  
Վորով աճըդ կը տոնեյիր և արշավը կտալիստալի  
իր կեղեքման այս գիշերին և անկումին արյունավի:

Կանդներ եյիր շքեղ շենքեր հեքիաթներու արարական,  
Վառեր եյիր անթիվ լույսեր աշխարհներու  
կտխարդական,

Թափեր եյիր վորքան այլար, սլորքան առլրանք և  
մեքենա,

Հուլունք ու զարդ բոհեմական, խունկ ու բուրմունք  
ներկ ու հինա:

Ինչ վոր հանած եր գյուղացին իր արյունով և  
քրտինքով,

Ինչ վոր կերտած եր բանվորը հրաշաղործ իր քաջ  
ձեռքով,

Ինչ վոր յերկնած եր մարդկությունն՝ հրաշալի և  
տեսկան

Բերեր եյիր զարդարելու հարյուրամյակն այդ  
տոնական:

Տոնն եր այդ և քո տերերուն և աշխարհի տիրող  
դասին,  
Վորոնք կանչեր եյիր մեկ տեղ վոր լրբորեն ու միասին

իրենց դասի ուժը պարզեն վորպես մի ցույց —  
սպառնալիք  
Զանդվածներու վայրույթի դեմ, վոր յեւած և ալիք,  
ալիք:

Յեկ կսպառնա իր ահավոր հորձանքին տակ թաղել  
անվերջ  
Այն ամենը վոր կա այսոր—ձեր աշխարհը անգութ և  
ողերճ,  
Յեկ կերտել մի կարմիր յերկեր և մի նոր կարդ  
համայնական՝  
Առվետին պես, վոր չեք կանչած ձեր այս տոնին  
սպառնական:

Հարյուր տարի՛ տերերուդ հետ յերկար ճամբառ  
դու կտրան  
Բանվորներու և դյուզացու հողնած և վորը ուսին  
բաղմած,  
Ճահճաներու աղմին փակած մի դար առաջ դյուզ  
անչան,  
Այսոր հոկա Շիկաղոն ես— մեծահարուստ և  
տիրական:

Քո ճանապարհ վարդով ծաղկուն, քո ճանապարհն  
հարյուրամյա.  
Արյան դեսով և վոռողված, ամեն քայլիդ՝ դիմել ու  
մահ.

Ամեն անդամ վոր կանդներ և մի նոր պալատ ու  
նոր պարտեղ  
Հաղար հաղար տուն և քանդվեր— կյանքեր յեղել  
են վողջակեղ:

Յերբ բանվորներն ստեղծել են վայելքը հորդ վորպեա  
ովկիան,

Յերբ խավարը նահանջեր եր լույսին առաջ  
ելեկտրական.

Բանվորական թաղերու մեջ հյուղերու մեջը  
գեղջկական

Յա՛լն ե նստեր ժայռի նման և մուժն իջեր ե  
անխափան:

Բայց դործեր են սպառվելով անոնք անմասն և  
անդադար,

Յել աճեր ևս գուշ փառահեղ և հոյակապ ամբողջ մի  
գար.

Սերունդներ են յեկեր այսուես ու գնացեր որ չի  
տեսած—

Իրենց կյանքով և զրկանքով քո տերերու դարը  
իերտած:

\*\*\*

Շենքելուղ տակ հրաբուխ կա և փոթորիկ՝ ամեն  
փողոց.

Բանվորներ են յելած կոյի կուռ շարքերով,  
սրտերը բոց.

Յա՛լ և շինեն գյուղ ու քաղաք— իրենք միան  
անպատճպար,

Բարիք թափեն ծովի նման— հոգու մնա իրենց  
համար:

Անոնց թվին համբանք չկա—սերունդներ են  
կանդնած կողքի.

Յատ դարերու զրկանքեն են յեկեր կոյի ու բողոքի.

Կառուցման մեջ վորքան հզոր— քանդելու մեջ  
հաղար անդամ  
Ահավոր եւ և վճռական բանակն այդ մեծ,  
պողպատակամ :

Սպանդագործ հին Շիկադո՛ և քաղաքնե՛ր .  
ամբարտավան ,  
Մեղ քամեցիք քեյֆի պահին նոան գինու փարչ  
նման ,  
Յեկ նետեցիք մայթի վրա վորպես անպետք , կոտրած  
անոթ  
Զեր բողերու վոտքի կոխան և կրունկին ձեր  
արյունուր ,

Այսոր յելեր ենք տհարկու վորպես հրդեհ ու  
յերկրաշարժ ,  
Յելեր ենք մենք կործանումի անթիվ հեծյալ և  
ձիավարժ ,  
Յելեր ենք մենք վորպես ցասում , վորպես սարսափ  
— համատարած ,  
Մինչեւ փառքը ձեր տերերուն բնենք մոխիր ու  
այերակ :

Այս ժամանակ պիտի կերտենք մենք հոյակապ  
մի նոր աշխարհ —  
Անքակտելի և գեղեցիկ , արեղական նման պայծառ .  
Ու հույսի պես , նոր Շիկադո՛ , պիտի ծաղկես դու  
լճափին  
Մեր կենցաղի պես ներդաշնակ , աշխույժ նման  
մեր նոր թափին :

ԴԻՏՐՈՅՑՏԻ ՄԱՐՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱ ՈՐՈՒԹՅԱՆ

**Կ**արմիք բարե՛, Դիտոյլիսի հուրը ընկերներ .  
Այն խանդավառ մեծ ժողովի որեն ի վեր  
Մի լուսաշող սիրո նման՝ հուշերուս մեջ  
Կը փայտայեմ խոյանքը ձեր գոռ լուսառեց:

Փառահեղ և քաղաքն այս մեծ... ու բարբարոս...  
Պողպատներ՝ լոյն զետերու պես հորդահոս,  
Ծառուղիներ վույած են վառ յերազի պես՝  
Ծովեն յելած և ծփծփան՝ ծովերու պես:

Հենրի Ֆորդը և ավազակ մի խումբ տերեր  
Վարձքի անարդ ստրկության են ձեղ մղեր.  
Յեղ ձեր թափած ամեն քրտինքն և մաշած թու՝  
Գասնձ և դարձած անոնց ձեռքի մեջ անողոք:

Դուք և շինած այս փողոցներ լայնատարած,  
Այս պալատներն ու դղյակներն դուք եք կերտած,  
Դուք՝ ստեղծած տասնյակ միլիոն ոթո և կառք,  
Ու ձեր տանջված մարմինն առած՝ վոտքով կերթաք:

Անշուք, մասյլ բանվորական թաղերը ձեր,  
Ուր ժահըռա ծուխն մշտակուտակ ամսկ և դարձեր,  
Յեզ աղքատիկ ակումբը ձեր անհրապույլը,  
Ուր կը դարբնեք միասնությունն ձեր ամրակուռ:

Անդորձներու խումբերը գորչ կանցնին կողքես՝  
Փոթորիկեն առաջ իջնող ամպերու պես.  
Յեկ ձեր մեջքին դեռ տերերու շղթան ու բեռ  
Ծայր ե տված բանվորական բուռն յեռ ու զեռ:

Յեկած եյի վոր ձեզ խոսիմ, ի՞մ ընկերներ,  
Բայց դուք ե վոր ունիք այլող, հզոր խոսքեր,  
Խմաստության և զոր կովի ու հաղթության,  
Վոր ձեզ տված ե պայքարի մեծ առորյան:

Յեկ սեղմած եք ամեն բոռւնցքն յերկաթակու...  
Յերբ կը դուաք Միջազգային ուղմերդը կուռ,  
Հացի համար, Փաշիպմի դեմ— կապիտալի  
Պայքարին և այս—վերջին կոփին արյունալի:

Յեղ կը լսենք նույն այդ յերգը բաղմալեզու  
Բոլոր յերկրի հեղափոխած բանվորներու.  
Ու կը տեսնեք միլիոն, միլիոն պողպատ ձեռքեր  
Այնուացած, կայծակնաթափ յելած են վեր:

Յեկ անտոիկ ու անսասան բերդի նման  
Կանդնած ե մեր Հայրենիքը Սովորական.  
Անով հպարտ, պարզած կարմիր անոր դրոշակ՝  
Կերթանք վստահ դեպի կոփին ու հաղթանակ:

Պիտի ասնենք այս քաղաքն ալ ու ծառուղին,  
Անդորձներու խմբերու տեղ՝ Մայիս մեկին՝  
Բանվորներու շարքեր ծիծղուն ու հաղթական  
Պիտի լեցնեն լայն փողոցներն ու պողոտան:

Զեր հին թաղը զառ վարդի պես պիտի ծաղկի .  
Յեվ դրոշին տակ համայնական մեծ սովետի  
Պիտի շինենք անթիվ ոթո և տրակտոր —  
Նոր աշխարհի համար ինդուն, յերկաթավո՞ր :

ԳԵՐՄԱՆԻՈ ԱՆԴԱՐՏԵԼԻ ԿՈՄԿՈՒՍԻՆ

Խ ապա՞ր և արհամվիրք՝ արշալույսեն առաջ...  
Յեղ դուք միլիոն մարտիկ՝ հզոր և աննվաճ՝  
Կերթաք դեպ առավոտ՝ ձեր շարքերը սեղմած.  
Լիբինելսոն հրե ու Ծովան այդ ուղին են հարթած:

Դուք թողեր եք կոմի բաց դաշտը, և վողոց.  
Ու կը կոեք դադանի՝ շարքերդ արի և հոծ  
Հեղեղի ոլես կածի ձեր հոյակատ բանակ.  
Յեղ կը դողան Հիուլերն ու իր Փաշիստ վոհմակ:

Ու թելմանի վզին կախված նացի կացին՝  
Դուք դուսպ, կարմրադրու, շքեղ և առանձին՝  
Կերթաք վեհ ու անչեղ՝ ժամանակի նման,  
Կերթաք արագ ու գոռ՝ նժույդներու նման:

Վո՞չ մահը ձեղ կընկճե, վոչ տերերու հորդան  
Կոծեք բանտը փառքով ու ռազմերդով՝ զնդան:  
Դիմիտրովը կելնե— այդ բոցաշունչ տիտան—  
Ու կը մառե, կոմի, հաղթանակի ճամբան...

Յեղ հակառակ դետի նման հոսող արյան,  
Լկտի ահաբեկման, սովի ու գլխատման՝  
Գրոհի եք յելեր դուք մարտական փառքով.  
Մասսան եք հրդեհած ահեղ կոմի խոսքով:

Զեղ բյուր կալոմիր վողջույն, ձեղ բոցավառ արե.  
Կուղանք... մուրճն ու մանդաղն վառած վորսկես  
արե.  
Կուղանք պողպատ շարքով կուղանք կայծակ թափով  
Փոթորկի պես կուղանք՝ հաղթանակի յերդով:  
Դե՛հ, դըռհ մ'ալ խիզախ—կոխին ե այս վերջին.  
Վերջին դիրքն ենք արդեն մեր տերերու բերդին.  
Հրդեհի պես յեկանք, վայլակի պես յեկանք,  
Մեր տերերը թաշող հրաբխի պես յեկանք:



Ռազմելով և զորաշարժ՝ մեծ դրոհեն առաջ...  
Յեղ մենք բաղմամիլիոն, մենք մարտական և քաջ՝  
Կերթանք դեպ հաղթանակ՝ ծովերու պես հորդած.  
Ու մեր յերթի ճանրան Լենինն ե հրդեհած:

Ֆ Ի Ր Դ Ո Ւ Ս Ի

Անոր ծննդյան հազարամյակի առքիվ

Յ.

Մ Ե Ժ Յ ի ր կ ո ւ ս ի ՛ , Հ ի ն Ի ր ա ն ի Հ ղ ո ր գ ո ւ ս ա ն ՝  
Դ ո ւ Հ ա ն դ ա վ լ ո ր լ ս ո ս ք ի լ ա ր պ ե տ , Հ ա հ ո ւ տ ի ս ա ն ,  
Շ ք ե լ ե ք ո ր յ ե ր գ ը , ա մ ե ն մ ե կ ե լ ե ջ ո ւ ծ ա լ  
Զ մ բ ո ւ խ ո տ ե ո ւ փ ի ր ո ւ դ , ս ո ւ ս ա կ , Հ ա կ ի ն թ ո ւ լ ո ւ :

Մ Ե Ն Ք — յ ե ր գ ի չ ն ե ր ա շ խ ա ր հ ի տ ե ր բ ա ն ե լ ո ր դ ա ս ի  
Ք ե կ ի կ ո ղ ո ւ ն ե ն ք , ա ն մ ա հ յ ե ր գ ի չ , դ ո ւ հ ի ն ֆ ա ր ս ի ,  
Ք ե կ ի կ , վ ո ր ա ն դ ի ն ժ ա ռ ա ն դ թ ո ղ ե ր ե ս մ ե կ Հ ա մ ա ր  
Ք ո ր վ ե ս պ ե ր ո ւ դ ո հ ա ր ա տ ո ւ լ ի ն ո ւ ք ո հ ա ն ձ ա ր :

Յ ե ր կ ա ր դ ա ր ե ր «Շ ա հ ն ա մ ե »-ի դ չ ք ն ա լ Ի ր ա ն  
Փ ո վ ա ծ ե ր մ ի ա կ ա ն ա կ ո ւ ո ւ դ ո ր դ ի ն մ ա ն ,  
Վ ո ր կ ո լ ս ե ց ի ն , ա ն ց ա ն հ ա զ ա ր պ ե տ ո ւ բ ա ն ա կ  
Յ ե կ շ ա հ ե ր դ հ ե ծ ա ծ ն դ ո ւ յ ե կ է ս մ բ ա կ :

Ո ւ ժ ո ղ ո վ ո ւ ր դ ն ա ն ո ր հ ա մ ա լ ո ւ դ յ ո ւ դ ա ց ի  
Դ ա տ ե ց ի ն դ ա ս ն ո ւ մ ն ա ց ի ն ա ռ ա ն ց հ ա ց ի .  
Շ ի ն ե ց ի ն ք յ ո չ կ , բ ե ր դ ո ւ մ դ կ թ պ ա լ ա տ ո ւ բ ա ն ա տ  
Յ ե կ մ ն ա ց ի ն մ ի շ տ ը ն չ ա զ ո ւ ր կ ճ ո ր տ ո ւ պ ա տ ա ն դ :

Բ ո հ ի ն ի ր ա ն ն — յ ե ր կ ի ր ն ա յ դ հ ո ր դ լ ո ւ յ ս ի , հ ո ւ ր ի ,  
Յ ե ր կ ի ր ն ա ն բ ե ր հ ա ն ք ի , վ ո ղ ր ի , ս ո վ ի , ս ո ւ ր ի —

Հորիներ ե իր տերերու պրույցն յերկար,  
Վորմե գու քո յերդն հյուսեցիր՝ մարդարտաշար :

Յել այդ դաժան շահերն անզութ և անպիտան՝  
Քո յերդերու պարտիղին մեջ անմահացան.  
Ու հանճարեղ բայց անբաժին քո ժողովուրդն—  
Իր արյունով, լացախն ե մոր կերտեց անունդ :

Շահերն աղահ, զլորոնց յերդիչն յեղար փառքի,  
Պղինձ տովին քո տաղերուն համար վոսկի.  
Իսկ ժողովուրդն, վորի ծոցից դու ծնկեցիր,—  
Մեծ քերթողի պսակ կապեց քեզ լուսածիր :

Շահեր յեկան, շահեր անցան վորպես փոչի,  
Մինչ քո անուն կաճի հավետ, ե՛յ, Ֆիրդուսի.  
Հանճարը և ժողովուրդն են միայն անմեռ—  
Կր բանդեն հինն ու կստեղծեն նո՞ր աշխարհներ :

Բ

Աշխարհն ամբողջ յելեր ե այժմ աշեղ մարտի—  
Պայքարն ե այն յերկու դասի, յերկու դասի.  
Յեղ իր զենքը վար չը դնե պիտի բանվոր՝  
Քանի վոր կան հոգս ու զրկանք, խեղճ ու հզոր :

Պայքարն այօ գու վիթխարի յե և ահափոր,  
Վոր կը մզենք ամենուրեք և ամեն որ.  
Խաղ ու կատակ են պսոր մոտ «Շահնամե»-իդ  
Ու շահերուղ բոլոր մարտերն սին ու անմիտ :

Հին իրանեն մինչև Հինդը, Զինու ու Ճապոն,  
Մինչև Ռուսը, Միստիկի և Ամազոն—  
Հույն ու արար, չեկ ու խալիչեկ, չեխ ու գերման  
Դաշտ են իջած ահեղ կովի և հատուցման:

Բանակը մեր որոգատակուռ մեր դասակարգ  
Կելնե հզոր և ահավոր վորապես փայլակ.  
Անոր առաջ քաջ Ռուստամիդ թափն ու հասակ  
Շատ ճղճիմ են, վողորմելի և խեղկատակ:

Փոթորկի պես յելած ե նա՝ սոսկավիթիաբ-  
Անպարտելի և աղերիչ և շնարար.  
Յեկ մարտական, վեհ խոյանքովն իր անվրեպ  
Նա կը կերտե դարերու մեծ ավանդավեալ:

¶

Դեպի հյուսիս, «Մայր Ասրաքո»-ի մյուս ափին  
Անձայրածիր, կարմիր հզոն և մեծ սովետին.  
Ուր լանդորներ՝ փշրած ցարի անարդ շղթան՝  
Դաշն են կապած աշխատանքի ու միության:

Թափուր անսնց կալծակն և խոլ, ուժը՝ անհուն.  
Կը փոխեն հունն՝ անդնդախոր խենդ գետերուն.  
Ու վոր մտքի և կենցաղի մութ դիշերն եր—  
Այնտեղ վառեր են բյուրավոր նոր արեներ:

Պայքարն անոնց զեմն և հողին ու տարերքին.  
Յեկ միակուռ, անթեք ուժովն իրենց կամքին  
Կը նախակն բեկնոային սառուցին ու ձյուն,  
Յեկ ժամփնակն ու անջրապետն ու բնություն:

Մեր դասակարգն՝ հեղափոխմած ու մարտական,  
Մեծ դասակարգն՝ ստեղծագործ ու հաղթական՝  
Նոր դարերու հոկան և սեղ և դեկալար  
Յել ժամանակն ու տարերքը վարող հանճար:

Հիմա յեղած են յերգիչներ վորոտակու,  
Հրալեզու և խմաստուն և մեծազոր.  
Յել կը հյուսեն նոր «Շահնամե»-ն մեր պայքարի  
Մեր կռվի պես վիսթորկաշունչ և վիթխարի:

Յել յելած են նոր աշխարհի հաղար դուսան.  
Վառած յերգեր հաղթանակի ու կառուցման,  
Հարվածային դրուհին հետ ու վայելքին՝  
Կռւրծքն են տակած սոցիալիզմի արեգակին:



ՆՈՐ ՀՈՐՈՎԵԼ

Յերեկն անցավ . յերեկն մե՛ր չեր .  
 Հողը վոր կար—հողալիրոջն եր—  
 Հա՛ցը մեր չեր—խողալիրոջն եր .  
 Միտքն ու հողին—տերտրոջն եր .  
 Հո՛ , հորովե՛լ , հողնած յեղներ' .  
 Հո՛ , հորովե՛լ , տանջված յեղներ :

Աերը մեր չեր—մեծատանն եր .  
 Ճրադ վորդին—դերության եր՝  
 Կյանքը մեր չեր—տերության եր—  
 Ա՛յս , են կյանք չեր—դերեղմա՛ն եր :  
 Կը դատեյինք դառ ու դաժան՝  
 Մովն եր դռնեն միշտ անբաժան :

Եսոր վոր կա—եսոր մերն ե  
 Մշակն ե վոր հողի տերն ե .  
 Մենք կը դատենք արտը մեկ ե ,  
 Մեր վար ու ցան , դատը մեկ ե :  
 Հո՛ , հորովե՛լ , տոկուն յեղներ ,  
 Հո՛ , հորովել , հոլան յեղներ :

Ինչ ուժ վոր կա—մեր ռամկին ե .  
 Հարզն ու պատիլն մշակին ե .  
 Մեր կյանքն՝ հանուր աշխարհին ե ,  
 Ես կյանքը քաղցր—թանկադին ե .  
 Հո , ջա՛ն աղքեր , հո , ջա՛ն յեղներ  
 Մե՛նք ենք հիմա աշխարհի տեր . . .

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆ

**Յ**երեկ դնողան ել յերկիրդ ու կյանքե՞մ մի դող  
սարսափիւ.

Վզիրէ չոքած ել սովը նման կատաղած վիշտողիւ.  
Բայց դո՛ւ, աչքերդ հյուսիսիւ կարմիր Աստղին  
անեառան,  
կովի յելար, պարզեցիր պայծառ դրոշը հեռուն:

Այսոր արդեն կը կանդնիս կոթողիւ պես հաղթական.  
Վարդե՛ր ունիս վոտքիդ տակ, ճակատիդ վրա  
տողե՛ր կան.

Եռւրդ և ամուր ձեռքիդ մեջ, դրոշը հույսիդ պես  
ուայծառ,  
Հոգիդ մի բե՛րդ և անկոյիս և քո կորովին անողա՛ռ:

Այնքա՞ն արագ կը դուին վասոքիրէ լոցակին յերիվար,  
Վորքան վարթամ կը ծփան մաղերդ հզոր ուագի վար.  
Այնքան զվարթ արցունք կա սեսաթ աչքեդ  
առկախված  
Վորքան ուայծառ՝ մութին մեջ գիշերն ասազեր  
չէ վասած:

Վողջու՛յն կովիդ վասավոր, վողջույն քո մեծ  
հաղթության,  
Վողջո՛ւյն բանվոր քաջերուդ, մշակներուդ քրտնաշան,  
Վողջո՛ւյն և կուռ միության յերկիրներու հարեան  
Արարտատեն հյուսիսայդ, արեծաղեն-կարսպատյան:

Վողջու՛յն արդար նոր կարգիդ, հզոր ջանքիդ  
շինարար.

Ստեղծագործ մեծ չունչիդ և տեսիլքիդ՝ լուսավառ.

Վողջու՛յն անոնց վոր ընկան դու կովին մեջ  
հաղթական,

Վողջու՛յն անոնց վոր դեռ կան, անոնց վոր նոր պիտի  
դան:

Յեկ դու լույսի և սիրու ջահդ ես վառեր աղտմանդ՝

Յեկ վեր նույնիսկ Մասիսեն, յերկնից դաշտեն  
արդավանդ՝

Հզոր բաղկովիդ կը կախես. և մութ ու վորբ  
աղդերուն.

Բարոր մի կյանք կավետես ու գալն լուսե մեծ  
դարուն.

Բայց թե մի որ թշնամին պղծել գո աշխատանք,

Գա վերջ դնել թոփչքիդ, ճարտար բաղկիդ ել՝  
կապանք,

Նույնիսկ մեռած ռազմիկներդ պիտի յելնեն քո հողեն.

Յեկ այդ անարդ թշնամին մահի վրուի մեջ թաղեն:

○

## Ի Մ Ն ՈՐ ՀԱՅԱՍՏԱՆ

**Յ**ես ինչպե՞ս յերդեմ քո փառքը լուսե,  
Լույս ու լուսաշեն, Բանվոր Հայաստան.  
Ե՞ս յերդիչդ ինչպե՞ս քո դովքը հյուսե,  
Հաղթող ու հղոր մի ն'որ Հայաստան...

Ահեղ սկայքարի, ծով արյան գնով  
Ծնար դո՛ւ բոցեն, մշա՛կ Հայաստան.  
Աշխատավորի գատով քրանինքով՝  
Հասակ քաշեցիր, ջահե՛ւ Հայաստան:

Շարքին ես կանդնած Առվետ Միության  
Զինար հասակովդ, կարմի՛ր Հայաստան.  
Նոր Արևելքի բոցեղեն դռան  
Դո՛ւ անքուն սկահակ, ուամիկ Հայաստան:

Յել քո սաեղծաղործ, շենչող ձեռքին տակ  
Կը ծնին անթիմի շենքեր ու ավան.  
Յել քո ասաղահյուս, ջինջ յերկնքի. տակ  
Շո՛ղ կուտա վորպես լույսի շատրվան:

Են հի՞ն ճահիճներն և դաշտերն անրեր՝  
Զա՞ռ ու ծաղկուն են, սիրո՛ւն Հայաստան.  
Են լիրի բլուրներդ և ամուլ սարեր  
Հանք ու դանձ կուտան բեղո՛ւն Հայաստան:

Յեվ դրոշակ բացած դու մո՛ւրճ ու մանգա՛ղ՝  
կանգնած ես պայծառ զալիքի ճանբին .  
Դո՛ւ համայնական վաստակովդ դրադ՝  
Եքեղ յերազիդ լուսաշող արին :

Փոված ե կարմիր բանակիր ալիք—  
Քո դատի պաշտպան, զինվո՛ր Հայաստան .  
Արշավիր վաեմ դեպի մեծ դալիք,  
Քո կածակ թափին մատա՛ղ, Հայաստան . . .

Յես ինչպես յերգեմ քո վառքը լուսե ,  
Լույս ու լուսակերտ, բանվո՛ր Հայաստան .  
Ես յերդիչդ ինչպես քո դովքը հյուսե ,  
Հաղթող ու հզոր, իմ նո՞ր Հայաստան :

Օ

ԽՈՐԴԻԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆ

Կանգնած վոսկի ծովին մեջ խորհրդային հասկերուն՝  
Գյուղացին նո՞ր հորտովել կը ցնծերդե հովերուն.  
Յեկ տրակտորը վնչալեն՝ ձիերու պես վրհչան՝  
իր նոր շունչը կը փոե դաշտերու մեջ նայիրյան:

Քանի կայան վիթխարի — խորհրդային արեներ—  
Ստեղծադործ մեր կամքով խավարին դեմ ենք վառեր,  
Ու ջրանցքներ՝ լուսահյուս քերթովածին պես վառավոր  
Անջուր դաշտերն ենք հանած իրենց վաղքեն դարավոր:

Մեր վերելքի մեծ թափը յելուղ քանի՛ դործարան  
Ծխնելույղներ են հանած լուսարձակի մը նման.  
Յեկ ինչ չքեզ նվաճում, ինչ հոյակապ հաղթանակ—  
Մեծ վերելքին են լծված մարդն ու տարերք  
Ժամանակի:

Աշխատանք մրցանք և և բուռն արշալ կառուցման,  
Պիրի բաղուկներ կը չարժին վորպես հուղված մի  
ովկյան.

Յեկ կը վաղե վճռական՝ մեր պողպատյա դաստիարե  
Դեպ անառիկ նոր գիրքեր, դեպի հաղթանակ, դեպի  
մառք:

Մի նոր արվեստ, մի նոր կյանք խորհրդային,  
լուսավոր  
Յանկեր և չողափայլ վորպես դարնան պայծառ որ.  
Յեզ այն պիտի գեռ չողա դարե ի դար բոցավառ  
Յերբ վոր կարմիր Ապագան հրդեհեր և վողջ  
աշխարհ . . .

❶

Խ. ՀԱՅԱՍՏԱՆԻ 14-ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻՆ

**Տ**ասնեւչորս—տարի՛ տասնեւչորս դարի  
թուի՛ չքն ևս տուեր, լուսաթե թռչո՛ւն.  
Յերկաթե որովա, կառուցման դարի  
լույսերն ևս վասեր, հրեղեն թռչո՛ւն:

Շուրջը յեռանոէ և, կամք և յիս ու զեռ  
Մի՛ նոր կենցաղի՛ և հոկա ջանքի.  
Դեմդէ և արշալույս ու արմեն անուեռ,  
Սիրո և յերդի ցնծուն դալիքի:

Ո՞վ կրնա չափել կատարն վիթխարի  
Սնհաս բարձունքիդ, բոցեղեն թռչո՛ւն.  
Յեվ յերի բոլորի հարյուր մեկ տարի  
Է՞նչ պիտի դնեն խոյանքիդ անուն:

Ճեռավոր յերդիչդ թե բախտն ունենար  
Կշուելու թափը վերելքիդ անհուն,  
Պիտի սաեղծեր նո՞ր թիվ ու տոմար  
Յեվ դառնար հանձար, դառնար իմաստուն:

Տասնեւչորս տարի՛ — տասնեւչորս դարի  
Միջոցն ևս կտրեր բոցեղեն թևով.  
Ճամբաշխարհային լենինյան դարի  
Ծիրն ևս վողողեր յերդիդ արեով:



## ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԻՆ

Աստղերն ամեն՝ յերկնքեն վա՛ր են թափեր—  
Մին՝ տառն յեղած՝ ձեր ճամբին վրա կը վասին։  
Գույներն ամբողջ՝ բռնկեր են ևս գիշեր—  
Ու պատերեն քանց ծխածան կը փայլին։

Ծաղկոցները գտւան ու լճակն են լքեր։  
Ու փողոցին մեջ փունջներով կը փթթին։  
Խորհրդային տարեգա՞րձն և այս գիշեր—  
Ու դռներեն վարդե՞ր, վարդե՞ր կը թափին։

Ու փառքի պես հպարտ կանցնիք, ո՛վ քաջեր  
Աչքերուղ՝ բոց, ձեռքերուղ՝ մեջ շանթասուր։  
Դուք վոր մահի սարսալին յերբեք չեք դիտցեր  
Յերջանկության ունիք չեկնումն ու սարսուռ։

Յել փոթորիկն ե թափը ձեր դնացքին՝  
Յերբ ձիերը՝ սեղ ու փրփրած կը վրնջեն։  
Անոնց բաշերն թաթա՞ռն լինեն մոլեղին։  
Կանցնի վորոտն անոնց դոսութի ընդմեջեն։

Յել կը սրափան փառքեն կողերն քաջածին  
Ձեզմով հպարտ ձեր յերջանիկ մայրերուն։  
Ու վարդ կույսերն, վոր մնացին ձեր դարձին,  
Այժմ կը ժպափին նման ծիծղուն արեւուն։

Ու ծերելը ձեզ որհնելով հայրարար  
Այսոր դաժան տարիքն իրենց կանգծեն  
Վոր չի թողեց ձեր շարքին մեջ վեհափոռ  
կանգնել վրենց տանջված հասակն հոյաշեն :

Կայծակն եւ պայտ ձեր հրավաղ ձիերուն,  
Աստղերն ամեն՝ յերկինքն վա'ր են թափեր,  
Դուք կը քալեց տարափին տակ վարդերուն  
Խորհրդային տարեղարձի այս գիշեր . . .



Ն ո ր Կ ո վ կ ա ս

Բյուր վողջույն քեզ, նոր կովկաս.  
Աղջիկներուդ ու աչքերում չողացող  
Ժողովին նման դյութիչ ես դու, ջան կովկաս.  
Զրվեժներեզ հասող գլուխն ջրերուդ  
Նման աղաս և հարազատ ես, կովկաս:

Քաղմալեզու ժողովուրդներդ հարեան,  
Քանզած կարգերն հնավանդ՝  
Դաշն են կազած յեղբայրական միության:

Հաղար, հաղար քաղաքներուդ վերեւ այժմ  
Կը ծածանի հաղորդ մենկ հատ դրոշակ —  
Աշխատանքի և միության մեկ նշան:

Հոգուն մեջ բոց՝ մտքում վասած նոր ողատկեր  
Ժողովուրդը քո ճարտար  
Այրած հնի ստրկացնող կազանքներ,  
Ցեղ կստեղծե նոր աղորդա, նոր աշխարհ:

Բյուր վողջույն քեզ, նոր կովկաս...

Ն Ա Ր Ռ Ո Ւ Խ Ա Ս Տ Ա Ն

Ելքուղեն դե՞ն, դեպի հյուսիս,  
Յղբայրության գաղափարի չափ անողարփակ,  
Կը տարածվի Ռուսական դաշտն ընդարձակ:

Հանդարտ սպառեց մշուշներու տակ արեսու,  
Անոր մեկ ճող  
Հյուսիսայրի միստիկ ցոլքովն և լուսաղարդ,  
Յեվ մեկ ծայրն և արեածագ և առավոս:

Ես մեծ յերկրի տերերը հին  
Մեր կովկասի տերերն եյին չար ու գաժան,  
Վորոնց համար ստրկության մի դաշտ եր այն —  
Յեզ Ռուսաստան:

Այսոր, սակայն, ըսուս բանվոր,  
Հին տերերե, հին կարգերե հրաժարած,  
Վաստակի շեն յերպը շրթին  
Յեղբայրական ձեռք և մեկնած նոր կովկասին —  
Աշխատանքի մեջ՝ մասընկեր և մեծ կովի մեջ՝  
զինակից:

Աշխատավոր և դժուզացի տանջվող մարդուն —  
Ուր վոր լինի,  
Հույսի յերկիրն ես ոլանծալի,  
Կարմիր անհաղթ, Ռուսաստան,  
Վողջույն քեզի, — հաղա՛ր վողջույն . . .

Մ Յ Ա Ս Ն Ի Կ Յ Ա Ն

**Ե**գ ահավոր բարաձունքեն,  
Մի հրեղեն արծվի նման դու անհաս,  
Վեր Մասիսեն, Ելբռուզեն  
Կը դիտելիր ազատ, չքնաղ մեր կովկաս,  
Վոր վառ ինչպես մի յերադ,  
Ծովի ի ծով կը բողբոնջի քաղցրորեն:

Դու կամեցար մեկ նայվածքով անպատճեմ  
Վողջունել եդ մշակներու հայրենիք,  
Եղ բաղմացեղ բանվորներու պետություն,  
Ինչպես սիրու կախարդական մի ժպիտ,  
Ինչպես անձառ մի յերադ—  
Ես անհման յեղբայրական մեր կովկաս...

Եղ տեսիլքեն դու խանդավառ  
Հրդեհ յեղար, անհետաշար —  
Բայց չի մեռար,  
Դարձար յերադ ու գաղափար:

Յեվ հարազատ քո ընկերներ  
Եղ դաշտակար վորապես արև հրաշտիառ  
Պիտի վառեն դարե ի դար:

Ոմեն սերունդ նոր սերունդին պիտի հանձնե  
հաջորդաբար

Քան մողական մի ջա՞հ ողայծառ .  
Մինչեւ Հասնի կարմիր դալիք ,  
Մինչեւ Հին կարգ ու Հին աշխարհ  
Անցնին վորպես մեր ու խավար . . .

Պ Յ Ա Տ Ի Լ Ե Տ Կ Ա

ՀՆԳԱՄՅԱ ՊԼԱՆ

Դու գծեցիր քու պլանն հանդուղն՝ հանուր վաստակի .  
Հոչչակեցիր զորակոչ հարվածային հնդյակի .  
Ու վաղեց կաղմ , ջլառակինդ ամեն բանվոր , գյուղացի  
Տնտեսական ճակատը—յերջանկության և հացի :

Փոթորկավաղ քո տեմպին , քո կուռ կամքին՝ բյուր  
վողջույն ,  
Յեկ հոյակաղ վերելքիդ , Խորհրդային Միություն .  
Հարյուր աղջե մխակամ քո գովական քաջերուն ,  
Բահիսոր , ոահնջրար , մտավոր ոազմիկներուէ՝ բոց  
վողջույն :

Պոեմն եր այն դյութական , վոր գծեցիր բոցավառ՝  
Քաղաքներու , ըստեալի և լեռներու արեվառ ,  
Սիբիրի սառ դաշտերու , սահանքներու և կամքի ,  
Մտեղծադործ հանճարի , հաղթանակի ու փառքի :

Մի նո՞ր աշխարհ , մի նո՞ր Կյանք համայնավար ,  
ներդաշնակ  
Կը կերտես դու փառահեղ մի քերթվածի հանդունակ—  
Տիտան ուժի կայաններ , անթիվ հիմնարկ ,  
գործարա՞ն ,  
Վառմի հանդեր թերքառատ՝ փոված շարան առ  
շաբան :

Յեկ արծովիր պես թե՛ կառնես դու նոր որվադ վառ  
ծեգին

Յուրջը փովով քառսեն և սարսավիեն հին կարգին .

Յեկ հաղար նո՞ր արեներ կուգան վառել քո ճամբան  
Մինչեւ ամբողջ աշխարհին բերես կարմիր ապագան :

Իրենց վերջին սլայքարեն հին կարգին դեմ վողեվար  
Բոլոր յերկրի բանվորներն քեզ կը դառնան  
խանդավառ .

Ու կը դժմեն կուռ շարքով և կորովով աննկուն՝

Դեղի կոխին ե՞ն վերջին և վճռական հաղթություն :

Իսկ դո՞ւ պիտի բոլորես հաղար , հաղար հնդամյակ  
Մի՛շտ ավելի լուսաշող , մի՛շտ ավելի դոհունակ .

Անդառակարդ աշխարհի փորձ զեկավա՞ր , շարունակ  
Պիտի պահծառ լուսաշող հաղթանակե հաղթանակ :



## ԶԵՐՔԴ ԴԱԼԱՐ ՄՆԱ

Վարպետ Փանոս Թերլինեզյանին

Չը կամեցար դու վատնել գույները քո բոցեղեն՝  
Այս դուեհիկ տերերու փառքն ու քմայքն ներկելու,  
Յեվ անոնց գեր կիներու շրթերն՝ այրած սնգույրեն  
Աւ մոմեղեն դալկությունն անոնց անդորձ մատներու:

Դու չուղեցիր նկարել գետ ու ծառ ու տեսարան,  
Վոր կըմնան բանվորի համար յերազ հեռավոր,  
Յեվ դրդիոներ սեռային ու պատկերներ խոլական,  
Վոր իր պատեն կը կախե դինով ամեն մեծավոր:

Հառվաքեցիր քո վրձին, յերանդապնակ ու յեռանդ  
Ու գնացիր առլրելու խորհրդային առորյան,  
Համայնական դաշտերու վոսկի ծովերն արդայանդ,  
Յեվ անապատն, վոր հիմա այգի յէ ու անդաստան:

Յեվ ուռճացավ տաղանդդ, վորպես չքեղ նունու Փար  
Նոր կենցաղի փառահեղ արեկ տակ գորովոտ.  
Յերիտասարդ տարիներդ քեղ ևն դարձեր սրավար,  
Յեվ ուռերուդ ծաղկեր ե կարմիր դարի առավոտ:

Փոթորկարչավ դրոհը դու կը վառես մեր յերկրի  
Կտավիդ վրա դյութական՝ կայծակնաթե գույներով,  
Յեվ հաղթական վերելքը՝ դեպ ապագան վիթխարի՝  
Կարձանագես գույներուդ արեակեղ թևերով:

Ահա հղոր ջուրակես կամ մի հսկա դոբծարան  
Մասիսի դեմն է հաներ իր ահարկու ծխնելույդ .  
Կամ մոխիրեն բարձրացող խորհրդացին Յերեան՝  
Վոտքին՝ պարտեղ, ծառուղի և վարդ և ծափ և  
վողիույդ :

Յեղ կամ ձուրվող մեսաղի գետերը լույծ, հրեղեն,  
Վոր վրձինիդ թովքին տակ պիտի հոսի շարունակ .  
Ու մկաններ պողպատյա՝ քաղաքներեն գյուղերեն  
Հեղեղեր են կերտելու դարերու մեծ հաղթանակ :

Լավ բարեկամ ու վարպետ, ձեսքը դարար թող մնա  
Խորհրդացին դաշտերու դարնան զմբուխս ցանքին  
պես .  
Թող կորովը քո աճի և տաղանդդ՝ հասուննա  
Համայնտկան արտերու վոսկեծվուն հունձքին պես :

Վերջ

ԲՈՎԱՆԴՈԿՈՒԹՅՈՒՆ



Կ. Սիսակը և իր առեղիան	7
Կարավանի յետելն	25
Լեյլա և Մեջուն	67
Հեյրան ու Զեյրան	109
Ծամբելը	116
Ցեղթը	120
Բայց դու չես գար	121
Կը հիշես	123
Ցերը վերադառնաս	125
Վերջին գեկոնեմբեր	127
Անվերապարձ	129
Վերապարձ	131
Նազանք	132
Սիրերդ	134
Անոեր դիշեր	136
Փառքամ աղջիկ	137
Վարդն լոնչ անեմ	138
Արտ կը ըրեմ	139
Քարվան յեկավ	140
Մշակի սերը	141
Հըստեշը	143
Մայիս ժեկ	144
Եխազարամ	145

Փակված	դորձաբան	147
Ցույցը		150
Քաղցարշալ		152
Ամենուրեք		156
Շիկագու		158
Դիտրոյիտի	մարտական աշխատավորության	162
Գերմանիո	անպարտելի կոմկուսին	165
Ֆիբոնաչի		167
Նոր հորովել		171
Ասրհրդային	Հայաստան	172
Իմ նոր Հայաստան		174
Ասրհրդային	Հայաստան	176
Ա.	Հայաստանի 14-րդ տարեդարձին	178
Կարմիր բանակին		179
Նոր Կովկաս		181
Նոր Անուսաստան		182
Մյանիկյան		185
Պյատիկետկա		187
Զեռքդ	դաւար մնա	





A I  
6043